



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	2
ՍՓԻՒՌՔ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՍԱՀՄԱՆԷ ՈՒ ՎԵՐԱՐԺԵՒՈՐԷ ԻՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	5
Ի ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԴԻՐԻ, ՄԻՆՉԵՒ 2025-Ի ՄԱՅԻՍԻ 21-Ը, ԱՐՑԱԽԻ ԱԺ-Ն ՉԻ ԿԱՐՈՂ ԼՈՒԾԱՐՈՒԵԼ	5
ԿԻՊՐԱՀԱՅ	9
ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ 2023-2024 ԿՐԹԱՇՐՁԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ	9
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	13
ԱՂԱԻԱՂՈՒԱԾ, ԱՂՃԱՏՈՒԱԾ ՈՒ ԳՈՒԷՀԿԱՅՈՒԱԾ	13
ԲԱԶՄԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ	13
ՄՏՈՐՈՒՄ ԽԹԱՆՈՂ ՊՍՄԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ	16
ՌԵՃԵՊ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ.....	21
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ՝ ՏԵՄԻԼՔ, ԿԱՄՔ ԵՒ ՅՈՅՍ» ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ	24
ԵՐԵՒԱՆ-ՊՐԻԻՔՍԷԼ ԳՆԱՑՔԸ.....	26
ՏԵՍԱԿԷՏ	30
ՆԻԿՈԼԻՉՄ + ԲԱԳՐԱՏԻՉՄ ՀԱԻԱՍՏՊՐԷ՝	30
ՀԱՅՐԵՆԻՉՄԻ.....	30
ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ, ԹԷ՞՞	33
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ.....	35
ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ	37
ԻՆՉ ԵՒ ԻՆՉՊԷ՞Ս	39
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	41
ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ.....	41
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՔԱՐԷ ՎԿԱՆԵՐԸ	46
ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱԶՔԱՐԵՐ	46
ԿԸ ՔԱԼԵՄ	48
ՊՐԻՄՄԱԿԷՍ	50
ԳԻՐՔԻ ԱԿՈՒՄԲՆԵՐ	50
ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ ՀԱՅ ՄԱՐԴ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ.....	53
ԱՎՆԹԱՐԹՆԵՐ	56

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՓԻՒՌԸ ՊԷՏՔ Է ՎԵՐԱՍԱՀՄԱՆԷ ՈՒ ՎԵՐԱՐԺԵՒՈՐԷ ԻՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ



2020 թուականի 44-օրեայ պատերազմը եւ մեր կրած ծանր պարտութիւնը ահաւոր եւ զգաստացնող անկիւնադարձ մը դարձան համայն հայութեան համար ալ: Անկիւնադարձ՝ որ պէտք է առիթ դառնայ վերլուծական ինքնաքննադատութեան: Այդ պարտութիւնը չի վերաբերիր միայն Հայաստանին ու Արցախին, այլեւ Սփիւռքին հաւասարապէս: Սփիւռքը եւս պարտուած ու ձախողած զգաց՝ Հայաստանի հզօրացման եւ Արցախի իրաւունքներու ի նպաստ կատարած իր 30-ամեայ նուիրաբերման ու պայքարին մէջ: Չափազանցութիւն պիտի չըլլար ըսել թէ իր հաւատքի շէնքը յանկարծօրէն փուլ եկաւ: «Տարածաշրջանի ամէնէն մարտունակ բանակ» ունեցած ըլլալու առասպելը տապալեցաւ, յատկապէս երբ ջուրի երես ելաւ Հայաստանի եւ Արցախի քրեաօլիգարխիկ համակարգի վերնախաւին գործած ահռելի եւ անյագուրդ թալանը յանուն իրենց գրպաններու պարարտացման եւ ի գին մեր երկրի մարտունակութեան տկարացման:

Այդ նոյն երեսնամեայ ժամանակաշրջանին, բացայայտ իրողութիւն է որ Սփիւռքը տակաւ մաշեցաւ, կորսնցնելով իր ուժականութիւնը, իր կառոյցներու վերանորոգման, արդիականացման նպատակաւորութիւնը, կամ նոր կառոյցներ ստեղծելու կամքն ու նպատակաւազանութիւնը: Հետեւեալ կէտերը արժանի են մեր ուշադրութեան.-

1-Հայաստանի Հանրապետութեան վերանկախացման առաջին իսկ օրերէն, Սփիւռքը՝ իր բոլոր քաղաքական-հասարակական կառոյցներով, ինչպիսիք են երեք ասանդական կուսակցութիւնները, ՀԲԸՄ-ը, բարեսիրական այլ կազմակերպութիւններն ու հիմնադրամները, իրենց հայեացքը ուղղեցին հայրենիք անօրինակ հեւքով մը, նպատակ ունենալով օգնել Հայաստանին, որդեգրելով տեսակ մը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՄԷՆ ԲԱՆԷ ԱՌԱՋ» սկզբունքը: Անոնք բացին իրենց մասնաճիւղերը Երեւանի մէջ, առանց լրջօրէն քննարկելու թէ ի՞նչ էր իրենց նպատակակէտը, այդ ուղղութեամբ տարուելիք գործունէութիւնը եւ յարակից հարցեր: Քաղաքական կամ կուսակցական կառոյցները զարմանալի շուտիկութեամբ ներխուժեցին Հայաստան, որպէսզի կարենան գրաւել քաղաքական ասպարէզը, դարձան հայաստանակեդրոն, ակնկալելով դառնալ Հայաստանի ռազմավարական գործընկերը, միաժամանակ տկարացնելով սփիւռքի կառոյցները քայլ առ քայլ: Այսօր սփիւռքահայ մամուլի, դպրոցի, քաղաքական-բարեսիրական



կազմակերպութիւններու, գրահրատարակչութեան եւ յարակից ոլորտներու թուլացումն ու աղքատացումը արդիւնքն է նաեւ այս քաղաքականութեան, որ դժբախտաբար երբեք չդարձաւ հանրային լայն քննարկումի առարկայ: Սփիւռքը բազմամիլիոն տոլարի ներդրումներով կրցաւ օգնութեան հասնիլ Հայաստանի եւ Արցախի կարեւոր կարիքներուն, առանց նոյնիսկ հաշուետւութիւն պահանջելու, բայց էապէս չկրցաւ անոնց օգնել իր գիտելիքներով, իր ամբարած քաղաքական-դիւանագիտական-տնտեսական-ռազմարդիւնաբերական մասնագիտական պաշարով ու փորձառութեամբ եւ մնաց ժողովրդական լեզուով «կթան կով»ի կարգավիճակին մէջ:

2-Սփիւռքը մոռացութեան տուաւ իր ինքնուրոյն արեւմտահայ մշակոյթը, զայն զարգացնելու հնարաւորութիւնները մեծաւ մասամբ, միշտ հաւատալով որ՝ առանց հայրենիքի, չկայ մշակոյթ: Ո՛չ որ կրնայ դրժել այն կարեւոր ճշմարտութիւնը որ հայրենիքը, հայրենի հողը, միշտ ալ ոգեշնչման աղբիւր է եղած հայ մշակոյթին համար, նոյնիսկ երբ անիկա հեռաւոր յիշողութիւն էր միայն: Ան է որ աւին ու աւիշ կու տայ ամէն ստեղծագործութեան: Առանց ապրող ու շնչող հայրենիքի, հայեցի ինքնութիւնն ու մշակոյթը չեն կրնար երկար գոյատեւել: Սա լափալիսեան ճշմարտութիւն է: Բայց մեր պատմութիւնը կը յուշէ որ մենք ունեցած ենք հայրենիքէն դուրս հայ մշակոյթի, պատմութեան ոլորտէն ներս վիթխարի աշխատանք կատարած, հսկայական գործունէութիւն ծաւալած Միախարեաններու Միաբանութիւնը՝ Ս. Ղազար կղզիին վրայ եւ այլուր: Ունեցած ենք Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ հայատառ առաջին մամուլը՝ Ազդարարը: Ունեցած ենք տպագիր առաջին հայալեզու գիրքը՝ Ուրբաթագիրքը Վենետիկի մէջ, 1512 թուականին, Յակոբ Մեղապարտի կողմէ տպագրուած: **Ունեցած ենք Երուսաղէմի Ժառանգաւորացը, հիմնուած 1843-ին, որ իր առատ հունձքով հոգեւոր հովիւներ և առաջնորդներ պատրաստեր է պատմական Հայաստանի երբեմնի շէն թեմերուն և ծուխերուն համար:** Դեռ կարելի է խօսիլ հայկական կուսակցութեանց մասին, որոնք հիմնուեր են Հայաստանէն հեռու քաղաքներու մէջ: Պոլիսը եւ Թիֆլիսը եղեր են նոյնպէս հայկական մշակոյթի, կրթութեան, գիր-գրականութեան եւ արուեստի կեդրոններ, ինչպէս Հալէպը, Պէյրութը...եւ շարքը կարելի է երկարել ու երկարել: Ներկայիս, անհրաժեշտաբար, պէտք է զարկ տալ սփիւռքահայ, աւելի ճիշդ արեւմտահայ մշակոյթի սատարման, տարածման, քաջալերման, մանաւանդ թուայնացած մեր աշխարհին մէջ, որ կ'ընձեռէ ամէնէն լայն հնարաւորութիւններ: Սա միայն կրնայ հարստացնել ու ճոխացնել հայ մշակոյթը եւ անոր միջոցաւ նոր ուժականութիւն տալ նաեւ Սփիւռքին:

3- Սփիւռքը՝ եթէ պիտի գոյատեւէ, պարտի վերասահմանել ու վերանորոգել իր ինքնութեան հիմնասիւները: Ան պարտի գոյութիւն ունեցող իր հնամաշ կառոյցները նոր ներդրումներով վերաթարմացնել կամ այժմեականացնել, զանոնք գրաւիչ դարձնելու երիտասարդ սերունդին համար մասնաւորաբար, կամ ստեղծել նորերը: Անհրաժեշտ է այդ կառոյցներուն մէջ ներգրաւել պայծառամիտ եւ յանդուգն երիտասարդներ, որոնք կը կարողանան հարցեր ձեւակերպել, մտածել, դատել, բանավիճիլ, վերլուծելով քննարկել եւ ծրագիրներ մշակել, առանց կուսակցական կամ հատուածական նկատառումներու եւ բարդոյթներու: ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՈԳԻՈՎ: Անոնց պիտի կարենալ համոզել որ արեւմտահայ, այժմ սփիւռքահայ մշակոյթը միայն անցեալի ժառանգութիւն չէ, այլ անիկա



կը պատկանի նաեւ մեր ժամանակներուն, մեր ներկային: Հայեցի ինքնութեան ամրոցն ու գլխաւոր հիմնասիւնը՝ ՀԱՅ ԴՊՐՈՅՑ յատկապէս պիտի վերարժեւորել: Արդարեւ, Սփիւռքը կը հաշուէ քանի միլիոն հայ, աւելին քան ՀՀ-ը եւ անոր թուլացումն ու քայլ առ քայլ մաշումը կը տկարացնէ նաեւ ՀՀ-ի զարգացման կարելիութիւնները: Նման ուժեղացած, նորացուած եւ գործօն Սփիւռքը միայն կրնայ օգնել Հայաստանին եւ անշուշտ մնալ ՀԱՅ: Հոս կարելի չէ չանդրադառնալ այն կարեւոր փաստին, որ Սփիւռքը իր ազգային ուժականութիւնը կորսնցուց նաեւ զանգուածային ներգաղթներով Միջին Արեւելքի հայահոծ եւ կազմակերպուած երկիրներէն դէպի նոր ցամաքամասեր, ուր չկան կազմակերպուած համայնքի մը յատուկ ենթակառուցուածք ու հայեցի նկարագիր: Ասոր առնչութիւնով, համաշխարհայնացման խորշակը տակաւ կը սպառնայ ջնջել ազգային դիմագիծ ու ինքնութիւն, լեզու եւ պատմութիւն:

4-Սփիւռքը իր քաղաքական պայքարը կամ գործունէութիւնը պարտի մղել Սփիւռքի մէջ եւ ոչ թէ ՀՀ-էն ներս, մրցակցութեան ելլելով այնտեղ գործող կուսակցութեանց հետ, յանուն աթոռի, դիրքի ու փառքի: Ա՛լ շատոնց ժամանակն է նորովի հարցադրելու թէ մեր Պահանջատիրութիւնը այսուհետեւ ի՞նչ յստակ բանաձեւուած նպատակներ պարտի հետապնդել: Յեղասպանութեան բարոյական ճանաչում, իրաւակա՞ն ճանաչում, քաղաքական պայքա՞ր, դիւանագիտակա՞ն պայքար, հողային հատուցմա՞ն խնդիր, թէ այլ: Մեր պահանջը ի՞նչ է Անգարայէն: Յստակ ու մեկին պատասխան ունի՞նք: Ի վերջոյ, 44-օրեայ պատերազմը ցոյց տուաւ որ ցարդ կայացած Յեղասպանութեան ճանաչումները տարբեր երկիրներու եւ միջազգային կառոյցներու կողմէ՝ ՉԱՐԳԻԼԵՅԻՆ երբեք որ Թուրքիան իր ամենէն զօրաւոր ռազմական աջակցութիւնը ցուցաբերէր Ատրպէյճանին եւ նոր բռնութիւններ գործադրէր ի տես աշխարհին: Պարտինք նաեւ յստակացնել որ Պահանջատիրութիւնը որո՞ն պատասխանատւութիւնն է վերջապէս: Հայաստանի Հանրապետութեա՞ն, թէ՞ Սփիւռքին: Ընդհանուր գործի յստակ բաժանում պէտք է ունենալ: Պիտի կարենանք ի վերջոյ պատասխանը գտնել հետեւեալ հարցադրումին՝ «Ի՞նչ է ՊԱՀԱՆՁՈՒԱԾԸ ԵՒ Ո՞Վ Է ՊԱՀԱՆՁԱՏԵՐԸ»: Ա՛լ ուշանալու տեղ չունինք:

5-Հայաստանին գումարներ ուղարկելու փոխարէն, պէտք է դառնալ մեր պետականութեան զարգացման եւ հզօրացման ընդհանուր ծրագիրներու իսկական գործընկեր: Պետականաշինութեան գործնապէս սատարած կ'ըլլայ Սփիւռքը, եթէ նպաստէ անոր տարբեր բնագաւառներու կազմակերպչական, արդիականացման եւ հզօրացման գործընթացներուն, արհեստագիտական մակարդակի բարձրացման, նոր գիտելիքներու ձեռքբերման, մասնաւորաբար յարափոփոխ ժամանակներու նորանոր մարտահրաւերներու դէմ յանդիման: Սփիւռքահայութեան կիզակէտը պէտք է դառնայ հայոց պետականութեան ամրացման, ուժեղացման սատար կանգնիլը նորանոր միջոցներով: Քանզի չմոռնանք այն անհերքելի ճշմարտութիւնը, որ սփիւռքի հայ մնալուն հզօրագոյն եւ վճռորոշ երաշխիքը ՀԱՅՈՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ կայացումն ու ուժեղացումն է:

6-Տխուր է հաստատել որ ներկայիս ՀՀ պետութիւն-սփիւռքային կառոյցներ երկխօսութիւնը կը գտնուի իր ամենացած մակարդակին վրայ: Միայն լիարժէք երկխօսութիւնը կրնայ ճամբայ հարթել ճշմարիտ իրարհասկացողութեան, համագործակցութեան, ծրագիրներու մշակման, յանուն մեր պետականութեան հզօրացման եւ Սփիւռքի հայապահպանումին:



Սփիւռքը Հայաստանով է զօրաւոր եւ՝ փոխադարձաբար: Այս ուղղութեամբ այլ յոյժ կարելոր է ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ եւ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ ձեւաւորել:

7-Իսկ ի՞նչ ըսել մեր ներազգային պառակտումներու մասին, որոնք նոր թափ առին 44-օրեայ պատերազմէն ետք յատկապէս, երբ քաւութեան նոխազ դարձած ՀՀ վարչապետին թեր եւ դէմ ճակատներ գոյացան նոյնիսկ սփիւռքի մէջ, ներազգային անհանդուրժողականութիւնն ու գգուրտոցը հասցնելով իր գազաթնակէտին, նոր ջուր լեցնելով թշնամիի ջրաղացին: Անհանդուրժողութիւն՝ որ հասաւ ամէնէն լկտի հայիոյախօսութեան եւ ցեխարձակումներու մակարդակին: Փակագիծ մը բանալով, նշենք որ ընդդիմադիր ըլլալ ներկայ իշխանութեանց վարած քաղաքականութեան չի նշանակեր երբեք հայիոյախօսել եւ զազրախօսել: Հայապահպանման, հայեցի մեր ինքնութեան վերարժեւորման, ազգային մեր պետականութեան անվտանգութեան եւ հզօրացման շուրջ համախմբուելով միայն մենք կրնանք յարատեւել որպէս ԱԶԳ ու ԵՐԿԻՐ: Սա անառարկելի ճշմարտութիւն է:

Որպէս եզրակացութիւն, իմ խորին համոզումս է որ 44-օրեայ պատերազմը սթափութեան կոչ է Հայաստանի եւ Սփիւռքի համար: Մենք պէտք է ՆՈՐՈՎԻ մտածենք, վերլուծական ինքնաքննադատութեան ենթարկենք մեր հաւաքական կեանքը ի Հայաստան եւ ի Սփիւռս, վերասահմանենք մեր դերերը, Հայաստան-Սփիւռք մեր փոխ-յարաբերութիւնները, զանոնք դարձնելով իրապէս ԱՐԴԻԻՆԱԻԷՏ: Բայց առաջին հերթին, մենք պէտք է ԲԱՐՈՅԱՊԷՍ եւ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՎ ԻՆՔՆԱՄԱՔՐՈՒԻՆՔ ազգովին եւ նոր եռանդով ու տքնաջան աշխատանքով, նոր տեսլականով վերանորոգենք ՀԱՅԱՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀԱՅԵՑԻ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ, ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹԵԱՆ եւ ՊԵՏԱԿԱՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ մեր դժուարին այլեւ պատուաբեր ուղին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

Ի ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԴԻՐԻ, ՄԻՆՉԵՒ 2025-Ի ՄԱՅԻՍԻ 21-Ը, ԱՐՑԱԽԻ ԱԺ-Ն ՉԻ ԿԱՐՈՂ ԼՈՒԾԱՐՈՒԵԼ

11 Նոյեմբեր, 2023
Հեղինակ՝ Սիրանոյշ Պապեան



-Հայաստանն ունի դատարան, եթէ մարդիկ Արցախում թալանել են պետական պիտճէն, ամօթ նրանց, կոպեկ առ կոպեկ պէտք է վերադարձնեն, այլապէս վատ է լինելու այդ մարդկանց ճակատագիրը:

-Մինչև 2025-ի մայիսի 21-ը Արցախի Հանրապետութեան ԱԺ-ն չի կարող լուծարուել

-Արցախի Հանրապետութեան ԱԺ պատգամաւորները երկու ճանապարհ ունեն



«Առաջին լրատուական»-ի գրուցակիցն է Արցախի ԱԺ նախկին նախագահ Արթուր Թովմասեանը

-Պարոն Թովմասեան, Ձեր հրաժարականից և Արցախի կորստից յետոյ առաջին անգամ խախտում էք լռութիւնը:

-Գիտեք, որ առողջական խնդիրներ կային, հիմա լուծուել են խնդիրները, և, ինչպէս խոստացել էի ձեզ տալ առաջին հարցազրոյցը, պահել եմ պայմանաւորուածութիւնը...

-Վերջին շրջանում ակտիվացել են ձեր պատգամաւորները, սկսել են տարբեր հիւրանոցներում կազմակերպուած փակ քննարկումների մասնակցել, պատգամաւորների մի մասն էլ պնդում է, թէ շարունակելու է իր գործառնությունը իրականացնել նաև ՀՀ-ում: Որքանո՞վ է դա առհասարակ իրատեսական:

-Արցախի Հանրապետութեան ԱԺ-ն Արցախի ժողովրդի քուէ ստացած միակ, ընդգծում եմ, միակ լեգիտիմ կառոյցն է, որը պէտք է շարունակի իր աշխատանքները իրաւական, քաղաքական, մարդասիրական և լրատուական ուղղութիւններում: Այսօր մենք չենք կարող ընդունել օրէնքի նախագծեր, քանի որ Արցախի կառավարութիւնը չի աշխատում, բայց մեզ ընտրած հասարակութիւնը սպասելիքներ և պահանջներ ունի մեզնից:

Այո, մենք պէտք է նիստ գումարենք, բայց մարդիկ չեն պատկերացնում, թէ նախապատրաստական աշխատանքների համար ինչ է հարկաւոր, մինիմալ պահանջներ կան: Բայց այս մասին չեմ ուզում խօսել, ուզում եմ ասել, որ Արցախի Հանրապետութեան ԱԺ պատգամաւորները երկու ճանապարհ ունեն յայտարարութիւնների և որոշումներ ընդունելու մասով: Առաջին ճանապարհը ուռա-հայրենասիրութեան ճանապարհն է, երկրորդը՝ ներկայ իրողութիւններին համապատասխան ճանապարհն է: Ես յորդորել եմ մեր պատգամաւորներին, որ ուռա-հայրենասիրութեան ճանապարհն այսօր ընդունելի չէ, որովհետև մենք այսօր կարող են վնասել դրանով ոչ միայն ՀՀ-ին, այլ նաև արցախահայութեանը:

Մենք չենք կարող ինքնալուծարուել՝ ի տարբերութիւն կառավարութեանը: Արցախի նախագահը կարող է լուծարել կառավարութիւնը մինչև յունուարի մէկը, բայց չի կարող լուծարել ԱԺ-ն, ըստ Արցախի Հանրապետութեան սահմանադրութեան՝ մենք ինքնալուծարման իրաւունք չունենք:

-Դուք ասում էք, թէ միակ լեգիտիմ կառոյցն է Արցախի ԱԺ-ն, բայց բազմիցս քննադատուեց, որ Սամուէլ Շահրամանեանին 22 պատգամաւորների կողմից նախագահ ընտրելուց յետոյ այդ կառոյցը լեգիտիմ չէ: Արցախահայութիւնը հենց մեղադրում է այդ ընտրութեան մէջ Արցախի 22 պատգամաւորներին:

-Առաջին հերթին մէկ թեկնածու կար: Ես Սամուէլ Շահրամանեանին շատ մօտիկից չեմ ճանաչում, բայց նա միակ թեկնածուն է, որի անցեալն ուսումնասիրել եմ, նա թալանի մասնակից չէ, քչով բաւարարուող մարդ է, անտիռեստինգ ունեցող մարդ է...

-Եւ Ձեր նշած այս գործօններով պայմանաւորուած 22 պատգամաւոր ընտրեց նրան:

-Իսկ Արցախի Հանրապետութիւնն առանց նախագահ մնա՞ր...



-Պարոն Թովմասեան, իրականում ի՞նչ կատարուեց: Ամէն ինչ կարծես սկսվեց Ձեր հրաժարականով, ապա հրաժարական տուեց Արայիկ Յարութիւնեանը և գործընթացները սկսվեցին շատ արագ զարգանալ:

-Իմ հրաժարականի պատճառը հիւանդութիւնն էր: Մի մասը գալիս էր, ասում՝ պէտք է գնանք Հասկարի կամուրջ, ասում եմ՝ ճիշտ էք ասում, միւսը գալիս էր, ասում՝ չպէտք է գնանք, ասում էի՝ դու էլ ես ճիշտ ասում, ամէն մարդ իր աշխատանքով չէր զբաղուած...

-Այսինքն՝ Արցախը կորցրին, որովհետև ամէն մարդ իր գործով չէր զբաղուած՝

-Արցախը մենք կորցրինք 2020թուականի նոյեմբերին...

-Ձեր պատգամաւորների մի մասն էլ առաջարկում է վտարանդի կառավարութիւն ձեւաւորել:

-Դեռ մենք մեր գործերն անենք: Կը քննարկենք, եթէ մեծամասնութիւնը այդպէս գտաւ, թող անեն: Բայց մենք դեռ շատ հարցեր ունենք, որոնց պատասխաններն այս պահին չունենք:

-Հիմա Արցախի ԱԺ-ն պէտք է լուծարուի յունուարի մէկին:

-Ո՛չ, մինչև 2025-ի մայիսի 21-ը Արցախի Հանրապետութեան ԱԺ-ն չի կարող լուծարուել:

-Հետաքրքիր է՝ ի՞նչ պէտք է անեն Արցախի ԱԺ պատգամաւորներն այստեղ, որ չի արւում:

-Ինչպէս նշեցի, Արցախի ժողովուրդը վերադարձի իրաւունքը, կորցրած գոյքի իրաւունքը, մշակութային ժառանգութեան պահպանութեան հարցերը պէտք է բարձրաձայնել: Հայաստանում շատ լաւ էր աշխատում Եղիշէ Կիրակոսեանի խումբը, նրանք աշխատանքներ են իրականացնում մշակութային ժառանգութեան պահպանման ուղղութեամբ և ոչ միայն:

Մենք պէտք է ՀՀ ԱԺ մեր գործընկերների հետ հանդիպենք, մշտական յանձնաժողովների նախագահների հետ պէտք է քննարկումներ ունենանք: Հիմա ԱԺ նախագահի պաշտօնակատարը ԱԺ փոխնախագահն է: 2020 թուականի 44-օրեայ պատերազմի արդիւնքում ՀՀ-ում մինչև վերջին բռնի տեղահանումը ՀՀ-ում, բնակւում էր 21.000 արցախահայութիւն:

Նրանց երեխաների ուսման վարձերը փոխհատուցւում էր Արցախի Հանրապետութեան պետական պիւտճէից: Այսօր այդ հարցը դեռևս լուծուած չի՝ ի տարբերութիւն 2023 թուականի սեպտեմբերի վերջի տեղահանուածների: Սա պէտք է մտահոգի՝ մեր պատգամաւորներին, թէ ոչ: Այո, գտնում եմ, որ պէտք է մտահոգի: Այդ նոյն խաւին Արցախի պետական պիւտճէից իւրաքանչիւր անձին 40.000-ական դրամ բնակվարձի համար:

Վերջին անգամ այդ վճարը կատարուել է 2023-ի մայիսին, որն այժմ ընդգրկուած չէ ՀՀ 40+10 ծրագրի մէջ: Միասնական, այս 130.000 բռնի տեղահանուածներն իրաւունք ունեն կորցրած գոյքի փոխհատուցման: Մօտ երկու տասնեակ հազար մեր հայրենակիցներ արդէն ՀՀ-ում չեն, սա 2020-ից տեղահանուածներն են աւելացած նաև վերջինը: Արցախի Հանրապետութեան պետական պիւտճէի հաշուին ծրագիր կար, որով զոհուածի ընտանիքը



բնակարան էր ձեռք բերում ՀՀ-ում: Դրանք 2023-ին բռնի տեղահանուածներն էին, որոնց երեխաները Եռաբլուրում էին և իրենք ցանկանում էին Հայաստանում ապրել:

Այդպիսի ընտանիքները 200-ն էին: Մի մասը ստացել էր սերտեֆիկատ և իրացրել այն, միւս մասը՝ դեռ ոչ, թէն քիչ մասն է մնացել: Եւ պարզ չէ ծրագրի իրականացման ճակատագիրը: Աւելին, բանկերն արդէն իսկ ահագանգում են այդ ընտանիքներին ամսական մայր գումարի և տոկոսադրոյքների վճարման համար, որը նախկինում վճարում էր Արցախի պետական պիւտճէի հաշուին:

Բռնի տեղահանուած արցախահայերի թոշակառուների հարցը պէտք է մտահոգի՞, թէ ոչ, 100.000-ական դրամները մի քանի հազար մարդ չի ստացել և այլ հարցեր, որոնք պէ՞տք է մտահոգեն Արցախի պատգամաւորներին, թէ ոչ... իհարկէ պէտք է մտահոգեն:

-Արդեօք փորձել էք այս հարցերը ներկայացնել ՀՀ իշխանութիւնների՞ն:

-Հիմա բարձրաձայնում եմ, ես համոզուած եմ, որ նրանք ընթերցելու են: Նորից եմ ասում, բազմաթիւ հարցեր կան, և հարցերը միայն քաղաքական չեն: Արցախահայութեան 97 տոկոսն արդէն սկսել է ծանր պայմաններում յայտնուել, և պատճառներից մէկը բնակարանների վարձերի բարձրացումն է, և սա է պատճառը, որ մեր հայրենակիցներից շատերը թողնում-գնում են Ռուսաստան, Եւրոպական երկրներ: Նրանց թիւը անցել է 10 հազարից: Եւրոպական երկրներ, իհարկէ, գնում է ունեւորները: Թէն ես համոզուած չեմ, որ նրանք կարող են երկար մնալ Ռուսաստանում:

-Վերջերս Արցախի ներկայացուցչութեան մօտ բողոքի ակցիա էր, որտեղ արցախցիները մասնաւորապէս, ասում էին, որ բազմաթիւ պաշտօնէաներ հարստացել են Արցախի հաշուին, վերցրէք նրանք ձեռքից շքեղ առանձնաստներն ու հիւրանոցները և դրա գումարը բաժանէք կարիքաւոր արցախցիներին:

-Արցախի ժողովրդի 97 տոկոսը դրա հետ կապ չունի, 3 տոկոսը կարող է կապ ունենալ դրա հետ: Հայաստանն ունի դատարան, եթէ մարդիկ թալանել են պետական պիւտճէն, ամօթ նրանց, և կոպէկ առ կոպէկ պէտք է վերադարձնեն, այլապէս վատ է լինելու այդ մարդկանց ճակատագիրը, քանի որ ժողովուրդը պոռթկալու է: Խօսքը միայն Հայաստանի մասին չէ, Արցախի դատախազութիւնում էլ կային քրեական գործեր, թող դրանով էլ զբաղուեն:

Այսինքն՝ կարծում էք, որ Արցախի պաշտօնէաները, մասնաւորապէս, Ազգային ժողովը, պէտք է շարունակեն իրենց գործունէութիւնը:

-Այո, որովհետեւ Ազգային ժողովը լուծարուած չէ, և չի կարող ինքնալուծարուել: Կան բազմաթիւ չլուծուած հարցեր. վերադարձի իրաւունքի, կորցրած գոյքի, մշակութային ժառանգութեան պահպանման հարցերի մասով ո՞վ պէտք է բարձրաձայնի, եթէ ոչ Արցախի ԱԺ-ն:

-Օրերս յայտնի դարձաւ, որ գերիների, այդ թւում Արցախի առաջնորդների հարազատներին տեղեկատւութիւն է փոխանցուել նրանց գտնուելու վայրի, առողջական վիճակի հետ կապուած: Ի՞նչ է Ձեզ յայտնի, ի՞նչ վիճակում են նրանք գտնուում, արդեօք հնարաւոր է լինում կապ հաստատել, արդեօք Բաքուի բանտերում խոշտանգման չեն ենթարկուում նրանք:



-Ես ձեզնից մի քիչ եմ ասել տեղեկացուած, գիտեմ, որ հեռախօսազանգերով կապուում են իրենց ընտանիքների հետ, խոշտանգումների մասին որեւէ բան չեն ասել:

-Հնարաւոր համարո՞ւմ էք Արցախի վերադարձը միջազգային երաշխիքների դէպքում, որովհետև Ադրբեջանն էլ անընդհատ խօսում է, որ ոչ ոք արցախցիներին չի ստիպել հեռանալ:

-Վերադարձի իրաւունքի մասին մենք պետք է բարձրաձայնենք: Եթէ միջազգային երաշխիքներ լինեն, կ'ուսումնասիրենք, յետոյ կ'ասենք՝ կը վերադառնան, թէ ոչ: Բայց առանց միջազգային երաշխիքների՝ այնտեղ վտանգուած է որեւէ քաղաքացու ապրելու և կեանքի իրաւունքը:

-Ալիեւը յայտարարել է, որ իրենց պատերազմ պետք չի, քանի որ հասել են իրենց նպատակներին:

-30 տարի առաջ էլ մենք էինք գտնում, որ հասել ենք մեր նպատակներին:

-Դուք՝ որպէս Արցախի պաշտօնեայ, տեղեակ եղե՞լ էք Արցախի լուծարման տեքստին:

-Մէկ բառով ասեմ՝ ոչ: Նոյնիսկ, որ այստեղ հաւաքուել են, ինձ չեն հրաւիրել:

ԿԻՊՐԱՀԱՅ

ՆԱՐԵԿ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ 2023-2024 ԿՐԹԱՇՐՁԱՆԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ

Յատուկ իմաստ էւ խորհուրդ ունին ամավերջի շրջանաւարտներու հանդէսները, որոնք գեղեցիկ բերքահաւաքի պահ են՝ տարիներու ուսումնական-կրթական տքնաջան աշխատանքի եւ մեկնակէտը նոր հանգրուաններու...:

Ուրբաթ, 21 Յունիս 2024, կ.ե. ժամը 7:00-ին, Նիկոսիոյ Նարեկ վարժարաններու ամփիթատրոնին վրայ, Նարեկ վարժարանները հայ կեանքին ընծայեցին իրենց հերթական նոր հունձքը, որ կը բաղկանայ 16 աշակերտ-աշակերտուհիներէ՝ Նիկոսիոյ, Լառնագայի եւ Լիմասոլի Նախակրթարանի բաժիններէն եւ 12 աշակերտ-աշակերտուհիներէ՝ Միջնակարգի բաժինէն:

Ամավերջի այս հանդիսութիւնը կը վայելէր նախագահութիւնը՝ Հայ համայնքի Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանի եւ ներկայութիւնը Սթրովոլոսի քաղաքապետին, Կրթական նախարարութեան ներկայացուցիչներու, պաշտօնական հիւրերու, վարժարաններու Հոգաբարձութեան ատենապետին եւ անդամներու, համայնքիս պատգամաւորական եւ վարչական ժողովներու անդամներու, ազգային կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, հոծ թիւով ծնողներու եւ ազգայիններու:

Յուզաթաթաւ մթնոլորտի մը մէջ, տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի առաջնորդութեամբ մուտք գործեցին բոլոր շրջանաւարտ-շրջանաւարտուհիները եւ իրենց տեղերը գրաւեցին ամփիթատրոնի բեմին վրայ: Այնուհետեւ հնչեցին՝ Կիպրոսի, Հայաստանի եւ Նարեկ վարժարաններու քայլերգները:



Կրթութեան նախարարի պատգամը փոխանցեց ներկաներուն Տիար Մարիոս Միլիթիատու, շեշտելով վարժարաններու առաքելութիւնը՝ իրենց ազգային արմատներուն գիտակցութիւնը ունեցող տիպար քաղաքացիներ պատրաստելու ուղղութեամբ:

Տարեկան տեղեկագիրը՝ հայերէն եւ յունարէն լեզուներով, ներկայացուց Տիկ. Վերա Թահմազեան, հանգամանօրէն անդրադառնալով վարժարաններու հարուստ ձեռնարկներուն ու գործունէութեան, որոնք կը միտին դաստիարակչական-կրթական-ուսումնական լայն հմտութիւններ ձեռքբերելու, ինչպէս նաեւ միջոյրոցական շփումներ ու կապեր ստեղծելու նպատակին:

«Տօնական» երկսեռ պարի կատարումը խանդավառութիւն եւ ազգային ոգիի փայլատակում ստեղծեց, ջերմ մթնոլորտին հետ միատեղ: Պարուսոյցն է Տիկ. Նանօր Քէլէշեան:



Վկայականներու եւ մրցանակներու բաշխումը կատարեցին տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեան,, Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեան եւ Հոգաբարձութեան ատենապետ Տիար Մասիս Տէր Բարթող հերթական կարգով:

Նախակրթարանի Հրաժեշտի ուղերձը կարդաց շրջանաւարտ Խրիստիլիոս Նաճարեան շատ յստակ առողջանութեամբ: Միջնակարգի ուղերձը յունարէն լեզուով պատշաճօրէն կարդաց շրջանաւարտ Մամուէլ Գեորգեան: Իսկ աշակերտական խօսքը՝ ազգային վառ ապրումներով, ներկայացուց միջնակարգի շրջանաւարտ Մանէ Աւետիսեան:

Իր «Հուսկ Բանք»ին մէջ, տնօրէնուհին շեշտեց հետեւեալ պատգամները ուղղուած բոլոր շրջանաւարտներուն: Կը մէջբերեմ անոնցմէ քաղուածաբար.-

«-Դուք ձեր կարողութիւններուն վրայ վստահութիւն ունեցէք: Այս փոփոխական աշխարհին մէջ հաստատ մնացէք ձեր արժէքներուն վրայ: Եղէք ուղղամիտ եւ ձեր աշխատանքին ու նկարագրին շնորհիւ դուք անպայման պիտի գնահատուիք:

-Կեանքը անսպասելի դարձուածքներ կրնայ ունենալ շատ անգամ: Դուք, փոփոխութիւնները ընդունեցէք բաց միտքով, որպէս կեանքի բնական ընթացքը եւ զանոնք օգտագործեցէք որպէս յառաջանալու, սորվելու եւ նոր փորձառութիւններ ձեռք ձգելու յարմարագոյն առիթներ:



-**Եղէք հաստատ կամքի տէր:** Պիտի հանդիպիք խոչընդոտներու եւ դժուարութիւններու: Պատահականութեան մի վստահիք ձեր յաջողութիւնը այլ յարատեւ ջանադրութեամբ աշխատեցէք եւ միշտ յիշեցէք, որ մարտահրաւերներ դիմագրաւելու կարելորագոյն ազդակը դիմադրողականութիւնն է, տոկոսութիւնը, ուժեղ ու անսահանջ կամքը: Արգելքները առիթներու վերածեցէք եւ անկոտրում ոգիով ընթացէք դէպի առաջ, նոյնիսկ երբ յառաջանալը շատ դժուար ըլլայ:

-**Ազնիւ եղէք:** Ազնուութիւնը մեծ ոյժ մըն է: Եղէք պարկեշտ ու ծառայասէր: Յարգանքով եւ խղճմտանքով մօտեցէք բոլորին, որովհետեւ մարդիկ կրնան չյիշել ձեր լաւ խօսքերը կամ արարքները, սակայն երբեք չեն մոռնար ձեր ազնիւ վերաբերմունքին պատճառով: Բարի ու դրական տպաւորութիւնը:

-Մի մոռնաք, որ **ուսումը աւարտ չունի** եւ չամբողջանար վկայականներ ստանալով: Շարունակ փնտռտեցէք նոր գիտելիքներ, նոր հետաքրքրութիւններ եւ ընդլայնեցէք ձեր մտքի հորիզոնները: Շարունակական ուսումը կամ սորվելու յարատեւ ընթացքը կեանքը մշտապէս կը հարստացնէ, եւ միտքը կը պահէ արթուն, առողջ ու պայծառ:

Եւ վերջապէս, բայց ոչ վերջին կարգով, հաւատարիմ մնացէք ձեր հայու ինքնութեան, հայոց լեզուին, ազգային մեր արժէքներու պահպանումին, ապրեցէք միշտ ազգային մեր մտահոգութիւններով, ազգային իղձերով ու տեսլականով, բարձր պահելով հայու անունը, ուր որ ալ երթաք»:

«Գովք Հայաստանի» կամ «Ես Իմ Անուշ Հայաստանի» սիրուած բանաստեղծութիւնը ապրումով արտասանեցին շրջանաւարտ-շրջանաւարտուհիները, հայրենասիրական յոյզերով ներշնչելով հանդիսականները: Յաջորդեցին խմբերգները՝ «Քեզ Համար Հայաստան» եւ «Վերջին Չանգ»ը, ինչպէս նաեւ անհատական «Հրաժեշտի Երգ»ը, խմբավարութեամբ Տիկ. Լիլիա Դանիէլեանի:

Տէր Մաշտոց աւագ քահանայ Աշգարեանի «Պահպանիչ» աղօթքով վերջ գտաւ ամավերջի եւ վկայականաց բաշխման այս տպաւորիչ ու շատ լաւ կազմակերպուած հանդիսութիւնը:

ԱԶԱՏ ԽՕՍՔը ջերմօրէն կը շնորհաւորէ բոլոր շրջանաւարտ-շրջանաւարտուհիները, իրենց մաղթելով բարի երթ ու կանաչ ճանապարհի դէպի ուսումնակրթական նորանոր բարձունքներ:

Ե.Գ.




ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՂԱԻԱՂՈՒԱԾ, ԱՂՃԱՏՈՒԱԾ ՈՒ ԳՈՒԵՀԿԱՅՈՒԱԾ

ԲԱԶՄԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

(ԲԶԻԶԱՅԻՆ ՑԱՆՑԵՐՈՒՆ ՄԷՁ)

Պարոյր Յ. Աղպաշեան



Այսօր (ինչպէս նաեւ երէկ), բայց, շատ աւելի բուռն թափով ու մղումով, Հայաստանը ներկայիս կը տառապի խոր ու սուր տագնապներով, որոնք անդամալուծած ու հաշմած են զայն, անճիտած ու գլխատած, յօշոտած ու բզբտած իր էութիւնը:

Որեւէ մարդ անմասն չմնաց այն ահաւոր աղէտներէն, որոնք պատած էին ամբողջ հայրենիքը, իր կառավարական կարգավիճակով, եկեղեցական տարերայնութեամբ, հողային ստուերացումներով,

ժողովրդային հակամարտութիւններով, արտագաղթային տեղաշարժերով, ուստի, այսօրուան տուեալներով ու տեսարաններով, աւելի քան աննախընթաց են, թափանցիկ ու ցաւցնող:

Պետութիւն-եկեղեցի յարաբերութիւնները, որոնք առանց այդ ալ պրկուած ու լարուած էին, իրարու նկատմամբ անսահման թշնամանքով ու քէնտութեամբ, իսկ ներկայիս, նոր ու խիստ մտահոգիչ տարողութեամբ, աւելիով հակաբեւեռացած, ուժգնօրէն պետութիւն պահելու եւ ամրապնդելու հրամայականութիւնը, աւելի խոցոտելով ու ստուերելով Ազգային Եկեղեցոյ պատմական դերակատարութիւնը:

Յաւալին այն է, որ վայրէջքներն ու ոլորապտոյտները անարգել կը շարունակուին ու կը կրկնուին, մինչ հայրենիքը քառամբակ կը սուրայ դէպի անձանօթ, անորոշ եւ անկումային վիճակ եւ անդունդներ:

Այս գրութեամբ, դարձեալ ու դարձեալ, պիտի անդրադառնանք ուրիշ գերագոյն հիմնահարցի մը, որ կը վերաբերի մեր Ոսկեղնիկին՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ, որ մեր գոյութեան եւ ինքնութեան բազմանիստ եւ անփոխարինելի կոուսանն է:

Ճիշդ է, այս առընչութեամբ, յաճախ օրակարգի բերած ենք այս թղթածրարը, համապատասխան ախտաճանաչումներով ու վկայագրութիւններով, քննարկումներով ու մեկնաբանութիւններով, սակայն, «գնացք»ը շարունակած է իր ձախաւեր երթը, իր ամենէն քանդողական արդիւնքներով եւ սոսկալի սահանքներով:

Հայ ժողովուրդին համար, իր լեզուն, իր գոյութեան եւ արժանապատուութեան անհերքելի եւ անուրանալի երաշխիքն է, առանց որուն, մենք Ազգ ըլլալէ կը դադրինք, կը չքանանք:

Բայց, այս անվիճելի ճշմարտութեան «դիմագիծ»ը սկսած է փոխուիլ, մշուշուիլ ու շեղուիլ, չափէն աւելի ակնյայտ ու բացայայտ թերութիւններով, մերթ Հայաստանի, մերթ Սփիւռքի մէջ, թէեւ արտհայաստանի մէջ, ան նուազ խոցելի կողմերով հանդէս կու գայ, իսկ հայրենիքի մէջ, լեզուի գործածութիւնը եւ արտայայտութիւնը, անընդունելի եւ աններելի չափանիշներու հասած են, իրենց վնասաբեր եւ աղիտաբեր հետեւանքներով:

Խօսքս՝ այս պարագային, ցարդ առանց ընդհանրանալու, կը պատկանի այն «այլանդակ» հայերէնին, որ կը պարզուի ու կը գործածուի՝ արդիական-արուեստական այն



գործիքներուն մէջ, որոնք համակարգիչներու ու կայքէջներու մէջ կը յայտնուին, իրենց զանազան անուանումներով, իսկ հայութիւնը, փոխանակ զանոնք, ըստ անհրաժեշտութեան եւ անմիջականութեան կարիքներուն ծառայեցնելու, զանոնք տարած են եւ առաջնորդած դէպի խաւարամտութիւն, անուանարկութիւն, վատահամբաւութիւն, վարկաբեկութիւն եւ աղարտաւորութիւն:

Թերեւս այս մատնանշումներն ու ակնարկումները, ոմանց համար լրջօրէն խնդրոյ առարկայ չըլլան, այնքան ատեն որ այդ գործիքները, ամէն ոք, ըստ կամս կամ իւրովի կը գործածէ կամ կ'օգտուի անոնցմէ:

Սակայն, մեր ցաւատանջութիւնը, գերմտահոգութիւնը, ատոնցմէ աւելին, մեր լեզուին անաղարտութեան ու մաքրութեան, անբիծութեան ու ճշգրտութեան հետ վերաբերմունքն է եւ ոչ թէ զայն ձգելու ինքնահոսի «մութ ու նեխած ճակատագիրի» ճահիճներուն ու ճախճախտուններուն մէջ, որոնք կրնան կրծել ու մաշեցնել իր կենդանութիւնը, զայն լրիւ անջատելով իր արմատներէն ու ձեւափոխելով կամ մշուշապատելով անոր հմայքին հարստութիւնը:

Հայաստանի անկախութեան բոլոր շրջաններուն, ուր միշտ ալ անկայունութիւններ եւ անապահովութիւններ, պայթուցիկ բռնկումներ արձանագրուած էին, քաղաքական թէ այլ զարգացումներով, հետեւիլ պէտք էր այդ «գայթակղեցուցիչ» գործիքներուն մէջ երեւցած լեզուական այլանդակութիւններուն, իրենց ամօթալի ու խպնելի բառամթերքով, անբարոյ եւ անհանդուրժելի եզրերով, փողոցային ու գոռիկ անուանումներով, որոնք ի՞նչ պատիւ կը բերեն հայութեան, զանոնք անհեթեթօրէն գործածողներուն եւ առհասարակ անոնց, որոնք հայոց լեզուի հաշտոյն կը պղծեն զայն:

Իսկ այս «հոսք»ը ո՛չ մեղմացաւ, ո՛չ ալ զսպուեցաւ, ընդհակառակը, աւելի հող շահեցաւ, որովհետեւ հոն չկար հսկողութեան ու վերատեսութեան ոչ մէկ ուշադրութիւն եւ երանգ, հետեւաբար, ամէն ինչ ձգուած էր հողմի ու քամիի քմահաճութեան, իսկ զանոնք գործածողները եւ օգտագործողները, առանց գիտակցութեան նուազագոյն նշոյլի, շարունակեցին ու կը շարունակեն այլասերել լեզուն, չխնայելով մեր ԱՆԳԻՆ ԼԵԶՈՒԻՆՍՍՐԲՈՒԹԻՒՆՆՈՒ ՎԵՒՈՒԹԻՒՆՆԵՐ, այլ միայն գոհացնելով իրենց անձնասիրական ու վրէժխնդրական մոլուցքները, ամէնէն ստորնամիտ բառերով, որոնք միայն կը պղտորեն լեզուին շքեղութիւնը, այլեւ՝ կը ցուցաբերեն իրենց տմարդութիւնը, սոցիտութիւնը եւ ունայնամտութիւնը:

Այս վատահամբաւութիւնը հասաւ իր խոցելի գագաթնակէտին, յատկապէս անցնող օրերուն, «խարխափումներն ու բախումներ»ը տարբեր ուղղութիւններով նշանաւորուեցան, այս պարագային, մեր լեզուին, խօսակցական թէ գրաւոր լեզուին վրայ նոր սեւութիւն մը դրոշմելով, երբ ամէն հաւաքականութիւն եւ շրջանակ, իրենց գրիչը կամ բջիջայինը առած, հայոց լեզուն մրոտեցին իրենց լուտանքներով, յիշոցներով, հայհոյանքներով, այնպիսի ամօթաբեր, անպատիւ, անարգական, նախատական ու մեղապարտական խաղքերով ու գրութիւններով, իրենց մաղձերը թափելով աջ ու ձախ, երբ մարդ կ'ամչնայ զանոնք գործածելէ իսկ:

Հետաքրքրական է, այս մոլորատերերը, կարճատեսները, ցնորամիտները, ինչպէ՞ս կը կարծեն իրենց դիրքերը պաշտպանել կամ ինչպէ՞ս կրնան համակերպիլ նման սայթաքումներու հետ, մանաւանդ երբ իրենց «թեզ»երը հետապնդելու համար, կը գործածեն հայ լեզուն, սանձարձակ լկտիութեամբ ու ծայրայեղական ձաբոտութիւններով:

Լաւ է, ի դէմս այս նոր իրադարձութիւններուն, պատկան պատասխանատուները չէ՞ին զգուշացուցած իրենց հետեւորդները (կամ կողմնակիցները), չըլլալու այնքան «ոտաբոյիկ»ներ, հայ լեզուն չխաթարելու ու չվիրաւորելու հեռանկարով, ապա, այժմ, երբ կրկնուող մագլցումները հասած են իրենց բռնկումին, ուստի, հակադիր կողմերը (որոնք



շատ-շատ են), գոնէ գլխաւորները կամ պարագլուխները, իրենց ազգային-քաղաքական շահերը պաշտպանելու համար, իրենց ելոյթներուն ու քարոզչութիւններուն մէջ, չէ՞ ինչ կրնար պահանջել խօսքի ու լեզուի լրջութիւն, կրթութիւն եւ յարգելիութիւն:

Եթէ «մարտնչող» խումբերէն ամէն ոք ունէր (եւ ունի) իր տեսակէտները, հայեացքները կամ արեւելումները, ինչ որ իրաւունք է (հիմնուած՝ ժողովրդավարական սկզբունքներու վրայ), ապա կարելի չէ՞ ը այդ բոլորը բարձրաձայնել կիրթ ոճով ու լեզուով, փոխան անպարկեշտ ու զծուծ հաշիւներու:

Մակայն, հոս անկարելի է չիշել, երկկողմանի զանգուածներուն անվայել մասնակցութիւնները, երբ ոմանք, իրենց գոռում-կոչերով եւ գրառութիւններով չանդրադարձան, որ տուժողը, վնասուողը ու... մահացողը, վերջին հաշուով, հայոց լեզուն է, որուն անխնայօրէն կը գորշեն ու կը խորշեն, իրենց անփառունակութեամբ եւ ազգային սնանկութեամբ:

Այս ամօթագրութիւնը հայ լեզուին նկատմամբ, ո՞վ պիտի ազդարարէ եւ ինչպէ՞ս պիտի սրբագրէ (՞), այնքան ատեն որ ան կը շարունակուի եւ ոմանք այդ միջոցով, կը փորձեն հարցեր «լուծել» եւ կամ՝ հաշուեյարդարներ տեսնելով ինքզինքնին արդարացնել:

Այս առիթով, քանի որ հայրենի վերնախաւի շրջանակներէն չկայ (ու չեղաւ) ո՛չ մէկ հակազդեցութեան ու զգաստութեան կոչ, առաջքը առնելու նման վաւաշտ ու խառնասէր «փարագիթ»ներու աժան հեշտանքներուն, հայոց լեզուն թունաւորող պատեհապաշտներու եւ արկածախնդիրներու կողմէ, մինչ հայրենի մտաւորականութիւնը, իր զանազան պատկանելիութիւններով, հանգամանքներով ու դիրքերով, կը մնայ լուռ (կամ անտարբէ ը), հետեւապէս, արդէօք ո՞ր կրնայ հանգրուանիլ մեր հայկականութեան, հայեցիութեան ու հայակերտութեան պանծալի ՎԷՄը:

Ինչ կը վերաբերի ուղղագրութեան ու շարադասութեանց, նո՛յն «գործիք»ներուն մէջ յայտնուած ու ցուցադրուած արձանագրութիւններուն ու սխալագրութիւններուն միայն կարելի է ամչնալ այդ անգրագիտութեանց համար, թէ՛ Արեւելահայ թէ՛ սփիւռքահայ «մունետիկ»ներէ, որոնք, ուրիշ «խմբակ» մըն են հայոց լեզուն եւ անոր բառապաշարը... ապականող:

Հոս, կ'արժէ նշել, առանց յաւակնութեանց կամ համեմատութեանց, որ Խորհրդային Հայաստանի տարիներուն, Արեւելահայերէնը երբեք չէ արժանացած նման բառապաշարային «նուաստացում»ներու, որքան այսօրուան բջիջային գործիքներուն մէջ թխմուած ու ծուարած կապկութիւններն ու խեղաթիրումները, անդին, ի պատիւ Արեւմտահայերէնին, բացարձակապէս ան չէ դաւաճանած իր բիւրեղ լեզուին ոճական ու շարադասական հարստութեան եւ ուղղաճշտութեան, ինչ որ կը նշմարուի ու կ'որուագծուի՝ հայաստանահայութեան պաշտօնական թէ՛ ժողովրդային մետիային ու խամաճիկային գործիքներուն մէջ, թէեւ, անոր մօտ ալ առկայ են որոշ տատանումներ եւ արատներ, սակայն, ոչ այն ծաւալով, ուր Արեւելահայերէնը... կը ծածանի:

(Պէլրութ)

ՄՏՈՐՈՒՄ ԽԹԱՆՈՂ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ

Դոկտ. Վաչէ Ղազարեան, ԱՄՆ, 16 ապրիլ 2024

ԳԵՂԱՐԴ



Ստորեւ հատուածաբար ներկայացուող **նամակը** ուղղուած էր Թուրքիոյ Հայոց Պատրիարք Յովհաննէս արքեպս. Արշարունիի 1913-ին, երբ վեց մեծ պետութիւններ՝ մէկ կողմէ հայոց կամ քրիստոնէաներու շահերու պաշտպան ներկայացող Ռուսաստան, Անգլիա եւ Ֆրանսա իբրեւ Դաշնակիցներ, եւ միւս կողմէ օսմանեան կառավարութեան շահերը պաշտպանող Գերմանիա, Աւստրո-Հունգարիա եւ Իտալիա իբրեւ Համաձայնականներ, սկսած էին զբաղիլ Թուրքիոյ յատկապէս արեւելեան եւ մասնաւորապէս հայկական նահանգներու բարենորոգման խնդրով:

Օսմանեան տիրապետութեան տակ գտնուող հայոց համար, որոնք կը բնակէին «Հայկական Նահանգներ» անունով ծանօթ պատմական Հայաստանի տարածքին վրայ եւ Կիլիկիոյ մէջ, ստեղծուած էր լինել-չլինելու կացութիւն մը, ինչպէս լինել-չլինելու մտավախութեամբ համակուած է Հայաստանի Հանրապետութեան տարածքին բնակող ափ մը հայութիւնը այսօր՝ վերափչող համաթրքական կամ համաթուրանական հովերէ բռնուած թուրքեւատրպէճանական տրամադրութիւններու բերումով:

Ընթերցողը դիւրաւ պիտի նշմարէ այլ հանգիտութիւններ եւս աւելի քան դար մը առաջուան եւ ներկայի կացութիւններուն միջեւ՝ ակնյայտ տարբերութիւններով հանդերձ:

Նամակին բովանդակութենէն կարելի է հետեւեցնել թէ Արշարունի Պատրիարք ուզած էր ունենալ Թիֆլիսի Ազգային Պիտրոյին տեսակէտը արեւմտահայութեան որդեգրելիք կեցուածքին մասին, մեծ պետութիւններու հետ ըստ այնմ յարաբերելու համար:

Արեւմտահայոց կացութեան դարման գտնելու խնդրանքով Գեորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսին նամակն ստանալով ցարական կառավարութիւնը յօժարած էր, իր շահերէն մեկնելով, թիկունք կանգնիլ բարենորոգումներու ծրագրին, նոյնիսկ ներկայանալով իբրեւ նախաձեռնարկ եւ ուղղելով քայլերը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան ու օտար պետութիւններու հետ բանակցելու կոչուած Փարիզի Ազգային Պատուիրակութեան՝ Պօղոս Նուպարի գլխաւորութեամբ: Ճիշդ նոյն օրերուն, Պոլսոյ ռուսական դեսպանատան թարգման եւ իրաւագետ, մարդու իրաւունքներու պաշտպան Մանտելշթամի պատրաստած բարենորոգումներու ծրագիրը սկսած էր քննարկման ենթարկուիլ յիշեալ վեց տերութիւններու դեսպանատուներու ներկայացուցիչներուն կողմէ:



Քննարկումներուն պիտի յաջորդէին դիմաշրջութիւններով եւ զիջումներով լի բանակցութիւններ, որոնք պիտի աւարտէին ռուսերու քաղաքականութեան մը կնքումովը 6 Փետրուար 1914-ին: Ուրիշ հարց թէ ա՛յս ալ, բարեկարգումներու նախորդ համաձայնութիւններուն նման, պիտի մնար մեռեալ տարր եւ անոր պիտի յաջորդէր Գերմանիոյ մեղսակցութեամբ թուրքերու գործադրած հայկական ցեղասպանութիւնը:

Նամակն առանձին շահեկանութիւն կը ներկայացնէ անոր համար որ, աւելի քան դար մը առաջ գրուած ըլլալով հանդերձ, այսօր ալ կը պահպանէ իր շահեկանութիւնը ազգային արեւելումի եւ քաղաքական կողմնորոշման տեսակէտէ, ինչ կը վերաբերի Հայաստանի արտաքին քաղաքականութեան:

*Մեր օրերուն արեւելումի վերանորոգ խնդիրը սկիզբ չառաւ Արցախի հայաթափման յանգած վերջին կրկնակի հարուածներուն պատճառով: Ան երեւան եկած էր Հայաստանի Գ. Հանրապետութեան հռչակման վաղորդային՝ իր պարզունակ ձեւով համառուսական եւ հակառուսական միտումներով, մերթ սուր, մերթ մեղմ դրսեւորումներով, ինչպէս նաեւ դատողականէ աւելի զգացմունքային մօտեցումներով, դպրոցներու մէջ ռուսաց լեզուի դասաւանդութիւններուն վերջ տալու կոչերէ մինչեւ հայերս եւրոպացի նկատելը, երբեմն ալ անցնելով «կոմպլիմենտարական քաղաքականութեան» թիւր ընկալումներէ:

Ընդգծելի են կարգ մը կէտեր նամակին կապակցութեամբ:

Ան իր մէջ կը խտացնէ տեսակէտը Թիֆլիսի Ազգային Պիւրօն բաղկացուցած մտաւորականութեան եւ քաղաքական գործիչներու, ինչպէս նաեւ «համայն ռուսահայութեան համագումարին», ստորագրութեամբը Պիւրոյի նախագահ Սամսոն Յարութիւնեանի (անդամ Հայ Ժողովրդական Կուսակցութեան) եւ քարտուղար Նիկոլ Աղբալեանի (անդամ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան):

Կողմնորոշումի խնդրին լուծման ուղղութեամբ իրաւամբ առանցքային կարեւորութիւն տրուած է շահերու համընկնումի նկատառման, միաժամանակ առարկայօրէն ընդունելով թէ «հայերին անհրաժեշտ է ունենալ մի նեցուկ, մի յենարան, մի հովանաւոր, որի շահերն ստիպեն նրան պաշտպանել մեզ իրական միջոցներով»: Կամ՝ «Հայերս քաղաքական մեծ ուժ չենք, որ կարողանանք ինքնուրոյն քաղաքականութիւն ունենալ. մեզ մնում է յարել պետութիւններից մէկի քաղաքականութեան»:

Ասիկա սկզբունք մըն է, որ յատուկ է բազմաթիւ փոքր ժողովուրդներու, որոնք առարկայական պատճառներով չէին կրնար,- կամ՝ եթէ կրնային, թերացած էին,- սրել իրենց եղունգները իրենց կոնակը առանց ուրիշի օգնութեան քերելու աստիճան: Եւ այս սկզբունքը կենթադրէ առկայութիւնը տուրեւտի (տալու եւ առնելու)՝ առանց անպայման տրուածին դիմաց հաւասար ստացումի:

Համակրանքներ եւ հակակրանքներ կաւարտին հոն, ուր կը սկսին պետական շահերը, ինչպէս բազմաթիւ առիթներով մեր ժողովուրդին ճակատագիրը վարելու կոչուածներ հաստատած են իրենց փորձառութեամբ՝ երբ «Հայասիրական» շարժումներու հայանպաստ



աշխատանքներէն եւ օտար պետական անձնաւորութիւններու համակրական արտայայտութիւններէն ետք, տեսած են թէ մեզի համակիր Մեծն Բրիտանիան չէր կրնար մեր յոյսերն արդարացնել՝ նկատի ունենալով իր տիրապետութեան ներքեւ հեծող բազմամիլիոն իսլամները Ափրիկէէն ու Միջին Արեւելքէն մինչեւ Հնդկաստան. կամ մեզի համակրող Ֆրանսան չէր կրնար արդարացնել մեր ակնկալութիւններն ու մինչեւ իսկ կ'ուրանար կամ պատճառներ կը փնտռէր ուրանալու իր խոստումները, որովհետեւ սխալ գնահատուած տնտեսական զիջումներ կ'ակնկալէր մեզ կոտորած թշնամիէն, եւայլն:

Այս իրականութեան հետ հաշտուելէ ետք, կը մնայ ընտրութեան կատարման հարցը, որ ակնարկը կը դարձնէ դէպի մօտիկն ու հեռուն, սահմանակիցն ու անդրսահմանակիցը, հեռուի սուրբը (կամ սուրբ կարծուածը) եւ մօտիկի անսուրբը (կամ անսուրբ կարծուածը): Բայց այդ առանձինն բաւարար չէ, անշուշտ: Հարկ է նաեւ քրքրել պատմութեան մոխիրը՝ դասեր քաղելու անցեալէն:

Պատմութեան քրքումը առաւել եւս կենսական կը դառնայ մերինին նման ժողովուրդի մը համար, զոր «խաբուած ժողովուրդ» պիտակած էր օտար մարդասէր մը, եւ որուն միասնականութեան յորդոր կարդացած են երկու ժամանակակից բանաստեղծներ, երկուքն ալ նոյն 1933 թուականին՝ Չարենցն ըսելով. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է», իսկ Թեքէանն ընդգծելով. «Դիզուէ. փոշին լոկ այդպէս պիտի նորէն քար ըլլայ...»:

Միայն վերջին մեկուկէս դարը նկատի ունենալով, մենք մեզ խաբուած կը գտնենք 1878-ին, 1895-ին, 1908-9-ին, 1914-ին, 1918-էն 1923 երկարող տարիներուն, եւ կը թուի թէ խաբուելու պատրաստ ենք նաեւ 2024-ին՝ առհասկան հաւատարմութիւն ցուցաբերելով խաբուելուն:

Չոհ գացա՞ծ ենք բարեկամներու կամ կարծեցեալ բարեկամներու շահերուն: Համարեա միշտ:

Դառնացա՞ծ եւ դաւաճանուած զգացա՞ծ ենք բարեկամներէ կամ կարծեցեալ բարեկամներէ մեր յուսախաբութիւններուն համար: Մի՛շտ:

Իրաւա՞մբ...: Կշռել եւ կշռադատելէ՞՞ ետք մեր պատասխանատուութեան բաժինը մեր անյաջողութիւններուն կամ յուսախաբութիւններուն մէջ:

Կը յուսանք որ ստորեւ ներկայացուող նամակը առիթ մը կ'ըլլայ խորհրդածելու վերը շարադրուածին մասին:

[Անթուակիր, ստացուած՝ 8 Յուլիսին]



Նորին Բարձր Սրբազնութեան Ամենապատիւ Պատրիարքին Հայոց Ի Պոլիս

Սրբազան Հայր,

... Ձեր նամակները բիրօ[լ]իս լուրջ ուշադրութեան առարկայ դարձան. երկու յաջորդական նիստերում խորհրդակցելուց յետոյ Ձեր դրած խնդիրների մասին՝ բիրօս եկաւ հետեւեալ եզրակացութեան, որ պատիւ ունենք զեկուցանելու Ձերդ Բարձր Սրբազնութեան:

Մեր կարծիքով Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան եւ հայոց կենսական շահերն իրար զուգահիւսում են, դրանով պէտք է բացատրել այն լուրջ հետաքրքրութիւնը, որ ցոյց է տալիս Ռուսաստանը հայոց հարցի վերաբերմամբ: Միւս կողմից հայերին անհրաժեշտ է ունենալ մի նեցուկ, մի յենարան, մի հովանաւոր, որի շահերն ստիպեն նրան պաշտպանել մեզ իրական միջոցներով: Այդ յենարանն ու հովանաւորը կարող է եւ պէտք է լինի Ռուսաստանը, որովհետեւ նա է միայն, որ սահմանակից է Հայաստանին, նա է, որ ամենից աւելի կենսական շահեր ունի մեր երկրում թէ տնտեսական եւ թէ մանաւանդ քաղաքական. միայն նա կարող է զինեալ ուժով շուտափոյժ օգնութեան հասնել հայերին կամ մտնել Հայաստան կարգ հաստատելու, նրա հետ են կապուած սահմանի քիւրդերը, որ ահաւոր գործիք կարող են դառնալ նրա ձեռքում ընդդէմ հայերի...:

Եւրոպայի համակրանքը մեր դատին անկասկած մեծ նշանակութիւն ունի. մեծ պետութիւնները կարող են արգելք դառնալ Ռուսաստանին իր շահերը ապահովելու եւ պաշտպանելու Հայաստանում, հետեւապէս եւ արգելք դառնալու մեր շահերի ապահովութեան, ուստի եւ, մեր կարծիքով, պէտք է ամենասերտ յարաբերութիւն պահպանել միւս մեծ պետութեանց, մանաւանդ Անգլիայի եւ Ֆրանսայի դեսպանատանց հետ: Բայց երբէք չպէտք է մոռանալ, որ հայոց հարցում Ռուսաստանի դերը գերակշիռ է. առանց նրա հաւանութեան ոչ մի բարենորոգում չի կարող իրականանալ Հայաստանում, որովհետեւ մեր երկիրը նա իր ազդեցութեան շրջանն է համարում:

Ինչ ձեւով էլ վճուի Թիւրքիայի ապագան՝ Հայաստանը սահմանակից լինելով Ռուսաստանին՝ անկարող է ազատ մնալ նրա ազդեցութիւնից, ուստի մեր եւ Ռուսաստանի յարաբերութիւնները թէ ներկայումս եւ թէ ապագայում պէտք է ամենալաւ վիճակում լինեն: Յիշեցէք 1895 թ. եւ կշռեցէք Ռուսաստանի համակիր եւ հակակիր վերաբերումի նշանակութիւնը հայ դատի վերաբերմամբ:

Մեկնելով այս տեսակէտներից, բիրօս կարծում է, որ չպէտք է շեղւել մի անգամ ընդգծած ճանապարհից եւ չպէտք է անել որեւէ քայլ, որ հակառակ լինէր Ռուսաստանի քաղաքականութեան: Դրա համար պէտք է շարժել նրանց քաղաքական գործակալի ցուցումներով [իմա՝ իրենց դեսպանին- Վ.Ղ.], բայց ամէն անգամ պէտք է բացատրութիւն խնդրել տուած ցուցումների համար եւ վստահանալ, որ համաձայն այդ ցուցումների շարժելով՝ հայոց դէմ հանած չէք լինի միւս մեծ պետութեանց չկամութիւնը:

Հայերս քաղաքական մեծ ուժ չենք, որ կարողանանք ինքնուրոյն քաղաքականութիւն ունենալ. մեզ մնում է յարել պետութիւններից մէկի քաղաքականութեան: Միմիայն



Ռուսաստանն է, որի քաղաքականութեան պէտք է յարենք: Մեր անվերապահ վստահութեամբ դէպի նրա հովանաւորութիւնը եւ մեր անկեղծ գործակցութեամբ նրա քաղաքականութեան՝ բարոյական պարտք կը դնենք նրա վրայ չքելու մեզ: Իր միջազգային դիրքն արդէն նրան թելադրում է զգուշաւոր լինել միւս մեծ պետութեանց հանդէպ եւ շատ հաւանական է, որ նրան յարած մնալով՝ միւսների անվստահութիւնն ու չկամութիւնը չվաստակենք:

Մեզ պէտք է բովանդակ Եւրոպայի համակրանքը, որովհետեւ Ռուսաստանի չկամութիւնն աղիտաբեր կը լինի, բայց նրա բարեացակամութիւնը միայն բաւական չէ մեր խնդրի յաջող լուծման համար: Մենք պէտք է Ռուսաստանի հետ լինենք, բայց ոչ եւրոպացոց չկամութիւնը յարուցանելու աստիճան: Ռուսներն իրանք գիտակցում են մեր փափուկ դրութիւնը, ինչպէս երեւում է Ձեր գրածներից եւ մեր ունեցած տեղեկութիւններից: Պէտք է այնպիսի ընթացք բռնել, որ ռուսները պարզապէս գիտակցեն թէ մենք սրտանց իրենց հետ ենք, բայց չենք կարող գործիք դառնալ նրանց արտաքին քաղաքականութեան: Մեր գործակցութիւնը վերջանում է այնտեղ, ուր վերջանում է մեր շահերի զուգադիպութիւնը: Ահա թէ ինչու ամէն անգամ, որ նրանք մեզ տալիս են որեւէ հրահանգ այս կամ այն ընթացքը բռնելու՝ պէտք է բացատրութիւն խնդրել նրանցից այն մասին, թէ դրանով չենք կորցնում արդեօք միւս պետութեանց բարեկամութիւնը: Այդ բացատրութիւնները եւ վստահացումները խնդրելու մէջ պիտի կայանայ մեր ինքնուրոյնութիւնը դիւանագիտական ասպարէզում:

...

Վերը յիշած տեսակէտները եւ նրանցից հետեւող մեր բռնելիք քաղաքական ճամբան միայն բիրօ[յ]իս համոզումները չեն: Նորերս այստեղ տեղի ունեցաւ համայն ռուսահայութեան մի համագումար հայոց խնդրի առիթով: Այդ համագումարը իր հաւանութիւնը տւեց բիրօ[յ]ի հետեւած քաղաքականութեան հայոց հարցում եւ միաձայն ընդունեց մեր եւ ռուսաց շահերի զուգադիպումը:

...

Նախագահ՝ Սամսոն Յարութիւնեան
Քարտուղար՝ Ն[իկոլ] Ադբալեան

Պատրիարք Յովհաննէս Արշարունիի նկարը վերցուած է Հայերէն blog-էն



ՌԵՃԵՊ ԹԱՅԻՊ ԷՐՏՈՂԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Յարութիւն Իսկահաստեան – Պէյրութ



Ենթադրաբար նախագահի, վարչապետի եւ նախարարի պաշտօններու վրայ, ինչպէս նաեւ այլ պետական ենթապաշտօններու վրայ կը տեղադրուին մարդիկ, որոնք ժողովրդային ընտրութիւններով եւ ոչ թէ քաղաքական կամ վարչական որոշումով կ'ընտրուին այդ պաշտօններուն, անոնց մէջ ատակ ու նուիրուած համարուելով: Մեր օրերուն սակայն, եւ երկար ժամանակէ ի վեր պաշտօններու վրայ կը տեղադրուին մարդիկ այլ ճամբաներով: Շահագրգռուող միջազգային ուժերը ամէն բանէ առաջ իրենց ընտրած թեկնածուին շուրջ հանրային դրական կարծիք կազմաւորելու աշխատանք կը տանին, իրենց լծակ ծառայող միութիւններու եւ կազմակերպութիւններու օժանդակութեամբ: Այս ձեւով հակառակ այն իրողութեան թէ սկիզբէն ղեկավար պաշտօնեան որոշուած է արդէն, սակայն ձեւակերպական ժողովրդային ընտրութիւններ կատարելէ ետք, ամբողջ ընթացքը այն տպաւորութիւնը կը թողու, թէ ղեկավարը որոշումով մը չէ տեղադրուած իր պաշտօնին, այլ ազատ ընտրութեամբ եւ ժողովուրդին կամքով՝ ազատութեամբ եւ ժողովրդավարութեամբ (freedom and democracy):



Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան անոնցմէ է, որ Արեւմուտքին կողմէ տեղադրուած է իր պաշտօնին վրայ, սակայն ձեւականօրէն «ժողովրդավարօրէն ընտրուած»: Վերոյիշեալ պաշտօնեաներու պաշտօնանկութեան պարագան շատ աւելի արագ եւ հեշտ կը կատարուի, երբ արդէն անոնք իրենց վստահուած գործը աւարտած կամ անընդունակ ըլլալին փաստած են անոր մէջ: Շահագրգռուող ուժին համար քանի մը երկվայրկեան հեռաձայնային

հրահանգ կ'արժէ միայն որեւէ պաշտօնեայ մը հեռացնելու արարքը: Իսկ այդ մէկը կը կատարուի նաեւ ֆիզիքական մաքրագործութեամբ՝ երբ պաշտօնեան կը հակառակի գործադել իրեն հրահանգուած գործը կամ վտանգ կը սպառնայ զինք տեղադրողներու ծրագիրներուն:

Ռեճեպ Թայիպ Էրտողան ծնած է 1954-ին, Սթանպուլի Պէյօղլու թաղամասը: Նախքան նախագահութեան պաշտօնը ստանձնելը ան վարչապետ ընտրուած էր 2003-ին ու պաշտօնավարած իբրեւ վարչապետ մինչեւ 2014: Էրտողան իշխող Արդարութիւն եւ Զարգացում կուսակցութեան (Adalet ve Kalkınma Partisi, The Justice and Development Party) հիմնադիրներէն եղած է 2001-ին: 2014-ին ան կ'ընտրուի Թուրքիոյ նախագահ եւ մինչեւ օրս կը գտնուի այդ պաշտօնին վրայ: Իսկապէս երկարատեւ իշխանութիւն մըն է այս, որովհետեւ զինք տեղադրողները գոհ մնացած են անոր վարմունքէն եւ գործելակերպէն:



Արտաքին ուժերու համար ներքին հարցերը թէև կարելու է, սակայն ժողովուրդը գոհ պահելու կամ անոր լաւ կեանք մը շնորհելու հարցը անոնց վերջին մտահոգութիւնն իսկ չի կրնար դառնալ (Համացանցային Կայքէջ -

https://en.wikipedia.org/wiki/Recep_Tayyip_Erdo%C4%9Fan):

Ըստ քաղաքական վերլուծաբան եւ թրքական հարցերու մասնագէտ Ռոպըրթ Էլիսի, թուրք հանրութիւնը այլևս յազեցած է Էրտողանէն եւ նոյնիսկ զգուած: Ռոպըրթ Էլիս Աթէնքի մէջ Եւրոպական Եւ Ամերիկեան Ուսումնասիրութիւններու Հետազոտական Հաստատութեան միջազգային խորհրդական է (Համացանցային Կայքէջ- <https://nationalinterest.org/.../turning-point-turkey-211439>):

2024-ի Մարտին Թուրքիոյ տեղական ընտրութիւններու արդիւնքները եկան փաստելու, որ թուրք հասարակութեան մեծամասնութիւնը այլևս վստահութիւն ցոյց չէր տար Էրտողանի Արդարութիւն եւ Զարգացում կուսակցութեան, այլ Սուլթաֆա Քեմալ Աթաթիւրքի գաղափարաբանութեան հետեւող ընդդիմադիր Ժողովրդային Հանրապետական կուսակցութիւնը աւելի ժողովրդականութիւն սկսած էր շահիլ: Վերջինիս առաջնորդը՝ Էօզկիւր Էօզէլ Թուրքիոյ ութսունմէկ նահանգներէն երեսունհինգի քուէները շահած էր, ընդհանուր 37 առ հարիւր յաղթանակ տանելով, մինչ Էրտողանի կուսակցութիւնը շահած էր քուէներու 35 առ հարիւրը: Աւելին՝ Ժողովրդային Հանրապետական կուսակցութիւնը երեսուն շրջաններու վստահութիւնն ալ շահած էր, ներառեալ Սթամպուլ, Անգարա, Իզմիր, Պուրսա, Անթալիա եւ Ատանա քաղաքները: Իբրեւ հետեւանք ընդդիմադիրներու այս յաղթանակին, միջազգային վերլուծաբաններ հարց կու տան թէ այս աթաթիւրքեան զօրաւոր ժողովրդականութիւն վայելող ալիքը ի՞նչպէս պիտի համադրէ շրջանները իրարու հետ եթէ իշխանութեան գլուխ անցնի: Միւս կողմէ Էրտողան անդրադառնալով ընտրութիւններու արդիւնքին ըսած էր, թէ Մարտ ամսուան ընտրութիւններու արդիւնքը տակաւին վերջը չէ, այլ անկիւնադարձային կէտ մըն է:

Էրտողանի իշխանութիւնը հաստատուելէ հինգ տարիներ ետք յստակ դարձաւ, թէ կառավարութեան նպատակը հանրային կեանքի մէջ կրօնքի (իսլամութեան) կշիռը վերահաստատել էր՝ հակակշռելու համար նախորդող համակարգի Աթաթիւրքի գաղափարաբանութեան հետեւող արեւմտամետութեան: Էրտողանի հաստատման նոյն այդ ժամանակին է որ Մերձաւոր Արեւելքով խիստ շահագրգռուող Արեւմուտքը՝ սկսած էր իսլամ կրօնքը չարափոխելով տարածել արաբական եւ իսլամական երկիրներու մէջ, նպատակ ունենալով Մեծն Միջին Արեւելքի ստեղծումը կործանարար միջոցներով: Էրտողան Թուրքիոյ Հանրապետութեան մէջ պարզապէս այս խիստ պարտադրանքն էր որ գործի կը լծէր: Իշխանութիւնը ձեռք առնելէ ետք անոր յետագայ քայլերը յստակ են այժմ, թէ ինչպիսի դեր վերցուցած էր ան Սուրիան եւ Լիպիան քանդելու գործին մէջ, արեւմտեան Արաբական Գարուն անուան տակ շինծու յեղափոխութիւններու թիկունք կանգնելով եւ թէ ինչպիսի յարաբերութիւններ ունէր Տաիւ Նուարա կեղծ իսլամական ահաբեկչական ոճրային կազմակերպութիւններուն հետ, որոնք ուղղակի կապուած են Իսրայէլի եւ Արեւմուտքի: Իսկ Էրտողանի դերը Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններու դէմ եւ Ազրպէյճանի նեցակցման ծիրին մէջ պարզ է արդէն:

Էրտողան Թուրքիոյ 2024-ի Մարտի ընտրութիւններու պարտութեան առիթով երբ անկիւնադարձային կը կոչէր եղածը, նկատի ունէր մօտալուտ նոր հանգրուանի մը սկիզբը անկախ այն հաւանականութենէն, թէ նոր հանգրուանին նոյնիսկ Էրտողան այլևս որեւէ դեր չվերցնէ: Գալիք այս նոր հանգրուանը վերլուծաբան Ռոպըրթ Էլիս կ'որակէ իբրեւ Թուրքիոյ արեւմտականացման հանգրուանը:

Էրտողան իր ժողովրդականութիւնը տակաւ առ տակաւ կը կորսնցնէ ըստ վերլուծաբան Ռոպըրթ Էլիսի, որ պատճառները հետեւեալ ձեւով կը թուէ.-



Ա.- Մեծ քաղաքներու մէջ կառավարական թուրք պաշտօնեաներն ու գործաւորները Էրտողանի ի նպաստ ցոյցերու կը մասնակցին պարտադրաբար, վախնալով իրենց պաշտօններէն:

Բ. - Անգարայէն դուրս կը գտնուէր Աթաթուրքի Անտառային Ագարակը, որ բնապահպանութեան շատ լաւ վայր մըն էր: Էրտողան զայն քանդել տալով անոր տեղը կառուցեց իրեն համար անձնական մեծածախս շքեղ պալատ մը:

Գ. Էրտողան Պոլսոյ պատմական Երլտըզի Պալատը իրեն համար նախագահական պալատի վերածեց:

Դ. Էրտողան Մարմարիսի մէջ նոր ամառնային պալատ մը կառուցեց:

Ե. Թուրքիոյ տնտեսութեան մէջ յարատեւ բարձրացող սղաճը անօթութեան մատնեց միլիոնաւոր թուրքեր:

Զ. Էրտողանի տիկինը ժողովուրդին խրատ կու տայ ինչպէ՛լ ճաշերը խուսափելու համար մսխումէ, իսկ ինք Հերմէս (Hermes) վաճառանիշով շատ սուղ պայուսակ կը կրէ:

Է. Երբ տարի մը առաջ Էրտողան Մալաթիա կ'այցելէր, բանուորները ցոյց կատարեցին իրենց դժուար տնտեսական վիճակը յայտնելով, թէ իրենց տան մէջ հացը միշտ կը պակսի: Նախագահը ամենայն լկտիութեամբ անոնց քանի մը տոպրակ թէ՛ նետեց ըսելով. «Վայելեցէք գաւաթ մը համով թէ՛»:

Ը. Էրտողան քանի մը տարի առաջ ուրիշ պալատ մը կառուցեց Վանայ լիճի մօտերը:

Թ. Անցեալ տարուան Թուրքիոյ զօրաւոր երկրաշարժէն վերապրողներ հանրութեան եւ լրատուական ընկերութիւններու առջեւ կը յայտարարեն, թէ իրենք լքուած կը զգան հակառակ Էրտողանի շոյլ խոստումներուն եւ չգոյ գործերուն:

Ժ. Հիւանդանոցներու մէջ թուրքերուն տեղեր չեն յատկացուիր, փոխարէնը պաղեստինցի եւ Համասի վիրաւորներ եւ հիւանդներ կը գրաւեն թուրքերու տեղերը: Էրտողանի կառավարութիւնը անոնց կը հայթայթէ ամէն ինչ՝ նոյնիսկ ծխախոտ:

Վերջերս «Ահվալ Նիուզ» լրատուական գործակալութիւնը կը տեղեկացնէր. «Կաթիլ առ կաթիլ Էրտողանի իշխանութեան դէմ ցասումը կը մեծնայ»: Հանրային կարծիքի ուսումնասիրութիւն մը կը հաստատէ, թէ ժողովուրդին 70 առ հարիւրը դէմ է Էրտողանի իշխանութեան եւ զայն կը նկատէ հարուստի իշխանութիւն:

Այս բոլորէն կը փաստուի որ Էրտողան կ'իշխէ «ինձմէ ետք ջրհեղեղ» մտայնութեամբ, սակայն ինչպէս վերը նշուեցաւ ան տակաւին կը գոյատեւէ՝ որովհետեւ իր տէրերուն ցուցմունքները լիուլի կը կատարէ:

Աղբիւր՝ Պայքար

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ՝ ՏԵՍԻԼՔ, ԿԱՍՔ ԵՒ ՅՈՅԱ» ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ



Ուրբաթ, Յունիս 21, 2024-ին, կազմակերպութեամբ Լոնտոնի Համազգային կրթական եւ մշակութային միութեան, տեղի ունեցաւ Դոկտ. Հրայր Ճեպէճեանի «Հայկական Ազգագրական Պատերներ՝ Տեսիլք, Կասք եւ Յոյս» գիրքի ներկայացում-քննարկումը, Նաւասարդեան սրահին մէջ: Ներկայ էին Մեծն Բրիտանիոյ եւ Իրլանտայի Հոգեւոր Առաջնորդ Գերշ. Տ. Յովակիմ Եպս. Մանուկեան, Հոգեւոր Հովիւ Տէր Շնորհք Քին. Պաղասարեան ինչպէս նաեւ Լոնտոնի մէջ գործող հայկական միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ձեռնարկի բացման խօսքը կատարեց Պրն. Հրաչ Պօղոսեան՝ Համազգային Միութեան ատենապետը: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ներկայացուց գիրքի հեղինակ Դոկտ. Հրայր Ճեպէճեանի կենսագրութիւնը:

Դոկտ. Հրայր Ճեպէճեան համապարփակ ձեւով ներկայացուց գիրքին բովանդակութիւնը: Ան նախ խօսեցաւ գիրքին մէջ տեղ գտած սփիւռքահայ տարբեր գաղութներու իր այցելութիւններու եւ հանդիպումներու մասին տարբեր յօդուածները եւ անոնց միտք բանին: Ան իր յօդուածներուն մէջէն ներկայացուց սփիւռքահայ տարբեր գաղութները եւ անոնց տարբերութիւնները՝ վեր առնելով այն իրականութիւնը որ սփիւռքը այլազան եւ գունատ է եւ իւրաքանչիւր գաղութ ունի իր իւրայատկութիւնները, որոնք կը տարբերին իրարմէ՝ անկախ անկէ որ հայկական են:

«Մեր հայկական ինքնութեան եւ մշակոյթին հետ մենք նաեւ իւրացուցինք տեղականը իւրաքանչիւր երկրի մէջ», ըսաւ ան: « Այս տարբերութիւնները կրնանք ուժի եւ կարողականութեան վերածել եթէ լաւ համադրենք զանոնք: Սփիւռքը լեցուն է մարդուժով եւ մասնագիտական միտքի եւ փորձառութեամբ օժտուած անհատներով, որոնք եթէ լաւապէս համադրուին կարելի կ'ըլլայ համահայկական եւ համասփիւռքեան մեր տարբեր



օրակարգերուն համար ունենալ մեծ ներդրում», ըսան ան: Դոկտ. Ճէպէճեան ապա խօսեցաւ Հայաստան-սփիւոք յարաբերութիւններու մասին եւ անհրաժեշտութիւնը զանոնք զօրացնելու:

Դոկտ. Արտա Ճէպէճեան, ընկերալեզուաբան, համալսարանի դասախօս, եւ հատորին խմբագիրը, խօսք առաւ եւ ներկայացուց գիրքը եւ անոր բովանդակութեան արժէքը եւ կարեւորութիւնը ազգային ինքնութեան եւ մայրենիի պահպանման համար: Ան քաջալերեց ներկաները որ չգոհեն մայրենին տեղական լեզուին տիրապետելու մարմաջով:

«Ընկերալեզուաբանութիւնը կը քաջալերէ որ մանուկներ-պատանիներ, տիրապետեն եւ ատակ ըլլան քանի մը լեզուներու եւ այս շատ անելիով կը նպաստէ անոնց մտային կարողականութեան աճումին: Պարտինք որդեգրել դրական կեցուածք՝ հայերէն լեզուին, պատմութեան եւ մշակոյթին հանդէպ, եւ քաջալերել մայրենիի գործածութիւնը տան մէջ», եզրափակեց Դոկտ. Արտա Ճէպէճեան:

Գերշ. Տ. Յովակիմ Մանուկեան՝ խօսք առնելով, դրուատեց գիրքին արժէքը, ուր սփիւոքահայ իրականութիւնները ոչ միայն կը ներակայացուին այլ նաեւ կը կամրջուին իրարու հետ: «Այս իմաստով Դոկտ. Հրայր Ճէպէճեան շատ կարեւոր աշխատանք կը տանի սփիւոքահայ տարբեր իրավիճակները ներկայացնելու եւ համադրելու զանոնք իրարու հետ»:

Դոկտ. Հրաչ Գույումճեան, որ եղած է Հրայր Ճէպէճեանի դասախօսներէն մէկը Հայկազեան համալսարանի մէջ, Պէրոյթ, բաժնեկցեցաւ ներկաներուն հետ իր տպաւորութիւններէն՝ Հրայրին ուսանողական տարիներէն: «Հրայրը միշտ ալ քննական միտք ունեցած է, արթուն, եւ պրպտող», ըսաւ ան: Դոկտ Հրաչ Գույումճեան ապա խօսեցաւ գիրքին բովանդակութեան մասին եւ վեր առաւ սփիւոքահայ իրականութիւնները եւ անոնց մարտահրաւերները: «Ինչպէ՞ս կարելի պիտի ըլլայ բնութագրել ներկայ օրերու սփիւոքահայ անհատը՝ բաւական բարդ իրականութիւն է, մեկնելով իւրաքանչիւր երկրի մէջ ապրող հայուն իրականութիւններէն», ըսաւ ան:

Ձեռնարկը ունեցաւ հարց-պատասխանի բաժին, ուր ներկաները բաժնեկցեցան իրենց կարծիքները եւ մտահոգութիւնները: Ձեռնարկը արարտեցաւ Պահպանիչ-աղօթքով, որմէ ետք տեղի ունեցաւ գիրքերու մակագրում եւ հիւրասիրութիւն:

ԵՐԵՒԱՆ-ՊՐԻՒՔՍԷԼ ԳՆԱՑՔԸ

ԱԻՕ ՊՕՂՈՍԵԱՆ



Անցեալ շաբաթ, Հայաստանի չորս արեւմտամէտ քաղաքական կուսակցութիւններ տուին մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին յայտարարեցին, որ կառավարութեան պիտի առաջարկեն ամենէն կարճ ժամանակամիջոցի մը մէջ կազմակերպել հանրաքուէ մը՝ նպատակ ունենալով հայցել ժողովուրդին կարծիքը շատ կարեւոր, անկիւնադարձային, երկրին ապագայ քաղաքական ճանապարհը ընտրելու որոշում տալու համար.

Դէպի Եւրոպական Միութիւն, թէ ոչ: Պարզապէս այսքանը. անոր արդիւնքէն կախեալ պիտի ըլլայ կառավարութեան կողմէ առնուելիք շարք մը որոշումներ, ինչպէս՝ մնալ չԱՊԿի, ԵԱՏՄի եւ այլ կառոյցներու մէջ, թէ դուրս գալ:

Ինչո՞ւ այդ քաղաքական կուսակցութիւնները կ'ուզեն այդքան արագ, մինչեւ չորս ամիս իրականացնել այդ հանրաքուէն: Իսկ եթէ անոր արդիւնքը ըլլայ դէպի Եւրոպական Միութիւն որոշումը. չէ՞ որ երկիրներու ճակատագիրը եթէ անպայման անոնց աշխարհագրութենէն կախեալ չէ, սակայն այնքան ալ հեռու չէ անկէ: Իրականութիւնը այն է, որ մեր երկիրը մաս կը կազմէ հարաւային Կովկասի, որ Ռուսիոյ կողմէ կը նկատուի իր ազդեցութեան գօտիի ծիրին մէջ եւ շատ կարեւոր՝ անոր ազգային ապահովութեան համար: Սակայն, մենք ալ մեր ազգային շահերէն եւ մեր ազգային ապահովութեան դիտանկիւնէն դիտելով, պէտք է հետամուտ ըլլանք անհրաժեշտ քաղաքականութեան, որուն համար մեր համապատասխան մասնագիտական մարմինները պարտին ուսումնասիրել եւ վերլուծել, թէ ի՞նչ ճակատագիր կը սպասէ Ռուսիոյ, աշխարհակարգի ներկայիս ընթացող փոփոխութիւններու լոյսին տակ, առանց զանց առնելու նաեւ այն բոլոր վտանգները, որոնց դէմ յանդիման կրնանք գտնուիլ, եթէ հանրաքուէին արդիւնքը ըլլայ ի նպաստ Եւրոպական Միութեան մեր արեւելումին:

Ռուսիոյ մասին խորաթափանց ուսումնասիրութիւն մը պիտի յայտնաբերէ անոր ներկայիս ապրած ճգնաժամին հինգ ռազմավարական հարցերը:

1. Արբանեակ պետութիւններու կորուստը. յետ-խորհրդային աշխարհակարգը իսկ Ծոսկուայէն ոչ միայն կեղրոնական Եւրոպայի իր արբանեակ երկիրները, այլ նաեւ Խորհրդային Միութեան հանրապետութիւնները: Երկու տասնամեակներու ընթացքին, սովետական կայսրութեան հպատակ բոլոր արեւմտեան հանրապետութիւնները՝ Էսթոնիա,



Լաթուիա, Լիթուանիան, Լեհաստան, Չեխիա, Սլովաքիա, Հունգարիա, Ռումանիա եւ Պուլկարիա միացան Հիւսիսային Ատլանտեան ռազմական ուխտին՝ ՆԱԹՕին եւ Եւրոպական Միութեան: Անոնց սպառազինութիւնը մէկ օրէն միւսը յայտնուեցաւ Ռուսիոյ հակառակորդ ճամբարին մէջ:

2. Սահմանները. Խորհրդային Միութեան փլուզումով, Մոսկուա կորսնցուց իր տարածքին շուրջ մէկ երրորդը եւ նախկին ընդհանուր բնակչութեան մօտաւորապէս կէսը, մինչ իր սահմաններուն երկայնքը նոյնիսկ աւելի շատ երկարեցաւ:

3. Պաշտպանողականութիւնը. Ռուսիոյ սահմանները, անկախացումովը Պալթեան երկիրներուն, որոնք ՆԱԹՕի անդամ երկիրներ են, իսկ Կարպատեան լեռնաշղթան, որ անոր հարաւ-արեւմտեան բնական պատուարը՝ արդէն 1200 քլմ. հեռու իր սահմաններէն, շատ աւելի դժուար պաշտպանելի դարձան, քան՝ նախապէս: Այդ պաշտպանողականութիւնը աւելի թուլացաւ, երբ Ֆինլանտա եւ Շուէտ միացան ՆԱԹՕին, այդպիսով Ռուսիան շրջապատելով մինչեւ հիւսիսային բեւեռը:

4. Մարդուժ. իր նուազող ժողովրդագրական պատկերին եւ Խորհրդային Միութեան բնակիչներու կորուստին հետ, Ռուսիոյ մէջ թմրամոլութեան եւ հիւանդութիւններու բարձր մակարդակին պատճառով, երկիրը պաշտպանելու ատակ մարդոց թիւը 1989ի թիւին մէկ հինգերորդն է, իսկ 2016ի հետ համեմատած՝ կէսը: Այս իրավիճակը կ'ենթադրէ, թէ անիկա կարողութիւնը չունի այլեւս պաշտպանելու իր արդէն նոյնիսկ առաւել երկարած պետական սահմանները:

5. Արհեստագիտութիւնը. նուազող մարդուժով Ռուսիա կարողութիւնը չունի ռազմական արհեստագիտութիւնը զարգացնելու եւ արեւմտեան չափանիշներուն համապատասխան որակով արտադրելու:

Այս հարցերուն վրայ կու գայ աւելնալու ռուսական ռազմական մարտավարութիւնը, որ ժառանգաբար հիմնուած էր նաեւ ոչ ռուս զինուորներ զոհելով յառաջ երթալուն վրայ: Այդ մէկը այլեւս անկարելի է մարդուժի պակասին պատճառով: Ռուսիա այլեւս խոցելի է եւ որեւէ ճակատէ ներխուժման մը պարագային, իր միակ պաշտպանական զէնքը միջուկայինն է:

Ռուսիոյ տնտեսութիւնը հիմնուած է ընդերքի հարստութիւններուն վրայ՝ կազ, քարիւղ, ածուխ, ցորեն, պողպատ, ալիւմինիում, ադամանդ, փայտ, պղինձ, փլաթինում, պարարտացուցիչներ եւ սառած ձուկ: Այս բոլորը կարելի դարձած է արտածել այլ երկիրներ



բացառապէս Ամերիկայի պարտադրած աշխարհակարգին շնորհիւ: Անոր դրացիական յարաբերութիւնները 1939ի ժամանակաշրջանէն առաւել լաւ չեն: Ճափոն, Չինաստան, Իւզպէքիստան, Իրան, Թուրքիա, Ֆրանսա, Լեհաստան, Գերմանիա, Անգլիա, Շուէտ եւ Ֆինլանտա տակաւին գոյութիւն ունին եւ անոնց մեծ մասը ՆԱԹՕի անդամ են հետեւաբար ուղղակի Ռուսիոյ հետ առճակատումէն դադրած: Ռուսիոյ տարածքին ամենէն խիտ բնակեցուած մասը իր արեւմտեան մասն է, որ կ'երկարի հիւսիսէն հարաւ, իսկ որքան հարաւ՝ այդքան ժողովրդագրական աճ կայ, սակայն, ո՛չ ռուս տարրերու աճ, ոչ ալ պատմականօրէն ռուսական հողերու վրայ, այլ՝ թրքական ծագումով այլ ժողովուրդներու աճ՝ չեչեններ, ինկուշներ, տաղստանցիներ, թաթարներ, բաշկիրներ եւ ուրիշներ, որոնք աճի աւելի բարձր մակարդակ ունին, քան՝ ռուսերը:

Այս ժողովուրդներուն մէջ չեն դադրած անկախութեան ձգտումները, իսկ զանոնք զարթոնքի մղելու ծրագիրները միշտ ալ կրնան վերակենդանանալ, վկայ՝ ռուս-չեչենական պատերազմները: Ռուսական անձայրածիր տարածքները ինչպէ՞ս պիտի պաշտպանուին նուազող բնակչութեամբ:

Ըստ 2010ի մարդահամարի արդիւնքներուն՝ 1990էն ետք, Ռուսիոյ 11,000 փոքր աւաններ, որոնց միացեալ բնակչութիւնը առաւել քան մէկ միլիոն էր, բոլորովին լքուած են: Նայինք Ռուսիոյ քարտէսին. Չինաստանի հետ սահմանակից սիպերիական տափաստանները՝ կը գտնենք միայն բնիկ ռուսերը, փակած թրանս-սիպերիական երկաթուղիին, իսկ անկէ հեռու՝ անմարդաբնակ է: Սահմանին հանդիպակաց չինական կողմը, կ'ապրին առաւել քան 10 չինացիներ ռուսական կողմի իւրաքանչիւր ռուս անձի դիմաց: Նոյնիսկ սովետական օրերուն, աւանդական դիրքային հակադրութիւն մը անիմաստ էր եւ ռուսերուն պէտք եղաւ չինացիներուն սպառնալ միջուկային հարուածով՝ զանոնք հանդարտեցնելու համար: Ռուսիոյ կեդրոնական ասիական ճակատն ալ նոյնպէս պաշտպանելի չէ. հոս թէեւ ժողովրդագրական պատկերը նոյնքան սպառնական չէ ինչպէս չինական սահմանին վրայ, թերեւս մէկ ռուսի դիմաց կան 3-4 կեդրոնական ասիացիներ, սակայն, ռուսական կողմի բնակիչները բնիկ ռուսեր չեն եւ մաս կը կազմեն թրքական ցեղերուն (Russia's Turkic Belt): Միայն մէկ ցամաքային հաղորդակցութեան միջանցքով (թրանս-սիպերիական երկաթուղի), որեւէ թշնամի պետութեան ներխուժման եւ այդ երկաթուղին խոցելու պարագային, Սիպերիան կը դառնայ մեկուսացուած: Ռուսերուն համար այդ շրջաններուն հեռաւորութիւնը Մոսկուայէն եւ անոնց նօսք բնակչութիւնը ի նպաստ իրեն է, որովհետեւ ներխուժող բանակին համար ալ այդ հսկայ եւ անմարդաբնակ տարածքներով յառաջանալը դժուար է, առաւել՝ այդ տարածքներուն թրքացեղ ժողովուրդներուն իրարու հանդէպ հակադրութիւնները, օրհնութիւն են Մոսկուայի համար: Այդ երկիրներէն միայն Իւզպէքիստան կրնայ իր կամքը պարտադրել թրքացեղ միւս հանրապետութիւններուն վրայ



Եւ դառնալ շրջանային մեծ ուժ, սակայն անապատային եւ դատարկ հսկայ տարածքները անոր համար դժուար յաղթահարելի են եւ կարողութիւնը չունի Ռուսիոյ սպառնալիք ըլլալու: Կը մնայ կովկասեան ճակատը. այդտեղ ամրակուտ է աշխարհագրութիւնը, սակայն, բարդ թրքացեղ ժողովուրդներուն պատճառով, եւ հարաւի երեք երկիրներէն՝ Վրաստան եւ Հայաստան, ոչ մէկ սպառնալիք են մինչ Ատրպէյճան կ'ուզէ Ռուսիոյ հետ հարց չունենալ: Վտանգը Թուրքիան եւ Իրանն են, որոնք առայժմ ունին իրենց սեփական ներքին հարցերը: Ուրեմն, իր անմիջական ներքին գլխացաւանքը Ռուսիոյ թրքացեղ ժողովուրդներն են:

Այսպիսի ոչ-յուսատու, անորոշ եւ մութ ապագայի հեռանկար մը կը սպասէ Ռուսիոյ, որուն հետ կապուածութիւն ունին մեր տնտեսական, մշակութային եւ ապահովութեան բազմաթիւ հարցերը, եւ որուն աւերակներուն տակ մնալու վտանգին դէմ յանդիման պիտի գտնուինք անոր փլուզման պարագային, հետեւաբար, խելամիտ ռազմավարութիւն է մեր հզօրացման միտող աշխատանքները, զուգահեռ այլընտրանքային աշխարհաքաղաքական քաղաքականութիւն վարելուն եւ դաշնակիցներու ընտրելուն: Այդ քաղաքականութեան կտրուկ փոփոխութեան համար, անշուշտ պէտք ունինք մեր ժողովուրդի համաձայնութեան, որուն համար կ'առաջարկուի կազմակերպել յիշեալ հանրաքուէն, որ, սակայն, ունի իր մէջ պարփակուած վտանգ մը, զոր պէտք է նկատի առնել նախքան անոր կազմակերպումը: Գաղտնիք չէ որ հայրենի հայութեան թերեւս մեծամասնութիւնը ունի Ռուսիոյ մէջ արտագնայ աշխատանքի համար ընտանեկան պարագաներ, որոնք այնտեղ աշխատելով՝ իրենց ընտանիքի ապրուստը կը հոգան, հետեւաբար, մեծ հաւանականութիւն կայ, որ անոնք թելադրեն իրենց ընտանիքներուն, դէմ քուէարկել Եւրոպական Միութեան անդամակցութեան: Այդ պատճառով, թերեւս գերազանց քարոզչական եւ լուսաբանական աշխատանքներ պէտք են՝ բացատրելու համար այն վտանգները, որոնց դէմ յանդիման կրնանք գտնուիլ, դէպի արեւմուտք սլացող գնացքին մէջ նետուելու ուշացման պարագային:

Դէպի Պրիւքսէլ գնացքը երկար չի կրնար սպասել:

ՏԵՍԱԿԷՏ

ՆԻԿՈՒԻԶՄ + ԲԱԳՐԱՏԻԶՄ ՀԱՒԱՍԱՐԵ՛

ՀԱՅՐԵՆԻԶՄԻ

Պարոյր Յ. Աղպաշեան



Լա՛ւ, ժողովուրդ, մինչեւ ե՛րբ եւ ո՛ր պիտի տանիք կամ պիտի երթան այս փոխադարձ գրոհները, հանրահաւաքներն ու քայլարշաւները, երբ՝ ոչ ժողովրդավարական սկզբունքները, ոչ արդարամտութիւնները, ոչ ալ ճշմարտախօսութիւնները կը յարգուին, կը նշմարուին կամ կը գործադրուին:

Իշխանութիւնները տեղ մըն են, իրենց հետեւորդներով, կողմնակիցներով ու

հաւատաւորներով, իսկ դիմացի ճակատին վրայ հակառակորդները, իրենց քաղաքական, պահանջատիրական ու վճռականական կարգախօսներով, ուրիշ տեղ մըն են:

Եթէ առաջինները կը կարծեն ու կը հաւատան, որ իրենք անսխալական են եւ ուժային թիւ կը ներկայացնեն, իսկ երկրորդները՝ կը պնդեն թէ իրենք մեծամասնութիւն ու համաժողովրդական իրաւունքներու ջատագով են, տակաւին, ոչ այս կամ այն կողմէն՝ այդ ընտրանքներուն յստակութիւնը, առաւելութիւնը կամ առաջնահերթութիւնը երեւցաւ ու փաստուեցաւ:

Բաց աստի, ինչպէ՛ս կ'ըլլայ որ այս բոլոր անցուդարձերը տեղի կ'ունենան, աշխարհական պետականութեան մը ու կրօնական շարժումի մը հակամարտութեան «բախում»ներու ընդմէջէն, ուր ո՛չ խելամտութիւնը, ո՛չ տրամաբանութիւնը, ո՛չ ալ քաղաքականութիւնը իրենց տեղը, ուղեգիծը կամ խաղաթուղթը ունին եւ չեն ալ կրնար այդ երթով եւ երգով հասնիլ իրենց... «մուրագ»ներուն:

Այլ խօսքով, եթէ Նիկոլիզմը, իր արտաքին ազդակներուն վրայ յենած ինքզինք կը պարտադրէ, ինքզինք ապահով կը զգայ կամ ինքզինք անձեռնմխելի կը նկատէ, իսկ Բագրատիզմը՝ իր շքախումբերով, ինքզինք կ'երեւակայէ անմրցելի, անգերազանցելի եւ անհպելի, ապա, երկու պարագաներուն ալ եւ, վերջին հաշուով, ո՞վքեր կրնան ըլլալ տուժողը ու վտանգաւորը, եթէ ոչ երկիրն ու ժողովուրդը:

Հոս կայ մե՛նձ հարցում մը, անխուսափելի հարցադրում մը.

Ինչո՞ւ գործող հակաիշխանութեան նման տրամադրութիւնները, պոռթկումները, արտայայտութիւնները ու գործողութիւնները, յանկա ըծ, այս հանգրուանին երեւան եկան եւ ինքզինքնին բացայայտեցին, չէ՞ որ, աւելի քան վատ, սուր եւ անհանդուրժելի պայմաններու մէջ կացութիւն մը եւս կար, երկրորդ եւ երրորդ նախագահներուն տիրապետչական ժամանակներուն, բռնատիրութեան ու ճնշումաձեւութեան ահաւոր պայմաններու մէջ պահելով առհասարակ հայրենիքը եւ անոր բնակչութիւնը:

Երկրորդ, ինչո՞ւ կոյրզկուրայն, համակերպեցան Նիկոլիզմի թաւշեան իշխանութեան հետ եւ եովին կառչեցան անոր փրկութեան (՛) լաստին, երբ՝ ան առանց յստակ քաղաքական ուղեգիծի ու ծրագիրի հրապարակ նետուեցաւ, իսկ հասարակութիւնը՝ լիովին տեղաւորուեցաւ անոր գիրկին մէջ:



Արդեօք այդ օրերուն չկայի՞ն իրատեսներ, հեռատեսներ կամ սրատեսներ, որոնք կարենային կշռադատել կամ խորաչափել, որ այս եկող «փոթորիկ»ը ո՞ր քան ուժ, լիցք ու շունչ ունի, ոչ միայն դիմակալելու գոյութիւն ունեցող մարտահրաւորները, այլեւ՝ զանոնք ընդմիջտ փոխարինելու բարեկարգումներու ու փոփոխութիւններու առողջ եւ յուսադրող տուեալներով:

Երբորդ, ինչո՞ւ հնարքներ, միջոցներ ու կարելիութիւններ չգտնուեցան այս «թաւշեայ ծնունդ»ին հետ լեզու գտնելու կամ համագործակցելու անոր հետ, չէ՞ որ Նիկոլիզմը լրիւ «անփորձ» եւ «անհարթ» դիմանկար մըն էր քաղաքական կեանքին մէջ, ալ ո՛ւր մնաց գործելու պետականացման ընդերքին մէջ, հետեւաբար, այսօրուան ընդդիմադիրները ու պոռոտախօսիկները, թող հասարակաց գիծեր եւ յայտարարներ գտնէին անոր հետ եւ դառնային առնուազն, հայրենապաշտութեան գործընկերներ:

Ակեղծօրէ՛ն, ինչպէ՞ս Լիբանանի պարագային, Հայաստանի մէջ ալ, նոյն քառսը կը տիրէ, թերեւս, որոշ տարբերութիւններով ու անհամատեղութիւններով, բայց, անպայմանօրէն, նոյն քանդողականութեամբ, աղիտաբերութեամբ եւ անարդարութեամբ, որովհետեւ, եթէ Հայաստանը կը գտնուի բոլորովին ուրիշ բեւեռներու վրայ, իր հարաւային Կովկասի տարածքներով ու դրուածքով, Լիբանանն ալ կը ծածանի Միջին Արեւելքի բռնկող յորձանուտներուն մէջ, երկուքն ալ «գոհ»ը ըլլալով շրջանի ու մերձաւորներու համայնակուլ ախորժակներուն ու աշխարհաքաղաքական ծրագիրներուն:

Այնուամենայնիւ, երբ մեր ակնոցով կը դիտենք եւ այդ լոյսին տակ կը համաչափենք, առնուա՞զն, մեր հարենիքին պատուհասուած տաժանակրութիւնը, ներքաղաքական եւ արտքաղաքական գօտիներէն ներս, ոչ միայն խոր ցաւ կը զգանք, այլեւ՝ անսահման խոց, որովհետեւ, անիկա մեր «աչքին լոյսն ու յոյս»ը ըլլալով, կարելի չէ անոր նկատմամբ մնալ անտարբեր եւ անփոյթ, այնքան ատեն որ անիկա է ու կը մնայ մեր ընդհանրական հայրենիքին վերջնագոյն ու լրացուցիչ անգին հողաշերտը (իմա՝ այժմու Հայաստանը):

Եթէ Բագրատիզմը, շուրջ ամիսէ մը ի վեր, չկրցաւ ՈԶԻՆՉ ընել, իր ետեւէն քարշ տալով ամբողջ հաւաքականութիւն մը եւ այսօր համարեա ձեռնունայն վիճակ մը կը պարզէ, դարձեալ ու դարձեալ խոր յոսախաբութիւն ու հիասթափութիւն պատճառելով իրեն հետեւորդ, գիտակից եւ անգիտակից ամբոխին մեծամասնութեան, ալ ինչի՞ մասին կը խօսուի:

Անդին, Նիկոլիզմը, հաւատալ թէ ոչ, համոզուիլ թէ ոչ, վերջերս, համաշխարհային գետնի վրայ միջպետական համաձայնագիրներ ու դաշինքներ ստորագրեց, ռազմական, տնտեսական, արհեստագիտական, քաղաքական ու համագործակցական ոլորտներէն ներս, որոնք երբեք ալ արհամարհելի կամ վանելի չնկատուեցան դէտերու կողմէ:

Ճիշդ է, Նիկոլիզմը պատմական ըլլալու չափ պատմական «թիրիմացութեան» մէջ յայտնուեցաւ, երբ Ռուսիան ու Փոլինը... նոյնացուց ու փորձեց կոնակ դարձնել անոնց, թէեւ նոյնհետայն, անդրադառնալով այդ ճախաւերութեան ու խայտակառակութեան, իսկ այժմ, կայ մեղմացում մը յարաբերութեանց մէջ ու կը փնտռուին ելքեր, բարօք շրջադարձներով, վերականգնելու կամուրջները:

Սակայն, մէկ կողմէն՝ չարաբաստիկ Ամերիկան ու Արեւմուտքը, միւս կողմէն՝ Նիկոլիզմի սպասողական ակնկալութիւնները, ցարդ զինք կը պրկեն ու կը «հիսթերիկացնեն», չկորսնցնելու, ո՛չ այս, ո՛չ ալ միւս թելերը... ցնոր տնօրինում:

Մինչ այդ, Հայաստանը փոթորկող ալիքները, աշխարհական ու կրօնական խաչմերուկներով, անշարժացուցիչ ամբողջ երկիրը, տերեւաթափեցին ամբողջ ժողովուրդը (նաեւ սփիւռքը), որովհետեւ, ամէն ոք իր «կառք»ը վարեց (երբեմն ալ վառեց), ջուր ծեծելու քաղաքականութեամբ, զիրար հրմշտկելով ու բզբտելով, յօշոտելով ու ճանկոտելով, որպէս



ինչ - «ով կը շահի կամ ով կը կորսնցնէ»ի բթամիտ քաղաքականութեամբ ու տրամաբանութեամբ, հարցն ր լուծելու, հայրենի՞ք փրկելու:

Դո՛ւք՝ բոլորդ, ներքին թէ արտաքին ուժերով ու մղումներով, որ կազմակերպեցիք այս «փառատօն»ները ու գործի լծեցինք ձեր ժողովրդային եւ ապահովական լծակները, արդեօք մտածեցի՞ք, թէ անցնող աւելի քան շուրջ 25 տարուան նոյն միջոցները կրկնեցի՞ք թէ ոչ, ասոր կամ անոր տխուր օրինակները... հրամցնելով, խեղճեր եւ անմեղներ շահագործելով ու վարկաբեկելով, յանուն ինչի՞ .

- Իշխանութի՞ն տապալելու
- Իշխանութի՞ն նուաճելու
- Ժողովրդավարութի՞ն իրականացնելու
- Մակարոյճնէ՞ր որսալու
- «Չինովնիկ»նէ՞ր պատժելու
- Բարեկարգումնէ՞ր կատարելու
- Արժանատրնէ՞ր ընտրելու
- Արտագա՞ դը կանխելու
- Քաղաքակրթութի՞ն հաստատելու
- Մէկութի՞ն կազմելու

Այս բոլորը ո՛չ երէկ տեղի ունեցան, բայց ո՞վ ըսաւ որ այսօր պիտի իրականանան, երբ արար-աշխարհը, ուրախ թէ վշտալի աչքերով կը դիտէ այս բոլոր այլանդակութիւնները, ա՛յն երկրէն, որ շուրջ 2000 տարուան մշակոյթ եւ արուեստ ունի, հազար ու մէկ շնորհքներով փայլած է, տիտաններու ծնունդ տուած է, հանճարներ սնուցած է, Ոսկեղնիկով օժտուած է եւ առաջին քրիստոնէայ պետութեամբ նշանաւորուած է:

Ի դէպ, եթէ այս շարժումները այսօր եւս, ինչպէս նախորդ տարիներուն, կը գործեն վերնախաւով, աշխարհական թէ եկեղեցական կարգուսարքով, ինչպէ՞ս կը բացատրուի ճամբաներուն փակումը, աղբամաններով թէ փշալարերով ԿԱՄՈՎԻՆ բանտարկելով եւ արգելափակելով բոլորին ազատութիւնը ու կաշկանդելով անոնց տարրական իրաւունքները:

Իսկ ամենէն ահաւորը եւ ամօթալին այն է, որ այս խառնափնթորին մէջ, ընդհուպ կը յայտնուի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ դէմ պայքարը ու լուտանքներու տարափը:

Ինչու ո՛ւր հարցը լուծուեցաւ կամ լուծուելու վրայ է, երբ հին ու նոր խրամատ մը եւս կը բացուի պետութիւն-եկեղեցի ճակատին վրայ:

Կը թուի թէ (այլեւ՝ կը հաստատուի), այս բազմաճակատ բախումներու շարանը պիտի շարունակուի, առանց լուրջ ու հիմնական դարմանումի մը (արդէն ականատես ելանք՝ Ազգային Ժողովի մէջ տեղի ունեցած տուրուտմբոցին, որ մե՛նձ ամօթանք մըն է, ինքզինք յաւակնող ժողովրդավայրենական երկրի մը համար):

Շարանը, կարծես թէ, պիտի շարունակուի, անարգել եւ անզուսպ ատելութեամբ, իսկ միւս ՇԱՐԱՆԸ՝ հայաթափումը եւս նոր թափ պիտի ստանայ, յետոյ տեսնենք, ո՞վ «կը յաղթէ», ո՞վ «կը մնայ» եւ ո՞վ «կը պայքարի»...:

Չենք ուզեր մեծխօսիկել, բայց, կորսնցնողը պիտի ըլլայ.

- Պետութիւնը
- Եկեղեցին
- Հայութիւնը
- Հայրենիքը

Յետոյ ալ տեսնենք թէ՛

Հայը, Հայաստանը հայրենիքը եւ... Աստուածը, ո՛ւր կը մնան կամ ո՞ւր պէտք է փնտռել զանոնք:

(Պէյրուֆ)

ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆ, ԹԷ՞ ...

ԳԷՈՐԳ ԹՈՐՈՅԵԱՆ



Պետութիւնը ժողովուրդի համախումբ ապրելու եւ ազգային ինքնուրոյնութիւնը ապահովելու եւ զարգացնելու մեծագոյն կազմակերպութիւնն է, որուն ցարդ հասած է մարդկային ընկերութիւնը: Տարբեր ժամանակներու ընթացքին, պետութիւնը հասկացողութիւնը եւս զարգացում ապրած է, դիմագիծ փոխած է, սակայն էութիւնը մնացած է նոյնը: 19րդ եւ 20րդ դարերուն, կայսրութիւններու փլուզումով, բազմաթիւ ժողովուրդներ, որոնք հազարամեակներ մնացած էին բռնագրաւող կայսրութիւններու լուծին տակ, սկսան ազատագրուիլ եւ

ձեւաորել իրենց պետութիւնը, պատմականօրէն իրենց հայրենիքին մէջ: Համաշխարհային երկու պատերազմներու աւարտին, բազմաթիւ պետութիւններ ձեւաորուեցան Եւրոպայի, Ասիոյ եւ Ափրիկէի տարածքին: Աւելի ուշ, խորհրդային կայսրութեան փլուզումով եւս 15 հանրապետութիւնները անկախացան եւ մաս կազմեցին միջազգային ընտանիքին: Այս երկիրներու շարքին էր նաեւ Հայաստանը, որ 1920 Դեկտեմբերին գրաւուած էր Խորհրդային Միութեան կողմէ:

Բնականաբար, այստեղ շատերը կրնան հարցնել, թէ անկախութեան չափանիշը ի՞նչ է. ունենալ սեփական քայլերգ, դրօշ, զինանշան եւ պետութեան այլ խորհրդանիշնե՞ր, թէ ունենալ պետական հաստատութիւններ, որոնք կը գործեն պետութեան հզօրացման եւ որոնց արդիւնաւէտութենէն կախեալ է տուեալ պետութեան կեանքի երկարաձգումը:

Եթէ ազգերը մշակութային ինքնուրոյնութիւններ են, որոնց համախումբ կեանքը գրաւական է անոր գոյութեան երկարաձգման, ապա պետութիւնը այդ համախումբ կեանքի ապահովման գլխաւոր երաշխիքն է: Պետութիւնը չի կրնար միմիայն տնտեսական, քաղաքական եւ ապահովական գործառոյթներ կատարել: Նոյնիսկ մեծ երկիրներու պետութիւնները նախանձախնդիր են իրենց ժողովուրդի, իմա՝ ազգի, մշակութային ժառանգութեան պահպանման եւ զարգացման. անոր պատմութեան տէր կանգնելու յանձնառութիւնը վերցուցած, զուգահեռաբար կը գործեն: Ֆրանսայի, Գերմանիոյ, Չինաստանի կամ Միացեալ Նահանգներու պետութիւնները, որքան որ ալ տնտեսական, քաղաքական եւ կամ զինուորական հարցերով լեցուցած են իրենց օրակարգը, նոյնքան նախանձախնդիր են իրենց երկրի մշակոյթի պահպանման եւ զարգացման հոլովոյթին:



Ճիշդ է որ մարդկութիւնը ներկայիս կ'ապրի համաշխարհայնացման ամենէն ազդու հանգրուաններէն մէկուն մէջ, բայց եւ այնպէս, համաշխարհայնացումը նոր երեւոյթ չէ: Տարբեր ժամանակաշրջաններու, անիկա ինքզինք պարտադրած է փոքր ժողովուրդներուն վրայ, զանոնք անհետացնելով կամ անոնց ինքնուրոյնութիւնը վտանգելով: Նոյն խորհրդային կայսրութիւնը ռուսական համաշխարհայնացումն էր, կեղծ ընկերվարութեան դիմակի տակ:

Հետեւաբար, անկախութիւն հասկացողութիւնը կը կայանայ առաջին հերթին ազգային մշակութային յստակ քաղաքականութեան վրայ եւ ապա տնտեսական հզօրութեան: Այս երկու գործօնները նաեւ փոխլրացուցիչ հանգամանք ունին եւ նաեւ իրարու վրայ ներգործելու բացայայտ ուժականութեամբ օժտուած են:

1991ին, Հայաստանի անկախացումէն ետք, Հայաստանի իրերայաջորդ ապաշնորհ իշխանութիւնները ապիկար քաղաքականութիւն վարեցին այս իմաստով: Երեսուն տարի երկիրը մնաց խորհրդային տրամաբանութեան մէջ: Տնտեսական գործօնը զանց առնուեցաւ, փոխարէն զարգացաւ աւատապետութիւնը (օլիկարխիան): Տնտեսութեան նպաստող բոլոր բնագաւառները երեսի վրայ ձգուեցան: Զբօսաշրջութիւն, առողջապահութիւն, դատական համակարգ, կրթութիւն եւ այլն: Զարկ տրուեցաւ չարաշահումներուն, կողոպուտին, կաշառակերութեան եւ այլն: Պետութիւնը, որպէս հաստատութիւն չկայացաւ եւ այդպիսի պայմաններուն մէջ չէր կրնար կայանալ: Միեւնոյն ժամանակ, անտեսուեցան մեր պատմութեան տիրութիւն ընելու կարեւորութիւնը, մեր մշակութային հարստութիւնն ու առանձնայատկութիւնները: Փոխարէնը, պատմութեան թուականներ կամ դէպքեր լոզունգներու վերածուեցան, կեղծ հայրենասիրութիւն տարածելու, մշակոյթը աղաւաղուեցաւ եւ քաջալերուեցան միջակութիւնները կամ փոքրութիւնները: Բայց օրէնքով, սահմանադրութեամբ, պետութիւնը պարտաւոր էր այդ բոլոր գործառոյթներուն ոչ միայն յանձնառու ըլլալ, այլեւ տիրութիւն ընել եւ զարգացնել: Այսինքն, թուղթի վրայ ամէն ինչ լաւ էր, բայց որպէս ազգ եւ հայրենիք, թաւազուր կը նահանջէինք: Աշխատանքի այս ոճը Հայաստանի իշխանութիւնները ժառանգած էին Խորհրդային Միութենէն եւ նոյնութեամբ գործադրեցին նաեւ անկախ Հայաստանի մէջ:

Ներկայ իշխանութիւնները դժբախտաբար կեդրոնացած են միմիայն տնտեսական մարզին վրայ, հայ մարդուն մօտ ստեղծելով այն պատրանքը, որ բարեկեցութիւնը եւ ֆիզիքական ապահովութիւնը երաշխիքներն են ազգային գոյատեւման: Սա անհեթեթ թէգ է, որ համաշխարհայնացման արդիւնք է: Իսկ հայութեան պարագային առաւել եւս վտանգաւոր է, եթէ նկատի ունենանք, որ մեր երկու հարեւանները մեզի թշնամի են, իսկ հարաւէն Իրանը քաղաքակրթական եւ մշակութային իմաստով կը գտնուի այլ հարթութեան վրայ:



Հետեւաբար, բարեկեցիկ կեանքը բաւարար չէ Հայաստանի գոյատեւման եւ հայ ազգի ապահովութեան համար: Ամենն կարելորը՝ հոգեմտաւոր զարգացման անհրաժեշտութիւնն է, որ տակաւին կը շարունակուի յամառօրէն անտեսուիլ Հայաստանի իշխանութիւններուն կողմէ: Աւելին. անոնք նորանոր թէզեր առաջ քշելով եւ քաղաքական իրապաշտութեան անուան տակ, կը փորձեն հայութիւնը դարձնել անդիմագիծ մշակութային կերպարի մը, որ ժամանակի ընթացքին կրնայ կուլ երթալ: Մինչդէռ հոգեւոր եւ մշակութային առանձնայատկութիւնը, որմով բոլոր ազգերու նման կը զատորոշուինք նաեւ մենք, յաւելեալ դիմադրողականութիւն կը ներարկէ մեր գիտակցութեան մէջ, տէր կանգնելու հայրենիքին եւ անոր պետականութեան: Բարեկեցիկ կեանք կարելի է այլ երկիրներու մէջ ալ գտնել եւ այնտեղ հանգրուանիլ: Մինչդէռ հայրենիքը ամէն տեղ կարելի չէ գտնել:

Հայաստանի իշխանութիւնները պարտաւոր են իրենց այս սխալ մօտեցումներէն հրաժարելու եւ Հայաստանն ու հայութիւնը սպառողական շուկայի վերածելու իրենց քաղաքականութեան վերջ դնելու: Հայութեան գոյութեան գերխնդիրը պետութեան պարտաւորութիւնն է եւ այդ կարելի է կազմակերպել, առաջին հերթին, ինչպէս նշեցինք, հոգեմտաւոր արժեքներու զարգացումով, որ ինքնին կը կազմաւորէ հայ եւ Հայաստան հասկացողութիւնները եւ անոնց հանդէպ իւրաքանչիւր հայ մարդու գիտակցուած պարտականութիւնները:


Ադրիւր՝ Ասպարէզ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Յակոբ Միքայէլեան

28/06/2024

- 28 Յունիսի, 2024. ԱԶԳ շաբաթաբեր



Չեմ գիտեր, թէ մեր այս դարասկիզբը ի՞նչ անունով պէտք է կոչել՝ պատերազմներո՞ւ, վարակներո՞ւ, Գովիտի՞, կլիմայական փոփոխութիւններո՞ւ, թէ՛ գիտական հզօր զարգացումներու դարասկիզբ, մասնաւորաբար որ Արհեստական բանականութիւնը (AI- Artificial intelligence) սրարշաւ կ'ընթանայ, մարդամեքենայի (ռոպոթ) ճամբով, որ արդէն անհաւատալի մակարդակներու

հասած է: Այսօր, գիտութեան յառաջընթացը կը չափուի ռոպոթներու զարգացման մակարդակներով: Արդէն սովորական դարձած է տեսնել տնային սպասեակի ներկայութիւնը հարուստ ընտանիքներու մօտ, որոնք իրենց հիւրերուն կը ցուցադրեն



մարդամեքենային հրահանգներու ենթարկուիլը, հիւրերուն մատուցումներ, կամ տան մէջ որոշ աշխատանքներ կատարելու, հարցումներու պատասխանելու եւ այլն, զարմացնելով ներկաները, ի մեծ բաւականութիւն հարուստ տանտիրոջ:

Ասիկա անհատական օգտագործումն է, սակայն աւելի ընդարձակը ճարտարարուեստի մէջ է անոնց օգտագործումը՝ բժշկագիտութեան, տիեզերագնացութեան, ռազմական եւ այլ ոլորտներու:

Վերջերս, ամերիկեան շարժանկար մը դիտեցի, ուր գիտնական մը պատրաստած էր կանացի դէմքով երկու ռոպոթ, սիրուն դէմքերով, որոնց գլխու եւ մարմնի մնացեալ սարքուած բաժինները եթէ ծածկուին մագով ու հագուստով, ոչ մէկ տարբերութիւն իսկական կենդանի կիներէ: Գրաւիչ էին, խօսող ու արտայայտուող դիմաշարժերով, տրուած հարցումներուն շատ տրամաբանական պատասխաններով... Եւ որ ամենակարեւորն էր, ուէէ անհատի նման զգացումներ կը դրսեւորէին՝ ժպիտ, լրջութիւն, յուզում...: Գլխաւոր դերակատարուհին կը սիրէր, կը նախանձէր, վրիժառութեան կը դիմէր... Ըստ ֆիլմին, ուրեմն գիտութիւնը, կամ գիտնականը հասած են կատարեալ մարդ ստեղծելու մակարդակին՝ որ իւրեք ունի եւ բանականութիւն, զգացում եւ ապրում:

Դիտած վայրկեաններուս հիացական ժպիտս տեղի տուաւ ներքին սարսափի մը՝ ինչպէ՞ս կարելի է Աստուծոյ դեր խաղալ եւ մարդ ստեղծել... Նախ ըսեմ, թէ մարդը մարդամեքենայով փոխարինելը ինքնին աշխատող տարրին մեծ հարուած է, մեր ժամանակներուն մարդոց համար աշխատանք գտնելը դժուար եղած է, զանոնք մեքենայով փոխարինելը ինչպիսի՞ ահաւոր սխալ պիտի ըլլայ, անջատ այդ սարքերուն ապագային անակնկալ գործելաձեւերէն, որոնք նախատեսուած չեն: Մարդիկ չեն հասկնար, որ գիտութիւնը որքան ալ զարգանայ, բնութեան ստեղծածին փոխարէն նոր մը չի կրնար ստեղծել: Շրջան մը մարդուն նմանակը ստեղծեցին DNA-ը օգտագործելով (cloning), սակայն արդէն մոռացութեան տրուեցաւ՝ անպատեհութիւնները նկատի առնելով: Գիտութիւնը իսկական ծաղիկ մը իսկ ստեղծել չի կրնար, մնաց որ մա՛րդ ստեղծէ:

Մեծերը կ'ըսեն՝ «Աստուծոյ գործին մի խառնուիր»։ Ապրիւր կեանքդ ու փառք տուր Ստեղծողին: (Մօտս 4 տարիներէ ի վեր պահուած փոքր կարմիր պղպեղներու տնային բոյսի մը սերմերը ունէի, անցեալ ամիս նկատեցի՝ որ թաղար մը ունիմ հողով լեցուն, բան մը ցանեմ ու զբաղիմ,- ըսի, գտայ պահած չորցած պղպեղները եւ մէջէն սերմերը հանեցի ու հողին մէջ մի քանի հատ թաղեցի ու սկսայ ամէն օր ջրել: Շաբաթ մը չանցած՝ արդէն ծիլ տուին այդ սերմերը եւ օրէ-օր հասակ նետեցին, չեմ կասկածիր որ կը ծաղկին, կը պտղաւորուին կանաչ, ապա կարմիր պղպեղներով, պահելով իրենց յատուկ կծու համը: Աստուած իմ, 4 տարի չոր ու ցամաք, եւ ահա՛ վերակենդանացում:


Աշխարհը թնդաց, երբ chip-ը ստեղծուեցաւ, այդքան փոքր սարքի մը մէջ անթիւ անհամար գիտելիքներ ու ինչեր ու ինչեր... անհաւատալի՛, հրաշալի՛... իսկ դուք նոյն զգացումը՝ ունեցէ՛ք եք գնդասեղի գլխիկին չափ փոքր սերմին մէջ կեանք ըլլալուն... Ինչ ուզէք կոչեցէ՛ք աստուածային, թէ բնութեան հրաշք. (երանի բոյսին, հրաշալի իւրայատկութիւն մը, որ մարդուն եւ կենդանիին չէ շնորհուած):

Մէկ ռոպոթ պատրաստելու համար ի՛նչ միլիոններ կը ծախսուին, լաւ կ'ընեն, օգտակար է տեղին համեմատ, սակայն անոնց ցուցադրականներուն վրայ ծախսուածին չափ եթէ մարդկութեան վրայ ծախսուի, աշխարհը աւելի հանգիստ կ'ըլլայ:

Վերադառնալով մեր նշած ֆիլմին, ըսեմ որ այդ գիտնականին պատրաստած երկու ռուպոթ կիները յարձակեցան իրենց արարիչին վրայ եւ սպանեցին զայն, քանի որ չուզեցին այլեւս ենթարկուիլ անոր քմահաճ հրահանգներուն եւ նախընտրեցին ազատութիւնն ու անկախութիւնը:

ՅԱԿՈՒ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ



Ուրկէ՞ սկսիլ

Մարդու՞ զատրաստել...

Կենսական նպատակ եւ անյետաձգելի յանձնառութիւն:

Հիմա նաեւ հայրապետական պատգամ: Չէ՞ որ տարին այդ նպատակին յատկացնել յայտարարեց Արամ Ա. Կաթողիկոսը՝ իրաւամբ նշելով, որ «մեր կառոյցները կենսաւորողը, մեր համայնքները

ծաղկեցնողը, Սփիւռքը որպէս հայակեղծոն գոյութիւն ամրապնդողը, անոր ազգային ինքնութիւնը պահողը, ե՛ւ որակ, ե՛ւ ուղղութիւն տուողը իր մարդու՞ծն է՝ հոգեմտաւոր պատրաստութիւն, մասնագիտական կազմաւորում ու ամբողջական նուիրում ունեցուղ մարդու՞ծը»:

Բայց ուրկէ՞ սկսիլ. ահա հարցը, որ կուզեմ խորհրդակցութեան առարկայ դարձնել մեր ընթերցողներուն հետ:

Իսկ այդ հարցումին պատասխանն ալ որոնելէ առաջ, կուզեմ եւ ինձի հարց տալ, թէ ինչո՞ւ հիմա կառաջադրուի այս: Միթէ մարդու՞ծի պատրաստութիւնը մեր օրակարգի մնայուն հարցը պէտք չէ՞ եղած ըլլար մեր բոլոր կազմակերպութիւններուն համար, բոլոր՝ ժամանակներուն: Եւ ինչպէ՞ս ստեղծուէր էին ու գործէր այդ կազմակերպութիւնները ի սկզբանէ, եթէ ոչ այն լռելեայն հասկացողութեամբ, որ ի՛նչ նպատակի համար ալ, որ անոնք գոյութիւն էին առած, ամենէն առաջ պէտք էր, որ սկիզբէն ապահովէին անհրաժեշտ մարդու՞ծը՝ արինտո գոյամարտը մղելու թէ յետոյ վերապրումը կազմակերպելու եւ պայքարը շարունակելու համար:

Ենթադրե՞նք, թէ դանակը այժմ ոսկորին է հասած, եւ չունինք այլընտրանք:

Պատրաստել մարդու՞ծ:

Եւ ի՛նչ պէտք է հասկնալ այս բառով: Այո՛, ամեն ժամանակէ աւելի ուսեալ ու իրենց այլազան ասպարէզներուն մէջ հմուտ սերունդներ են, որ կը յաջորդեն իրարու մեր, թէ աշխարհի այլ ժողովուրդներու կեանքին մէջ: Ատկէ աւելի ուզուածը ի՞նչ է ուրեմն: Ի՞նչ է սուր այն կարիքը, ի՛նչ իւրայատուկ ոլորտի մարդու՞ծ է, որ կը պակսի մեզի, որուն համար ձայն բարձրացուց Կիլիկիոյ վեհափառը:

Իսկ ո՞վ պիտի ըլլայ պատրաստողը: Ինչո՞ւ չենք պատրաստած ցարդ: Այժմ ունի՞նք միջոցները պատրաստելու համար: Եւ որքա՞ն ժամանակ կայ մեր առջեւ այս յանձնառութեան համար:

Այս հարցումներն ալ ի հարկէ կը կարօտին պատասխանի, եւ այս յօդուածը չի յաւակնի որ տալու այդ պատասխանները:

Ահա, սակայն, կարգ մը կէտեր՝ հաւաքական մտորման համար:

Պատրաստե՛լ:



Առաջին՝ ուսուցիչ պատրաստել: Մեր գլխաւոր թիւ մէկ խնդիրը, ուսուցիչի՝ պակասն է: Մեր վարժարանները ուսուցիչ կը փնտռեն ու չեն գտներ: Հայերէն դասաւանդող ուսուցիչ: Հայերէն՝ վ դասաւանդող: Լեզու, մշակոյթ, պատմութիւն, կրօն եւ մասամբ նորին: Լեզուին ու այդ բոլորին լաւապէս տիրապետող ուսուցիչ: Դաստիարակ: Կոչում ունեցող, իր հմտութենէն անդին՝ ոգի՝ ունեցող, ոգի՝ ներշնչող դաստիարակ:

Պատրաստութիւնը մէկ խնդիր: Բայց կայ նաեւ անոր մարդավարի ապրուստը հոգալու հարցը, առանց որուն արդար լուծման՝ մենք տեղ չենք հասնիր: Այսօրուան կեանքի մակարդակով ապրելու հնարաւորութիւն ընծայելու մասին պէտք է խորհիլ: Այլապէս ո՞ր փայլուն ուսանողը պատրաստ պիտի ըլլայ այդ ասպարէզը ընտրելու: Շատ աւելի նուազ յոգնեցուցիչ ու շատ աւելի լաւ վարձատրող ասպարէզներ կան ի վերջոյ: Իսկ այդ հրապուրիչ ասպարէզները մտնելու անկարողներուն պիտի մնայ ուսուցչական թէ ազգային պաշտօնները ստանձնելու պարտաւորութիւնը:

Պատրաստել:

Երկրորդ՝ գրող, հրապարակագիր, լրագրող պատրաստել: Առանց յատուկ պատրաստութեան՝ շատերս վերցուցած ենք այդ դերերը, սակայն մեր գրականութեան ու մեր մամուլի ներկայ վիճակը բաւարար չէ՝ ցոյց տալու համար, որ հոս եւս մեծ բաց մը կայ: Եւ եթէ չկարդանք մեր գիրքերը, եթէ չբանանք մեր մամուլի էջերը, ուրկէ՞ պիտի ստանանք մեր առօրեայ սնունդը, հոգեւո՞ր մեր սնունդը, ազգային՝ մեր սնունդը: Ո՞վ է մտածողը այս մասին: Ո՞վ մտահոգ է այս առնչութեամբ: Ո՞ր կազմակերպութիւնն է, որ տրամադիր է գրող պարտեցնել, հրապարակագիր վարձատրել, լրագրող խրախուսել:

Պատրաստել:

Երրորդ՝ գործիչ պատրաստել՝ ղեկավար, մշակութային թէ կազմակերպական մարզերուն համար: Չի՞ պակսիր տաղանդը, չի՞ պակսիր ստեղագործական հրայրքը, բայց ո՞վ ամաւարկ կը յատկացնէ այս ուղղութեամբ: Եւ ո՞վ, ո՞ր կազմակերպութիւնը պատրաստ է անհրաժեշտ վարձատրութիւնը յատկացնելու, որ իր պարախումբերն ու երգչախումբերը չմնան առանց ղեկավարի, իր թատերախումբերը՝ առանց բեմադրիչի, իր երիտասարդական ու պատանեկան միութիւնները՝ առանց վարիչի, իր քաղաքական աշխատանքները՝ առանց լիաժամ նուիրեալ գործիչներու: Միրողական մակարդակէն վե՛ր: Իրենց ասպարէզներուն մէջ հն՞ւտ: Եւ մի՛շտ ոգի ունեցող ու ոգի՛ հաղորդող:

Այո՛, պատրաստել:

Դեռ չեմ խօսիր այլ ոլորտներու մասին, տնտեսականէն, մարզականէն մինչեւ պաշտպանականը:

Կասկած չկայ, որ այս բոլորին համար մենք՝ Սփիւռք թէ հայրենիք, մարդուժի կարիք ունինք, մարդուժ պատրաստելու պարտաւորութիւնը ունինք: Այս պահուս անորոշ է, թէ այս ուղղութեամբ ի՞նչ կը ծրագրուի Հայաստանի մէջ, եւ ո՞վ է ծրագրողը, սակայն ազգովին չենք կրնար խուսափիլ մեր այդ պարտաւորութենէն Սփիւռքի պարագային:

Բայց այո, ուրկէ՞ սկսիլ:

Առանց անտեսելու կարեւորութիւնը առկայ մարդուժը ճանչնալուն, համախմբելուն եւ զինուորագրելուն՝ նոր մարդուժի պատրաստութիւնը սկսիլ մանկապարտէզներէն, ընտրել յատկութիւններ ու ձիրքեր ցոյց տուող երեխաները, հետեւիլ եւ օժանդակել անոնց ուսման, զարկ տալ անոնց կարողութիւններուն, բացայայտել այդ կարողութիւնները եւ այդպէս քաջալերել զանոնք՝ մինչեւ անոնք հասնին դառնալու մեր ներուժը բոլոր վերոյիշեալ մարզերէն ներս:

Անհրաժեշտ է ի սկզբանէ նիւթական կտուանները ստեղծել, այնպէս, ինչպէս կը յաջողինք գոյացնելու շէնքերու՝ եկեղեցիներու, դպրոցներու կամ ակումբներու շինութեան կամ նորոգութեան պէտք եղած գումարները: Այո՛, այդ գումարներէն շատ աւելին, տասնապատիկ թէ հարիւրապատիկ աւելին պէտք ունինք մարդուժի պատրաստութեան

համար, բայց ես ունիմ անխախտ համոզումը, թէ կրնանք ի մի բերել մեր գոյութեան երաշխիք դառնալիք նիւթական այդ կոուանները:

Բայց մանաւանդ անհրաժեշտ է այս գործին մօտենալ համահայկական առումով, բոլորին հետ խորհրդակցաբար, բոլորին մասնակցութեամբ՝ թէ՛ կարիքներու ճշտումին, թէ՛ գործնական քայլերու որոշումներուն համար: Բոլորը՝ ներառեալ քաղաքական տարբեր կողմերը, եկեղեցական բոլոր համայնքները, բոլոր միութիւնները եւ բոլոր անոնք, որոնք այս առնչութեամբ կրնան օգտակար ներդրում մը ունենալ:

Մկսիլ համազգային գործակցութենէն: Մնացեալը աւելի հեշտ կ'իրականանայ:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

«Դրօշակ», մայիս 2024

ԻՆՉ ԵՒ ԻՆՉՊԷՍ

*« Խոհեմութիւնը, երբ գիտի,
թէ ինչպէս եւ ինչ պէտք է զիջել
հանգամանքների պահանջով,
կառավարման ձեւերից մէկն է »:*
Վոքան



Կենդանական աշխարհում օրինական երեւոյթը է գործել բնագոյաբար, քանզի այդ է կարգը իմացականութեան բացակայութեան առումով, բայց նոյն գործելակերպը անընդունելի եւ պախարակելի պիտի համարուի մարդկային հասարակութեան պարագային, մանաւանդ երբ այն անընդհատ առերես բախում է իր գոյութեան լինել-չլինելու սպառնալիքների, տարբեր անլուծելի խնդիրների հետ՝ բայց բնագոյաբար, թերեւս անգիտակցաբար կամ անյայտ շահադիտական պատճառների դրդումով՝ ինքնառնչացման ուղին է բռնում:

Յաւօք, մեր աւետեաց երկրում այդպիսին է արդի վիճակը քաղաքական առումով՝ նմանուելով Աւգեան ախոռի, որի մաքրումը եւ կարգի բերումը հեռու է իրականութիւնից, քանզի հիմնական դերակատարների լեզուն նման է բաբելոնեանին:

Մտադիր չեմ իշխանութեան կամ վարչապետի գովերգը անել՝ համարելով, որ օրինազանց չեն եւ իրենց կարողութիւնների եւ հասանելի հնարաւոր

միջոցներով դիմակայում են ծագած խնդիրներին, թերեւս կատարեալ եւս չեն, բայց ո՞վ է անթերի եւ նաթ չունեցող ո՞ր երկիրն է յարգելի:

Այսուհանդերձ վարչապետը իր գործակիցների հետ պէտք չէ մոռանան, որ իրենց առաքիւնութեան եւ անժխտելի ծրագրի առկայութեամբ չէր, որ իշխանութեան եկան, այլ ժողովրդի մէջ կուտակուած նողկանքի, եւ ատելութեան մաղձի, որ հասել էր գագաթին նախկին տասնամեակների ընթացքին:

Միեւնոյն ժամանակ նշեմ նաեւ, որ ընդդիմադիր ուժերի նկատմամբ եւս գովերգելու որեւէ պատճառ չունեմ, նաեւ պախարակելու, միայն թէ նրանք են, որ երկրի նկատմամբ



կառուցողական լինելու իրենց օրինական դերը մոռանալով լծուել են «քանդենք ու տիրենք» գործունեութեան, որի լայն ցուցադրումն է նրանց վարքն ու բարքը Ազգային ժողովի նիստերի ընթացքին եւ ցոյցերի ընթացքին փողոցների աղբամաններով փակելը , որ հեռու է բաւարար լինելուց երկրի պահանջների համեմատ: Չմոռանանք երկրում սակաւապետ համակարգի հաստատումը պետական միջոցների թաւանով, հոկտեմբեր 27-ը, մարտի 1-ը եւ բազում այլ արարքներ, երբ **քոչը** գանձեր էր կուտակում, իսկ **սերժիկի** եղբայրները երկրի տէրն ու տիրականն էին, մինչեւ իսկ շքանշանակիր էին դարձել, անյայտ ծառայութիւնների համար:

Աներկբայ է, որ որեւէ երկրում բանիմաց եւ կարգապահ ընդդիմութիւնը մանանայ է երկրի համար, նրա բարգաւաճման, վերակառուցման եւ բարեկեցութեան համար անհրաժեշտ եւ բաւարար պայմաններ ստեղծելու: Առաւել կարելոք է, որ իշխանութիւն, ընդդիմութիւն, եկեղեցի երրորդութիւնը (triumvirate) միախոհ, համերաշխ, փոխադարձ յարգանքով գործի:

Աւաղ, հեռու, շատ հեռու է կացութիւնը այդպիսի երանելի վիճակին նմանուելուց: Անհասկանալի եւ անհիմն երեւոյթների բերումով անհամաձայնութեան մեծ խրամատ է բացուել վարչապետ-կաթողիկոս եղած յարաբերութիւնների միջեւ, որ որեւէ դրական կամ ցանկալի հետեւանք չի կարող ունենալ: Երկու կողմից իրար հրաժարական պահանջելով անյայտ է, թէ մինչեւ ո՞ր կարող են հասնել, մինչ այդ արդէն գերյոգնած ու տառապած ժողովուրդն է տուժում:

Առանց որեւէ գնահատական տալու չկարողացայ հասկանալ, թէ ի՞նչ պատճառով, ո՞ր հանգամանքի բերումով, թերեւս իր մեծաւորի դրդումով, կամ պահանջով է, որ Տաւուշի թեմի առաջնորդ կղերք յանձնառու է լինում երկրի փրկչի դերը ստանձնել եւ վարչապետի աթոռին բազմելու յաւակնութեամբ ճանապարհ եւ փողոց փակելով անկարգ եւ խճճուած վիճակ ստեղծել, մինչեւ իսկ գիշերել փողոցում՝ վրանների տակ իր համախոհների հետ, անդամալոյծ անելով քաղաքի երթեւեկութիւնը: Այս մանրամասնութիւնները ծանօթ են բոլորին եւ գուցէ համակրողներ եւս կան, բայց խոհեմութեան եւ պարկեշտութեան բացակայութիւնը ստոյգ է: Պիտի խոստովանեմ, որ դա՛ իր կատարեալ իրաւունքն է եւ իշխանափոխութիւն ցանկանալը արգելուած չէ, յանցանք եւ չէ, բայց դրան հասնելու տարբեր խոհեմ օրինական ձեւեր եւ միջոցներ կան որ հեռու են ասելութիւն սերմանելուց եւ բարեկիրթ են, մանաւանդ, որ շարժումը կոչել են սրբազան, բայց իրականում այն պիղծ խաբէութիւն է, քանզի փոխարէն համերաշխութեան ասելութիւն եւ ստոր հայհոյանքներ է տարածում եւ կարծեմ սխալ չէ ասել, որ այս շարժումը ընդդիմութեան վախճանն է: Ծափահարուելու կարող էր արժանանալ որեւէ աւելի լուրջ եւ փորձառու խմբի իշխանափոխութեան ձգտումը յազեցած ստոյգ ծրագրով, բարեկիրթ կեցուածքով, բայց ոչ թէ մի քոչ-սերժական թափափուկների հաւաքածու:

Չէ՞ որ նոյն տրամաբանութեամբ, հնարաւոր է, որ , հասարակութիւնը կամ իշխանութիւնը, նոյն կրօնաւորի, կամ իր վերադասի արդարացուած հրաժարականը պահանջել:

Հասկացողին բարի ողջոյն :

16-6-7 Ռուբէն Յովակիմեան

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԱՅՍՊԷՍ ԱՆՅԱՅ ԻՄ ՈՒՂԻՆ

Ունկնդիրը մնացի հոգւոյս մեղմիկ շշունջին,
Պիղծ աշխարհի աղմուկէն զայն անխանգար պահեցի:

Գուրգուրացի կանթեղին որ բոցարծարծ նշուլեց,
Լուսաւորեց իմ ուղին մեզ-մշուշին ընդմէջէն:

Խղճիս խորանն մաքրեցի ժանգ ու տիղմէն առօրեայ,
Որ ան ցոլար մաքրաջինջ զերթ սրբագին աղօթ'րան:

Շառայլներէն ոսկիի մերկ իտեալին ծնկեցի,
Հոգւոյս խոյանք տուաւ ան, արծուի թելեր պանծալի:

Դիւաններու բանտերէն երկնի անհունն զիս դիւթեց
Եւ ճախրեցի անյոգնում դէպի Լոյսը միշտ անեզր:

Ըմպեցի զայն անյագուրդ, լուսատոչոր, լուսաձիգ,
Շատցաւ ի, շատցաւ իմ հոգին, դարձաւ լոյսին պէս անծիր...

Հայեացքիս դէմ սուրբ Լեռն էր իր բարձունքով երկնամերձ
Որ ուղղորդեց իմ ճամբան խառնաշփոթ մեզին մէջ...

Եւ աղօթքս խորանէս վեր բարձրացաւ Մասիսն ի վեր
Քանզի հոն էր իմ տաճարն վեհատեսիլ, վեհաստեղծ:



Այսպէս անցայ իմ ուղին, հաւատարիմ ես ինձի,
Երբ ժամն հնչէ մեկնումիս, սիրտս հանգիստ պիտ' մեկնիմ:

ԶՐՈՅՑ ԻՆՔՍ ԻՆՁ ՀԵՏ շարքէն:

.....

ՉԸՍԱԾ ԲԱՌՍ

Չըսած բառս մնաց սրտիս,
Հոն թրթռաց մտերմաբար,
Գաղտնամրմունջ աղօթք դարձաւ
Փսփսուքով անոքսալի:
Իմ սեփական գանձս դարձաւ,
Շաղախուեցաւ իմ էութեան,
Ես չուզեցի տալ, յանձնել զայն
Մարդոց թեթեւ ուշադրութեան:
Հոգիիս պէս իմս դարձաւ
Անքակտելի ու անբաժան,
Խորհուրդ խորին մի առեղծուած,
Թէ որ ըսեմ, իմս չէ ալ...

27/5/2024

.....

ՀԱՅԱՍՏԱՆՍ,

Պիտ' ելլես վեր խորխորատեղ,
Սուտ աշխարհի սուտ խօսքերէն,
Խաբեպատիր խոստումներէն,
Ողորմութեան փշրանքներէն...

Պիտի քաղես հին խորանէն
Մեր վանքերուն դեռ կիսաւեր՝
Սէրն ու լոյսը, ոգին, կամքը,
Անպիղծ մնացած խոր հաւատքը...

Կրկին անգամ պիտի ճանչնաս
Հոգիդ Հայկեան, էութիւնդ,
Պիտի կանգնիս վեհապագ,
Զերթ երկնասլաց հայ գմբէթը...

Հոգիիդ մէջ պիտ'որոնես
Փրկութիւնն ու գալիքը,
Պիտի դարբնես հզօր կամքդ
Քու աննկուն ներքին ոյժէդ:

Շատցեր են սուտ աստուածները,
Պիտ' թօթափես դուն կեղծիքը,
Պիտի յառես քու հայեացքդ
Վսեմաշունչ սուրբ Լեռանդ:



Եւ անոր պէս պիտի մատչիս
Մաքրամաքուր լոյսին, յոյսին,
Պիտ' համբուրես երկինքն անհուն,
Հաւատարիմ հայ Աստրծոյն:

Ան է ուղին սահմանեալ քեզ
Դեռ պատմութեան արշալոյսէն,
Հոն պիտ' գտնես փառքի ճամբադ
Յաւերժատրոփ, յաւերժագնայ:
5/6/2021

.....

ԹԷ ԲԱՌԵՐԴ
Թէ բառերդ բխէի՛ն ճշմարտութեան ակունքէն,
Ինչպէս գետը կը հոսի լեռան վճիտ ձիւներէն,
Հոսանքն անոնց չաղարտէ՛ր գորշ տիղմերէն ու ցելխէն,
Վազէ՛ր, վազէ՛ր անարգել բիւրեղաջինջ ու զօրեղ,
Հայելիին մէջ անոր մարդը տեսնէ՛ր ներսիդին
Ու մաքրուէ՛ր անոր պէս առօրեայի տաղտուկէն,
Հաշիւներէն սնամէջ, մանր, փոքրիկ վէճերէն,
Կատարեալին միշտ ձգտէ՛ր, վեհաշունչ այն պատկերի՛ն
Որով օժտեց զայն Աստուած ստեղծումով հրաշագեղ,
Նախաստեղծեան էութեան ցոլքը տեսնէ՛ր անոր մէջ,
Օ՛ այն ատեն բառերդ կը դառնային բանալի,
Միրտէ ի սիրտ ծիածան բիւր գոյներով արեւի,
Ուր կը շողայ արեգակն իր վարսերով հուրհրան,
Միրալոյսով քեզ կ'օժէ միւռոնի պէս սրբագան,
Կը հեռացնէ խաւարը իր մթագնող մեղքերով
Եւ Լոյսն արդար ու բարի կը համբուրէ հոգեթով
Ամբողջ աշխարհն ու մարդիկ, ծառ ու ծաղիկ սիրատենդ,
Կ'արարէ սէր, տիեզերք անդորրաւէտ դրախտի պէս...
27/6/2023

.....

ԹԷԿՈՒԶ
Թէկուզ միայն լոյսը տեսնես,
Լոյսն անսպառ գեղեցկութեան
Ու բարութեան սիրահեղեղ,
Հոգեկան վեհ ազնուութեան...
Թէկուզ միայն ճաշակն առնես
Իմացութեան լոյսին վարար,
Ճանաչումի ճամբէն քալես,
Երկնին լազուր աչքդ յառած...
Թէկուզ շող մը քեզ այցելէ
Տիեզերական հրաշք լոյսէն,
Որքա՛ն, անչա՛փ բախտաւոր ես,



Ո՛վ մարդ էակ, որ ծներ ես...

27/6/2021

.....

ԳԱՐՆԱՆ ՀՐԱՇՔՈՎ

Մոլորուէի՛ կածանին մէջ գարնանային,
Նոյնանայի՛ սիրայորդուն խօլ տարերքին,
Որով աւիշն խուժէ ծառերն կմախացած,
Զանոնք սարսէ նոր աւիւնով մը կենարար..

Հրաշքի նման դալարէի՛ անոնց նման՝
Համբոյրովը վառ արեւին, գարնան սիւքին,
Սաղարթներս պարզէի բա՛ց ու համարձա՛կ
Անհուն երկնին, թռչուններուն, մարդ էակին...

Օրօրուէի օրօ՛ր-շորո՛ր ու նազանքով
Զեփիւտին մեղմ շոյանքին տակ սիրագորով,
Արեգակնե՛ր ծագէին իմ հորիզոնին
Եւ նոր սէրեր բողբոջէին իմ բորբ սրտին:
26/2/2019

.....

ԼՈՒՍԱՎԱՐԱՐ

Հոգիս վարդին նման շքեղ
Թերթի՛կ-թերթի՛կ լոյսին բացաւ
Բաժակն իր ջինջ լուսածարաւ,
Ըմպեց լոյսը արփիահեւ...
Թերթի՛կ-թերթի՛կ լոյսն ամբարեց
Որ մութն այնտեղ տեղ չգտներ,
Լոյսով ցնծուն երգեր հիւսեց,
Լոյսով արբշիռ կեանքը օրհնեց...
Մութն ու մեզը դուք մի՛ փնտոէք
Անոր լուսէ բաժակին մէջ,
Հոգիս լոյսը պիտ' օրհներգէ,
Ան լոկ լոյսով է վարարեր:
22/4/2019

.....

ՄԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ

Մաքուր սիրտով անապական պիտ' մտնէք հի՛ն աշխարհը,
Զեր նոր շունչով պիտ' նորոգէք իր ժանգոտած երեսը:

Տոտի՛կ-տոտի՛կ պիտի քալէք արահետէն կոխկոտուած,
Բայց ձեր հետքը պիտի թողուք, յետոյ անցնիք ու երթաք:

Երանի թէ ձեր հետքերուն ծի՛լ ու ծաղի՛կ բուսնին յար,



Գեղեցկացնէ՛ն մեր աշխարհը ձեր գործերով սիրովաւ:

Ո՛ր ալ երթաք, ապաւինէք լոկ ձեր ոյժին սեփական,
Զայն ջրդեղէք կամքով արի, ձեր կորովով կռանիթեայ:

Նոր շունչ տուէք հայոց լեզուի՛ն, հայրենիքի՛ն սրբազան,
Ան ձեր ՏՈՒՆՆ է պապենական, ձեր օրրանը հնամեայ:

Օտար հողը ՏՈՒՆ չի դառնար, նոյնիսկ պալատ թէ ըլլայ,
Խորթ մօր նման ան չի կրնար դառնալ մի մայր հարազատ:

Անոր տաքուկ գրկին մէջ է որ դուք կրնաք ծաղկիլ վառ,
Անուշահամ պտուղներով մի ծառ դառնալ հաստարմատ:

Թէ հողմերը ձեզ քշեն դէպ՝ օտար ու խորթ երկինքներ,
Ձեր հայեացքը միշտ սեւեռէք Արարատին ձիւնագեղ:

Լոյսեր քաղէք, յոյսեր քաղէք մեր պատմութեան ՎԿԱՅԷՆ,
Ու երդուրնցէք զայն ՏՈՒՆ բերել պանդխտութեան աքսորէն:

Ի՛նչ ալ ըլլայ ձեր ընթացքը, յոյսի հիւլէ մ'աւելցուցէք,
Կա՛թ-կա՛թ ճաճանչ ցաթեցուցէք ձեր սիրտերէն ու միտքէն:

Ճաճանչները շատնա՛ն, շատնա՛ն, դառնան լուսոյ արեգակ,
Տեղ չթողուն մութ խաւարին, աշխարհ դառնայ արեւ՝վառ:
2/6/2024

.....

ԻՄԱՍՏՈՒԹԻԻՆ

Գուցէ վերջին պահուն միայն բացուի շղարշն իմ աչքերուն
Ու ես տեսնեմ առեղծուածը այս աշխարհին խորախորհուրդ:

Մարդը տեսնեմ մերկ ու անզարդ, հոգին անոր թաքնաթաքուր
Ու աւաղեմ բիւր օրերս որոնք անցան, գացին ի գուր:

Հիւլէ մը լոյս իմաստութեան ես գոհեցի փառք ու հաճոյք,
Աւա՛ղ միայն ճաշակեցի ումպ մը թասէն անոր գինոյն:

Յետոյ միշտ ալ պատրանքըն էր իմացութեան խորհրդալոյս,
Որ խոյս կու տար միրաժի պէս համակ կեանքիս ճամբաներուն:

Շիթ մը թասեղ, իմաստութի՛ւն, զիս արբեցուց, լոյս կաթեցուց
Ճաճանչներով կենսավարար, բայց մընացի միշտ անյագուրդ:

Քու կանթեղէդ բուռ մը ճրագ ափս այրեց կսկծագին,
Բայց ես համը առի անոր լուսաճառագ արեգակին:

Գուցէ փնտռել-չգտնելն էր գաղտնիքը խոր իր հմայքին,
Զայն քայլ առ քայլ նուաճելն էր բարձունքն անոր անհասելի:

Ծիրանի լոյսն հորիզոնիս հիմա յուշէ որ պիտ'գայ շուտ
Իմաստութիւնը երագուած ու պիտ' օձէ զիս տրտմանոյշ:

Թէկուզ ուշ է եւ ուշացած, գայն պիտ' գրկեմ քաղցրահամբոյր,
Իր ծոցին մէջ պիտի ձուլուիմ, ան է կեանքը իմ կեանքերուս:
19/6/2024

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՔԱՐԷ ՎԿԱՆԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԵՐ



Առանձնակի ուշադրութեան արժանի է Հայաստանի նման լեռնային երկիրներուն ժայռի,լեռի եւ նոյնիսկ ուղղակի քարի պաշտամունքը: Ըստ աւանդութեան ,ժողովուրդի կողմէ, քարը եւ ժայռը կը վերագրուի առասպելական ուժ ու խորհուրդ: Կը պատմուի թէ, Հայկ Նահապետ իր մահէն առաջ,իր հետեւորդներուն պատգամած է որ, գեղազարդէն Հայաստանի մէջ տարածուած կոշտ ու կոպիտ քարերը:

Դարեր առաջ Հայերը սկսեր են, քարերը յղկել եւ այդ քարերով կառուցել հրաշալի կառոյցներ, պալատներ,տաճարներ եւ ամրոցներ: Հին ժամանակներուն Հայաստան աշխարհը ամէն տեսակ արշաւանքներուն նշաւակ կը դառնար,կը կողոպտուէր,կը կործանուէր հայոց հրաշակերտ կառոյցները: Հայ ժողովուրդը այս կողոպուտի,թալանումի եւ կործանումի ելքը գտաւ սալաքարերը յղկելով ու գեղազարդարելով:

Քարերէն յուշակոթողներ,արձաններ կերտեցին,գեղազարդեցին սալաքարերը եւ անոնք ձգեցին բաց երկինքին տակ: Թշնամի թալանիչները, այս գեղազարդարուած սալաքարերու դիմաց զարմանքի մէջ մնալով կը շուարէին :

Այսպէս Հայ ժողովուրդը մեծ կառոյցներու առընթեր, ստեղծագործելու իր տաղանդը մարմնատրեց նաեւ ճարտարապետական ու գեղարուեստական ձեւերու մէջ:

Կ'ըսուի որ, խաչքարերը ստեղծուած են 301 թուականին,երբ որ, Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունեցաւ: Խաչքարերը,արշաւանքներու թալանէն ու կողոպուտէն հեռու բռնելու համար, նախ ծառայել են, որպէս տապանաքար,աւելի վերջ տեղադրուէր են սրբավայրերու, գերեզմաններու մէջ եւ նաեւ բլուրներու ու ժայռերու վրայ:

Խաչքարերը կոթող ու յուշարձան են ու կը համարուին սուրբ քարեր եւ այն վայրերը ուրտեղ խաչքար տեղադրուած է կը նկատուին սրբատեղիներ:



Խաչքարը Հայ Միջնադարեան արուեստի ինքնատիպ դրսեւորումներէն մին է: Հայաստան առանձնայատուկ մի երկիր է, ուր տեղ՝, կան աւելի քան 50 000 ձեռատաշ խաչքարեր, որոնցմէ, ոչ մէկը միւսին նման չէ: Գեղազարդարեալ այս քարերը ԽԱԶՔԱԸ կը կոչուին, որովհետեւ անոնց քանդակագարդ երեսի կեղորոնին վրայ նկարուած է «Խաչ» մը , որպէս, Քրիստոնէական հաւատքի խորհուրդանիշ: Իրաքանչիւր խաչքար ունի իր զարդարանքը: Աշխարհի վրայ ոչ մի ազգ չի կայ որ, Աստուծոյ հանդէպ իր հաւատքը այսպիսի ձեւով արտայայտէ:

Խաչքարի ներքեւի մասը փորագրուած է Արեւի նկարով որը, կը խորհուրդանշէ «Յաւերժութիւն»ը, իսկ կեղորոնի խաչի նկարը կը խորհուրդանշէ Յիսուս Քրիստոսի խաչելութիւնը, խաչքարերու շրջեզերքը զարդարուած է զարդերով, խաղողի, ոյկոյզի, նուռի, հասկի, հացի, թռչունի, մարդու եւ կամ տերեւի զարդաքանդակներով որոնք կը խորհուրդանշեն Յիսուսի յարութիւնը: Խաչքարի հակառակ երեսը տափակ է, կամ իր վրայ կը կրէ արձանագրութիւն մը ներկայացնելով կարծես հայ ժողովուրդի պատմութեան բացուած էջ մը: Սալաքարի մը վրայ նկարուած է նոյնիսկ թատերախաղ մը , որուն դէմ կը պայքարէր Քրիստոնէութիւնը:

Ըստ էութեան խաչքարը Հայ ժողովուրդական կեանքի համայնապատկերն է, որ հիացում կը պատճառէ նուրբ զարդարանքներու իր ներդաշնակութեամբ: Խաչքարի քանդակագարդ նկարը իր նուրբութեամբ կը նմանի նրբահիւս ասեղնագործեալ ժանեակի մը:

Միջնադարեան շրջանի հայկական խաչքարերը ունցած են , բազմատեսակ բովանդակութիւն: Կանգնած են տարբեր առիթներով. Օրինակ : Ռազմական, պատմական նշանակալից դէպքերը յաւերժացնելու, եկեղեցիներու, կամուրջներու, աղբիւրներու յիշատակները յիշատակելու եւ ազգային հերոսները ու զոհերը ոգեկոչելու համար, կան նաեւ իրենց նպատակին չհասած սիրահարերու յիշատակին կանգնուած խաչքաչեր: Կան նաեւ «Ամենափրկիչ» կոչուած խաչքարեր, ինչպէս , օրինակ Հաղբասի վանքի մէջ գտնուող 1273 թուակիր նշանաւոր խաչքարը, որուն հեղինակութիւնը կը վերագրուի Վահրամ վարպետի: Այս խաչքարերու վրայ նկարուած են խաչելութեան տեսարաններ:

Ժողովուրդը կը հաւատար որ, այս խաչքարերը օժտուած են եւ հիւանդութիւնները բուժելու յատկութիւնը ունին, հետեւաբար յաճախ հեռու վայրերէ իսկ հիւանդներ , յատկապէս մանուկներ ուխտի կը բերուէին այդ խաչքարերու մօտ բուժելու համար:

Ժողովուրդը խաչքարերը կը նկատէր նաեւ, որպէս բնութեան ուժ եւ չարիքներու դէմ ուժի խորհուրդանիշ:

Կ'ըսուի թէ, Հայաստանի ամենէն հին խաչքարը Աշոտ. Բ. Բագրատունիի կնօջ նուիրուած խաչքարն է, որ կը թուագրուի 879 թուականով ու կը գտնուի Գառնիի հեթանոսական տաճարի տարածքի մէջ:

Ամենէն շատ խաչքարեր կը գտնուին Ջուղայի գերեզմանատան մէջ, աստե՛նօք կային 10 000 խաչքարեր իսկ ներկայիս խաչքարերու թիւը կը հասնի շուրջ 2500 ի: Իսկ Հայաստանի Նորադուզ գիւղին մէջ խաչքարերու թիւը կը հասնի շուրջ 1000 ի, Նորադուզի խաչքարերու «Անտառ»ը իւրայատուկ թանգարան մը կը սեպուի :

Խաչքար կերտող վարպետներու անուններէն քիչեր միայն պահպանուած են, 12 րդ դարու ամենէն նշանաւոր քաչքարի վարպետն է, Միսիթար վարպետը:

13-14րդ դարերուն խաչքարի նշանաւոր վարպետն է Մոմիկ վարպետը:

Իսկ, 1291 թուականին Գոշավանքի մէջ շինուած բազմաթիւ խաչքարերուն հեղինակը Պօղոս վարպետն է:

Ամենէն շատ խաչքար շինող վարպետը Քիրամ վարպետն է որ, 1591-1610 թուականներու միջեւ շինած է շուրջ 300 խաչքարեր:



Խաչքարերը հայրենասիրութեան , հայ ինքնտիպ մշակոյթի,հայ գեղարուեստի բարձր ճաշակի արտայայտութեան միջոցներէն մին է եւ ունի համաշխարահային արուեստի գանձարանի մէջ իր արժանի տեղը:

Տօքթ.Սարգիս Ատամ.

Օգտագործուած Ակեր:

Հ.Լ. Պետրոսեան -Խաչքար-2008

Լ.Ազարեան-Հայկական Խարքարեր-1973

Խաչքարերու Ծագման Շուրջ-Վարդուհի Վարդազարյան-27 Մայիս 2011.Երեւան Հայկական Հանրագիտարան-

ԿԸ ՔԱԼԵՍ...

Գեորգ Պետիկեան



Այդ երեկոն, տարիներու հեռաւորութենէն ե՛ւ կարօտով, ե՛ւ լուսաւոր զգացումով կը յիշեմ: Որոշած էի ծննդավայրիս փողոցներով անցնիլ: Քալել: Միայն քալել:

Ամիսը արդէն կիսուած էր: Պարզ գիշեր էր, եւ դուրսը ծոյլ քամի մը կար: Անձրելը դարձեալ նոյն հողն էր որ կը ծեծէր: Շաբաթէ մը ի վեր ժամեր շարունակ երկինքը թաց տաղտուկ մը ձգած էր: Անօրինակ տաղտուկ մը կար նաեւ մտքիս մէջ:

Ու...արդէն սկսած եմ քալել: Կը քալեմ եզակի, սակայն հաստատ ինքնագոհութեամբ մը, թէեւ հոգիս պաշարուած էր երկիւղով, եւ կսկիծը կը հոսէր սրտէս: Նոյնիսկ ներքին ձայներ սկսան ինձի անհանդարտ, վշտալի ու խռովալի սրտի նման բաներ մը յուշել: Բայց կը քալեմ: Թերեւս շատերու համար անիմաստ եւ ապարդիւն, սակայն ինձի համար հաճելի: Որովհետեւ, հետս են երագներս, անհամար յուշերս ու հին ու նոր սէրերս, որոնք իրենց տերերը կը փնտռեն:

Կը քալեմ միաժամանակ փնտռելով այն բոլոր դէմքերը, որոնք ճակատագրի հարուածներէն ոչնչացած էին: Նոյնիսկ անուններ եւ դէմքեր, որոնք օր մը ինքնակամ գաղթեցին: Դէմքեր, որոնք պահուեցան ճակատագրին քմահաճ ծիծաղներուն տակ: Ու յամառօրէն կը քալեմ փնտռելու համար մեր տունը, մեր թաղերը, նոյնիսկ թաղիս կատուները, խանութներու եւ տուններու լոյսերը, գիշերային պահակը:

Կը քալեմ փնտռելու համար մեր փողոցի ծառերը, որոնք տերեւներով ծածկուած կ'ըլլային: Կը փնտռեմ տերեւները կեանքի, որոնք կ'իյնային ոտքերուս առաջ:

Կը քալեմ փնտռելու համար եկեղեցոյս խաչը, եւ մզկիթէն արձագանգող աղօթքը, թաղիս ու փողոցներու մէջ պտտող փոքրերուն կանչը, տուններէն ներս օրօրոցները ու սիրային փսփուտքները: Այս բոլորին հետ կ'ուզեմ հաղորդակցիլ իրենց ինձի ժառանգած անցեալին հետ:

Ու յանկարծ կը զգամ որ դարձեալ փոխան բառերու, լռութեամբ կը խօսիմ ու անհամբեր եւ հետաքրքիր շուրջիններուս կը հարցնեմ, թէ ո՞ւր են այն թաղերը, փողոցներն ու



հրապարակները, որոնք նշան կուտերուն նման կը վխտային մարդոցմով, վաճառողներով, մսավաճառներով, ձկնավաճառներով, դպրոցականներով: Ու ամէն քայլափոխի սիրտս փլուզումներու ահն էր որ կը զգար: Անդադար կարօտ մը, որ կոկորդո կը սեղմէ ու ներքնապէս կը հիւծէ մարմինդ:

Կը քալեմ, իբրեւ երկրորդ հայրենիքի զաւակ, իբրեւ հայ մարդ այս ամբողջութեան մէջ, խաղաղ, հաշտ եւ նոյնքան ալ անհաշտ: Բարդ զգացում եւ ինքնածին՝ զգացական պոռթկում: Ու հիմա կը տեսնեմ.- ատելութիւն կայ, ցանուած է ամէն տեղ: Ու վախս կը մնայ իր տեղը:

Է՛հ, կար ժամանակ, որ աղուոր անկեղծութեամբ ու պարզութեամբ մեր կեանքը կ'արժեւորէինք: Իսկամ դրացիին հետ հաց կը կիսէինք հանդարտօրէն ու հաշտ, մեր ուրոյն եւ սակայն պատմական մտածողութեամբ: Մովորութեան ուժով, եւ միշտ հաւատք ընծայելով, թէ հինը, եթէ նոյնիսկ դառնութիւն ունի, այդ մէկն ալ հաճելի է: Ու այս մէկը մեզի անսահման ուրախութիւն կը բերէր: Հոգի կը դնէր մեր երգերուն մէջ, եւ շունչ կու տար մեր առօրեային:

Իսկ հիմա, ա՛յս վայրկեանիս, քալելու այս պահուս, երբ խոր ցնցումը ներսս է ենթագիտակցութեանս մէջ, կը տեսնեմ ատելութեան ծուխը, որ կը կուրցնէ աչքերս: Կը փակեմ աչքերս ու կը տեսնեմ որ Աստուած ինքն ալ իր աչքերը փակած է այդ ծուխէն, աշխարհի մարդոց ամօթէն: Որովհետեւ, յանկարծ խաղաղութիւն, ամօթխածութիւն, արդարութիւն, սուտ դարձած են:

Յուսախաբ ու տիրութեամբ կը մտածեմ՝ միաժամանակ մեղքի զգացումը ապրելով: Մակայն ի տես այս իրավիճակներուն, մէջս նահանջող կամքը, զարմանալիօրէն ներքին հաշտութիւն մը կը բերէ:

Կ'ըսեն, որ յուսահատութիւնը երբեմն այսպէս տիրաբար դուռը կը բանայ, որ նոյնիսկ անկարելին յանկարծ կը թուի ըլլալ միակ նախապատուելին: Իրաւ էին:

Կը զգայի հեւքոտ կեանքի տառապանքը հայրենակիցներուս, որ կաթիլ-կաթիլ կուտակուելով, ժամերուս ջերմութիւնը կը գողնային:

Բայց կ'ուզեմ կրկնել, հոն, այդ քաղաքիս մայրերուն վրայ, տեսանելի է իր անցեալը: Հայկականութիւն բուրոդ: Յաւերժական պատմումով, ներդաշնակ ու խոր: Տակաւին՝ իր մօտիկ անցեալին մէջ միշտ ժպիտ կար, արցունքէն աւելի, եւ ուրախութիւն՝ վիշտէն:

Հո՛ն նուիրեալներու սերունդ մը կար, օրինակելի ու նոյնքան ալ պատմական: Հոն կ'իշխէր հայ աւանդոյթը, որ կը կառավարէր հայ կեանքը, եւ կը սահմանէր մեր բոլորին մտածումները:

Մէկ խօսքով պարզութիւն կար մեր այդ ապրած կեանքին մէջ: Մեզի համար երանելի ու անկրկնելի աշխարհ մը:

Անոր համար աշխոյժ եւ երջանիկ էինք:

<http://www.kantsasar.com/news/50769-2/>

ՊՐԻՍՄԱԿԷՍ

ԳԻՐՔԻ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Մարուշ Երամեան



Գիրքի ակումբներու մասին վաղուց եւ յաճախ ամսասանքով կարդացեր եմ օտար հանդէսներու մէջ եւ զարմացեր, թէ այսքան պարզ բան մը ինչո՞ւ մենք եւս չենք ունեցած, չունինք:

Գիրքի ակումբներուն անդամները հերթական դրութեամբ՝ շաբաթը մէկ կամ երկու շաբաթը մէկ անգամ, ըստ անդամներուն փափաքին, կը հաւաքուին, եւ նախապէս որոշուած գիրքի մը որոշուած բաժինը կարդացած ըլլալով, կը քննարկեն զայն, կամ կարծիքներու փոխանակում կ'ունենան: Այսպիսով անոնք ձեռով մը կը ստիպուին խորունկ կերպով ընթերցում կատարել, մտածել իրենց կարդացածին մասին, եւ արտայայտել իրենց մտածումները: Նաեւ տարբեր ոճերու գիրքերու ծանօթանալու շատ լաւ միջոց է, որովհետեւ մասնակիցներէն իւրաքանչիւրը հերթով գիրք մը կ'առաջարկէ ընթերցումի համար, հետեւաբար մասնակիցը ինքզինք կը կոփէ նաեւ իր նախընտրութիւններէն դուրս գիրքերու ծանօթանալով:

Այսքանը շատ կարեւոր է կը կարծեմ մանաւանդ դպրոցական վերի դասարաններուն՝ միջնակարգի վերջին եւ երկրորդականի երեք դասարաններուն համար:

Երբ սկսայ Հալէպի Համազգայինի Հայագիտական ամալիոնէն ներս սփիւռքահայ եւ օտար գրականութիւններ դասաւանդել, անդրադարձայ որ ուսանողները՝ բոլորն ալ երկրորդականը, երբեմն նոյնիսկ համալսարան աւարտած, չէին գիտեր մեր՝ արեւմտահայ թէ սփիւռքահայ նոր ժամանակներու գրականութեան կարեւոր գործերը: Թերեւս քիչ մը զաղափար ունեցած ըլլային Հայաստանի գրականութեան մասին:

Բայց ինչպէ՞ս գիտնային, երբ իրենց ամբողջ ժամանակը տրամադրուած էր «սորվելու». կը չակերտեմ «սորվիլ» բայը, որովհետեւ մեր՝ Միջին Արեւելքի գրեթէ բոլոր երկիրներուն կրթական ծրագիրը կը ստիպէ գոց սորվիլ գրեթէ բոլոր նիւթերը, տղոց միտքը խճողելով, եւ դպրոցի հաճոյքը քամել-սպառելով: Ո՛չ մէկ հաճոյք ունին այդ տղաքը դպրոցներէն ներս, մինչդէռ սորվիլը կեանքի գեղեցիկ հաճոյքներէն մէկը պէտք է ըլլայ:

Այս մասին մտածելով էր, որ ծագեցաւ գիրքի ակումբ մը սկսելու գաղափարը միտքիս մէջ: Ուսանողներուն խթանեցի, որ հայագիտականէն դուրս իրենց ընկերուհիները եւս հրաւիրեն մասնակցելու այս ակումբին:

Որքան կը յիշեմ, սկիզբը Շահնուրի «Նահանջը Առանց Երգի» վեպն էր մեր կարդացածը:



Այնքան տպաւորուած էին ուսանողները ոչ միայն Շահնուրի վէպով, այլ նաեւ այն իրողութեամբ, որ ընթերցումը կրնայ հաճոյք պատճառել ... Որովհետեւ մինչ այդ ինչ որ կարդացեր էին դաս էր, կարդացեր էին գոց սորվելու համար միայն:

Յետոյ կարդացինք Կոստան Զարեանի «Նաւը Լերան Վրայ» հատորը, Լեւոն Շանթի «Հոգիները Ծարաւի» հոգեբանական վէպը, Վահէ Օշականի «Թակարդին Շուրջ» հատորէն «Օծումը» երկար պատմուածքը, հալէպահայ վիպագիր Գեորգ Իփիճեանի «Մանտրասեղը» վէպը...

Յետոյ հաւանաբար «Վերջին Բաժակը» կարդացինք, որ Շահնուրի առոյգ լեզուէն ետք քիչ մը «շատ հին» երեւցեր էր իրենց:

Իսկ Եսայեանէն ետք Վահէ Պերպերեանի երկրորդ՝ «Յանուն Հօր եւ Որդւոյ» վէպը կարդալը կարծեմ քիչ մը

յանդգնութիւն էր, որովհետեւ ոճերու միջեւ եղած հաստումը բաւական ցնցիչ էր ուսանողներուն համար:

-Ո՛չ, պիտի չուզէի որ մանչս կարդար այս վէպը,- ըսաւ գիրքի ակումբի անդամներէն մէկը, որուն մանչուկը տակաւին երկու տարեկան էր:

Ոճական այս տարբերութիւնները մթնոլորտը առոյգ եւ հետաքրքրութիւնը սուր կը պահէին: Կարծեմ Հալէպի ամերիկեան դպրոցը՝ ICARDA-ն1 եւս ունէր նման ակումբ, նոյնիսկ մանկապարտէզին համար. փոքրիկները ունէին իրենց պզտիկ սրահը, գետնին դրուած հանգստաւէտ բազմոցիկներով, ուր նստած մտիկ կ'ընէին ուսուցչուհիին կարդացած հեքիաթները կամ մանկական պատմութիւնները:

Այլ ակումբ մըն ալ կայ է մինչեւ այսօր կը գործէ _ որքան գիտեմ _ Լիբանանի հայկական գիւղաւանին՝ Այնճարի մէջ. հոն սակայն ընդհանրապէս անգլերէն գիրքեր կը կարդան, երբեմն միայն այդ ընթերցումները նաեւ հայերէն գիրքերով կ'ետադրելով:

Գիրքի ակումբներուն երեւոյթը այնքան տարածուած էր անցեալ դարու վերջերուն, որ ամերիկեան ֆիլմերուն մէջ յաճախ հեզնանքով կը ներկայացուէին անոնք եւ քմծիծաղի առարկայ կը դառնային հոն յաճախող երիտասարդները:

Այս հեզնանքն ու քմծիծա՞ղն են արդեօք, որ պատճառ դարձան այս ակումբներուն շիջումին, չեմ գիտեր:

Միսալ է սակայն ենթադրութիւնս, որովհետեւ վիճակագրական նոր տուեալներու համաձայն, ԱՄՆ-ի տարածքին 2015 թուականին հինգ միլիոն ամերիկացիներ մասնակցեր են գիրքի ակումբներու: «Մպասելի է, _ կ'ըսէ նոյն աղբիւրը,- որ 2024-ին անոնց թիւը աւելցած ըլլայ»: Այդ ակումբները նոյնիսկ իրենց «մասնագիտութիւնը» ունին, ինչպէս օրինակ ոճիրի գրականութեան ակումբներ, պատմական վէպերու ակումբներ, հոգեբանական վէպերու ակումբներ եւ այլն ...

Գիրքի ակումբներուն սկզբնաւորութիւնը կ'երթայ մինչեւ ... 1634, երբ Անն Հաչինսըն անունով կին մը, դէպի Ամերիկա գացող նաւու մը վրայ կը կազմակերպէ կիներու հանդիպումներ, Սուրբ Գիրքի ուսումնասիրութեան եւ կարգ մը քարոզներ քննարկելու համար, շաբաթական դրութեամբ: Պէտք է նշել, որ քարոզները ժամանակին լայն տարածում գտած գրական ժանր էին:

18-րդ դարուն, Անգլիոյ մէջ եղած են գիրքի աւելի քան հազար ակումբներ, իսկ ֆրանսայի մէջ ազնուական դասակարգը նշանաւոր էր իր գրական, մշակութային, քաղաքական թէ փիլիսոփայական «սալոն»-ներով, ընդհանրապէս նշանաւոր տիկնոջ մը կողմէ կազմակերպուած, իր տան կամ պալատին մէջ:

Ամերիկայի մէջ նշանաւոր եղած է Բենիամին Ֆրանքլինի կազմակերպած Junto club-ը, որ շատ պաշտօնական եղած է՝ մասնակիցները պէտք է կարգ մը հարցումներու պատասխանէին եւ որոշ նիւթերու մասին էսսէներ գրէին:



Ամերիկայի մէջ 17-րդ դարու կիներու գիրքի ակումբները միջոց եղած են, որ անոնք իմացութիւն ամբարեն եւ կարգ մը նիւթեր սորվին, երբ տակաւին անոնց դպրոց կամ համալսարան յաճախելը արգիւտած էր: Նոյնիսկ հարցադրումի ենթարկած են իրենց կեանքին նպատակը, Մարկարէթ Տուլլըրի կազմակերպած հանդիպումներուն, եւ փորձած են պատասխաններ գտնել «Ինչո՞ւ ծնած ենք» եւ «Ի՞նչ կրնանք ընել» եւրօնական հարցումներուն:

Այլ ակումբ մը՝ Sorosis ծնունդ առեր է, երբ Չարլզ Տիքընզի դասախօսութիւններէն մէկուն կիներուն մուտքը արգիւտէր են:

Ճիշդ է որ նախորդ դարերու հարուստ կիները թէ՛ ժամանակը եւ թէ՛ միջոցները ունեին նման ակումբներ կազմակերպելու կամ անոնց մասնակցելու, սակայն աշխատող կիները եւս, իրենց աշխատանքի ընթացքին կը գրուցէին «Բնագիտութի՞ւն թէ արուեստ», «Սոկրատ արդարացի՞ էր իր անձնասպանութեան մէջ» եւ նման այլ նիւթերու շուրջ:

Ընկերային լուսանցքային խումբերու համար նման ակումբները ո՛չ միայն հաճելի ժամանցի վայրեր եղած են, այլ նաեւ ինքնազարգացումի միջոց եւ իրենց կենսավիճակը բարեփոխելու ծրագիրներ մտածել-ստեղծելու առիթներ:

Եւ ոչ միայն. նման խումբեր կ'օգնեն լաւ ընթերցող դառնալու, նոր յարաբերութիւններ ստեղծելու, նիւթ մը կամ երեւոյթ մը տարբեր դիտանկիւններէ դիտելու, բայց մանաւանդ գրոյցի եւ բանավեճի ճիշդ սովորութիւններ մշակելու:

Այսօր, համացանային BookTok եւ Bookstagram ծրագիրներուն հետ նոյնիսկ շատ աւելի դիրքին է, տան հանգիստ պայմաններուն մէջ մասնակցիլ գիրքի ակումբներու:

Նման ակումբներ կարելի է կազմակերպել անձնական միջոցներով, կամ մասնակցիլ հանրային գրադարանի մը գիրքի ակումբին. այս վերջիններուն մէջ տղամարդոց թիւը բաւական մեծ է, մասնակիցներուն կեսը կազմելու չափ, մինչ անձնական ակումբներու մէջ անոնց տոկոսը միայն 20% է:

Դիմատետրին վրայ կարելի է գտնել հայկական «Գրքի Բում» եւ «Գրքամուլների Ակումբ» խումբերը, ուր «գիրքի ակումբ», այսինքն մէկ գիրքի ընթերցում-քննարկում-վերլուծում-ի հասկացութիւնը չկայ դժբախտաբար. եղածը Դիմատետրին յատուկ ոճով նոր գիրքերու ներկայացում է՝ փոքրիկ, արագ ամփոփումով, պատկերներով, գիրքերէ առնուած խօսքերով:


Իսկ Հայաստանի եւ Արցախի մէջ 2008 թուականէն կը նշուի «Գիրք Նուիրելու Օր», Յովհաննէս Թումանեանի ծննդեան օրը՝ 19 Փետրուարին, Հայաստանի Գրողներու Միութեան նախկին (մահացած) նախագահ Լեւոն Անանեանի նախաձեռնութեամբ եւ պետութեան որոշումով հաստատուած:

1- InternAtional Center for Agricultural Research in Dry Areas.

<http://www.kantsasar.com/news/50855-2/>

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ ՀԱՅ ՄԱՐԴ ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ

Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Գրող, հրապարակագիր եւ հասարակական գործիչ, Շ. Բ. Ը. Միութեան անդամ, որ գործունեայ էր եւ մասնակցած ընդհանուր ժողովներուն՝ Թորոս Խաչերի Թորանեան ծնած է Հալէպ, Սուրիա, 1928-ի Փետրուար 29-ին եւ մահացած Երեւան, 2021-ին:

Անոր ծնողքը՝ Խաչերը եւ Վարդուհին, ծնած են Կիլիկիոյ Այնթապ քաղաքի Ճիպին աւանը: Հայրը աւարտած է Ճիպինի Կիլիկեան վարժարանի նախակրթարանը եւ սորված է լաւ հայերէն, իսկ մայրը լաւ հայերէն չէ գիտցած, 1894-1896 տարիներու Համիտեան ջարդերուն կորսնցուցած ըլլալով իր ծնողքը, որդեգրուած է քիւրտ ընտանիքի մը կողմէ: Խաչեր ամուսնանալով Վարդուհիին հետ, զայն ետ հայութեան վերադարձուցած է:

Թորոս Թորանեանի հայրը կը մահանայ երբ ինք երկու տարեկան եղած է, այդ պատճառով ընտանիքին մէջ թրքերէն կը խօսին: Մինչեւ հինգ

տարեկան թրքերէն խօսած է ու հայերէնը սորված է մանկապարտէզը: Ան յաճախած է Հալէպի Կիւլպէնկեան վարժարանը եւ ապա մեկնելով Երեւան բժշկութիւն ուսանած ու վկայուած:

Թորոս Թորանեանի ստեղծագործութիւնները եղած են բազմատեսակ ու բազմաթիւ: Ան իրագործած է երկու հարիւրէ աւելի հեղինակային թէ այլ գիրքերու հրատարակութիւնը: Անոր հեղինակած, խմբագրած ու հրատարակած գիրքերը կ'ընդգրկեն գրական, պատմական, ազգային, հայրենասիրական, ընկերային եւ այլ ոլորտներ: Ունի նաեւ բանաստեղծութիւններ:

Թորոս Թորանեանի գործերուն մասին շատ գրուած ըլլալով, այստեղ պիտի ներկայացնենք իր այն գիրքերը, որոնց նիւթը թուրքերու եւ Թուրքիոյ հետ առնչութիւն ունին, նաեւ իր կատարած արաբերէն հրատարակութիւնները: Անոնք քաղուած են իր «Իմ Հրատարակչական Ողիսականը», «Գարուն» հրատարակչութիւն, Երեւան, 2000» գիրքէն (էջ 17, այսուհետ փակագիծերու մէջ եղած էջանշումները այս գիրքէն են):

Ա.- «Կարօտի ճամբաներով», արձակ, Հալէպ, տպարան «Ալ Շարք», 210 էջ, կողք՝ Յակոբ Միքայէլեանի: Այս գիրքը պատում մըն է դէպի Վան ուղեւորութեան, կարօտով լեցուն կորսուած հայրենի հողերու եւ անցեալի յուշերով: Գիրքին ներածականին մէջ հեղինակը կ'ըսէ. «Երկիրը Հայաստանն է: Այսինքն Վանն է, Մասունը, Մուշը: Մ. Կարապետն է, Նեմրութը: Մազնիս է երկիրը: Վա՛յ այն հայուն, որ առանց կարօտի կ'ապրի: Վա՛յ այն հայուն, որ թափառումի ճամբաներուն վրայ կողոպտուած է կարօտի զգացումէն: Եթէ այդպէս է, եղածը կողոպուտ չէ, այլ՝ սպանութիւն: Մեզ Վանին կապողը կարօտն է: Երեւանին կապողը կարօտն է: Հայուն կարօտէն ծնաւ այսօրուան Հայաստանը... Թող բոցավառուի վաղուան Հայաստանի կրակը բոլոր, բոլոր հայերու հոգիներէն ներս, Արարատեան դաշտէն մինչեւ Ափրիկէի խորերը...» (էջ 17-18):

Բ.- «Թրքական Համաթուրանականութիւնը Վարագոյրով Չի Ծածկուիր», Պէյրութ, 1990, տպարան «Թեքնոփրէս», 160 էջ: Թորոս Թորանեան կ'ըսէ թէ այս գիրքին աշխատութեան



համար կարդացած է եօթանասուն գիրք, չորս լեզուներով՝ հայերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ պուլկարերէն: Գործին նպատակն է ցոյց տալ թուրքին չարիքը «ոչ միայն հայ ժողովուրդին նկատմամբ, այլ նաեւ թուրքիան եզերող երկիրներու ժողովուրդներուն նկատմամբ»։ Սուրիոյ արաբ ժողովուրդին, Իրաքի արաբ ժողովուրդին, իր երկրի սահմաններուն մէջ ապրող քիւրտ ժողովուրդին, յոյն ժողովուրդին, պուլկար ժողովուրդին, նախկին Եուկոսլաւիոյ ժողովուրդներուն եւ տակաւին այլոց» (էջ 40): Գիրքը հրատարակուած է Ֆրանսայի Նիս քաղաքի «Ռուբէն Սեւակ» Մշակութային Տունին ծախսերով, Ռուբէն Սեւակի հօրեղբորորդի Յովհաննէս Զիլինկիրեանի նախաձեռնութեամբ: Գ.- «Թուրքը՝ Կարծիքներ», Պէյրութ, 1993, հրատարակութիւն «Զարթօնք» օրաթերթի, Շարուածք՝ «Միփան» հրատարակչատան, կողք՝ Յակոբ Միքայէլեանի, 104 էջ: Գիրքին նպատակն է ցոյց տալ թուրքին իրաւ դիմագիծը: Թորոս Թորանեան կ'ըսէ. «Միայն հայերը չէ որ կը ճանչնան թուրքը: Անոր եաթաղանին սրութիւնը իրենց վիզերուն վրայ զգացած են ե՛ւ յոյնը, ե՛ւ վրացին, ե՛ւ պուլկարը, ե՛ւ եուկոսլաւը, ե՛ւ քիւրտը, ե՛ւ արաբը ու տակաւին այլ ժողովուրդներ: Հայերն են որ թուրքը ամենէն աւելի ճանչցած են, որովհետեւ ան հայերը զինու ուժով դուրս հանած է հայոց հազարամեայ հողերէն» (էջ 50-51):

Դ.- «Հայկական Հարցը – Երկու Սօտեցում», Հալէպ, 1994, տպարան «Կիլիկիա», կողք՝ Յակոբ Միքայէլեանի, 78 էջ: Թորոս Թորանեան երբ Անգլիոյ Մանչեսթըր քաղաքը իր բարեկամին այցելութեան գացած է, հոն ներկայ կը գտնուի Օքսֆորտի մէջ փրոֆ. Թոմսընի մէկ դասախօսութեան, որ Իսրայէլ Օրիի մասին եղած է: Դասախօսութենէն ետք հեղինակն ու բարեկամը կը գրուցեն դասախօսութեան ներկայ եղող անգլիացի պատմաբան Քրիսթօֆըր Ուոքըրի հետ, որուն Թորանեան քանի մը տարի առաջ անձնապէս հրաւեր ուղղած էր դասախօսութեան համար տասը օրով Հալէպ գալու: Զրոյցի ընթացքին Ուոքըր Թորանեանի եւ ընկերոջ կը թելադրէ կարդալ թրքերէն նոր հրատարակութիւն մը հեղինակուած Թաներ Աքչամի կողմէ, «Թուրք Ազգային Ինքնութիւնն Ու Հայկական Հարցը» (Turk Ulusal Kimligi ve Ermeni Sorunu) խորագիրով: Վերոյիշեալ գիրքը կարդալէ ետք Թորոս Թորանեան կը պատրաստէ իր այս գիրքը՝ «Հայկական Հարցը – Երկու Սօտեցում» խորագիրով ու կ'ըսէ. «Սօտեցումներէն առաջինը Թաներ Աքչամինն է, իսկ երկրորդը՝ մեր Յեղասպանութեան ամենէն հմուտ պատմաբանին՝ Վահագն Տատրեանի մօտեցումն է» (էջ 59):

Ե.- «Իսթանպուլահայերը Կը Կանչեն», Պոլիս, 1997, վերլուծում տպաւորութիւն, կողք՝ Վարդան Փաշաճի, կողքի լուսանկար՝ Արա Կիւլերի, գրաշարութիւն «Արաս» հրատարակչութեան, «Մարթ» տպարան, 135 էջ: Ազգային եւ մշակութային երկու շարքուան այցելութիւն Պոլիս, Թորոս Թորանեանի եւ տիկնոջ՝ Արմինէի կողմէ, «Մայեաթ Նովա» երգչախումբի պատասխանատուներու հրաւերով, դասախօսութիւններու շարք մը կարդալու: Թորանեան զոյգը կ'այցելեն պոլսահայ մամուլի խմբագրատուները՝ «Ակօս», «Ժամանակ», «Մարմարա» ինչպէս նաեւ հայկական դպրոցներ՝ Էսայեան, Կեդրոնական: Կ'այցելեն նաեւ հայկական եկեղեցիներ, որոնցմէ՝ Ս. Երրորդութիւն եւ Հայոց Պատրիարքարանը, ինչպէս նաեւ հայկական Սուրբ Փրկիչ հիւանդանոցը: Էսայեան դպրոցին այցելութեան ատեն Թորանեաններու եւ հայ մտաւորականներու միջեւ ազգային ու մշակութային նիւթերու շուրջ զրոյց մը կը ծաւալի: Պոլիս այս այցին մասին ան կը պատրաստէ այս գիրքը, որ «Մայեաթ Նովա» երգչախումբի պատասխանատուներու նախաձեռնութեամբ կը հրատարակուի «Արաս» հրատարակչատունէն: Նոյն այս աշխատութիւնը կը հրատարակուի նաեւ Պէյրութի «Զարթօնք» օրաթերթին մէջ:

Խորագիրը ինքնաբացատրողական հրատարակութիւններ:

Զ.- «Հայերը» - Մարշըլ Լենկի Եւ Քրիսթօֆըր Ուոքըրի Հեղինակութեամբ», թարգմ. անգլերէնէ, Հալէպ, 1978, տպարան «Շարք Լահլուհ», կողք՝ Յ. Միքայէլեանի, 125 էջ (էջ 80):

Է.- Իտա Ալամետտին, «Փափա Քիւնցլեր Եւ Հայերը», Պէյրութ, 1988, տպ. Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, թարգմ. անգլերէնէ (էջ 84):



Ը. «Նոր Այնթապ», Տպ. «Կիլիկիա», Հալէպ, 1998:(էջ 90):

Խորագիրը ինքնաբացատրողական է:

Թ.-Արաբերէն Գիրքեր

ա.- «Միսիթար Հերացի – 12-րդ Դարու Հայ Բժիշկ», ՓորՖ. Արծրուն Կծոյեան, թարգմանիչ՝ Նիզար Խալիլի, Հալէպ, 1972, տպարան «Շարք Լահլուհ», 84 էջ: (էջ 92):

բ.- «Արմինիէ Ֆի Թարիխ Էլ Արապի» - «Հայաստանը Արաբ Պատմութեան Մէջ», Հալէպ, 1972, հեղինակ՝ Էտիպ Մէյիտ, տպարան «Էլ Հատիսէ», տպաքանակ՝ 3000, 316 էջ (էջ 93):

գ.- «Աւետիք Իսկահակեան Միյէ» - «Աւետիք Իսկահակեան – 100», Հալէպ, 1975, հարիւրամեակի հրատարակութիւն, թարգմանիչ՝ Նիզար Խալիլի, հրատարակող, խմբագրող եւ յառաջարան թորոս թորանեանի, կողք՝ Յ. Միքայէլեանի, 166 էջ, արձակ եւ բանաստեղծութիւն (էջ 96):

դ.- «Գիքոր», Յովհաննէս Թումանեան, Հալէպ, 1976, թարգմանիչ՝ Նիզար Խալիլի, հրատարակիչ՝ Թորոս Թորանեան, 32 էջ (էջ 97):

Արաբերէն գիրքերու շարքը կը հասնի 15-ի, որոնց մէջ Չաւէն Տոլապճեանի, Գեորգ Էմինի (թարգմ. Նիզար Խալիլի), Վահան Թէքէեանի (թարգմ. Նազար Նազարեանի), Կոմիտասի, պուլկարացի գրող Վրպան Սթամաթովի «Մակոյկով Դէպի Արարատ» վէպը, Վարդան Այգեկցիի առակները եւ այլ գործեր:

Շարունակելով թորոս թորանեանի օգտաւէտ հրատարակութեանց շարքը՝

Ժ.- «Հայերի Դերը Թուրք Թատրոնի Զարգացման Գործում Ըստ Թրքական Աղբիւրների», Հեղինակ՝ Գառնիկ Խ. Ստեփանեան, Պէյրութ, 1987, կողք՝ Յ. Միքայէլեանի, հրատարակիչ եւ սփիւռքեան հրատարակութեան յառաջարան՝ Թորոս Թորանեանի, վերստուգող՝ Ժիրայր Դանիէլեան, տպ. «Ալթափրէս», Բ. տպագրութիւն, 70 էջ (էջ 138):

ԺԱ.- «Յուշամատեան Մեծ Եղեռնի», Պատրաստեց՝ Գերսամ Ահարոնեան, գործակից՝ Նազարէթ Թոփալեան, Գ. Հրատարակութիւն, Պէյրութ, 1987, տպ. «Թեքնոփրէս», վերահրատարակողներ՝ Արմէն Դարեան, Ժիրայր Դանիէլեան, Թորոս Թորանեան, 1180 էջ (էջ 139):

ԺԲ.- «Թորոս Թորանեան», Նախաձեռնութիւն Իսթանպուլի «Մայեթ Նովա» երգչախումբի, Իսթանպուլ, 1996, ձեւաւորում՝ Մինաս Օֆլազի, լուսանկարներ՝ Սարգիս Պահարօղլու, գրաշարում՝ «Ակօս», տպագրութիւն՝ «Օհան» տպարան, 16 էջ (էջ 181):

Թորոս Թորանեան իր ամբողջ կեանքի ընթացքին տենչած է ապրիլ հայկական հողի վրայ, հայրենիքին մէջ: Ան իր այս փափաքը իրագործած է իր կեանքի վերջին տարիներուն: Հայրենիքի մէջ հայ մտաւորականներն ու հասարակութիւնը անոր 90-ամեակը նշած են մեծ շուքով եւ քանի մը անգամներ: Այսպէս, 2018-ի Մարտ 1-ին անոր 90-ամեակի հանդիսութիւնը տեղի ունեցած է Աւետիք Իսահակեանի պետական գրադարանի սրահը: Երկրորդը տեղի ունեցած է Ուշի գիւղին մէջ 2018-ի Մարտ 3-ին: Երրորդը տեղի ունեցած է Հայաստանի Գրողներու Տան սրահին մէջ նոյն տարուան Մարտ 27-ին: Իր 90-ամեակին առիթով լոյս ընծայած է գրքոյկ մը՝ «Թորոս Թորանեան – 90» խորագիրով, տպարան «Եգեա», Երեւան, 2018, որ կը պարունակէ յօդուածներ անոր մասին: Ներածականին մէջ ան կ'ըսէ. «Հայու մը համար, որ կը շրջէր ողջ աշխարհի մէջ՝ արաբական բոլոր երկիրներու, ողջ Եւրոպայի բոլոր երկիրներուն մէջ, գտնուելով նաեւ Հիւսիսային, Հարաւային Ամերիկաները ու Աւստրալիոյ մէջ եւ ամէն տեղ, ուր հայ բազմութիւններ կային եւ ելոյթներով հանդէս եկած: Ի՞նչն էր նիւթը ելոյթներուս՝ Հայաստանն էր՝ իր նոր հանրապետութիւնով ազատ ու անկախ եւ գողցուած Հայաստանը իր Սասունով, Մուշով, Վանով, Կարինով ու Կիլիկեան Հայաստանով եւ ազատագրուած Լեռնային Արցախով... Եւ այսպէս ամէն տեղ անդրադառնալով կրանիթեայ Հայաստանի բոլոր մեծութիւններուն, ապառաժեայ ծնունդ

մեծութիւններուն, մինչեւ Անդրանիկ ու Կոմիտաս հայ զէնքի ու երգի աստուածներուն» (էջ 4-5):

Թորոս Թորանեան 2012-ին պարգեւատրուած է հայրենի «Մովսէս Խորենացի» մետալով: Ինքնիրեն Մեսրոպ Մաշտոցի բեռնակիրը կոչած Թորոս Թորանեան Հայ մարդուն հայանպաստ գործունէութեան մասին այս հակիրճ ներկայացմամբ, յարգանքի տուրք մատուցած եղանք նուիրեալ Հայուն յիշատակին:
Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ԱՎՆԹԱՐԹՆԵՐ



Մեր ՈՍԿԵՂԵՆԻԿ լեզուն, որ ամէն պահ մտածումիս, զգացումիս, յոյզերուս եւ խռովքներուս լեզու կու տայ: ԲԱՌԵՐՆ անոր, հիւթեղ բառերը, «որոնք որքան հասունցուցին արեւներ», ԲԱՌԵՐ՝ որոնք դարէ դար յղկուելով, քացրացած են, զեղեցկացած, իմաստնացած ու խորացած: ՄԱՅՐԵՆԻՆ հոգեմտաւոր հարստութիւնս է, ա՛յն անկողոպտելին, գոր չեն կրցած բռնագրաւել ոսոխները չարակամ: Իսկ եթէ մենք, մեզմէ ամէն մէկը, չկարենա՞յ ՏԻՐՈՒԹԻՒՆԸ ընել անոր, ըստ արժանտյն, եւ զայն լքէ բախտի քմահաճոյքի, յայնժամ մենք կը դադրինք ՀԱՅ ԱԶԳ ու ՀԱՅ ԵՐԿԻՐ ըլլալէ:

.....

Ուրիշին նկատմամբ ցուցաբերուած որեւէ անարդար, անմարդկային վերաբերմունք զիս նոյնքան կը յուզէ, որքան ինձի հանդէպ կատարուածը...մանաւանդ եթէ տուեալ ենթական կը գտնուի «տկար» դիրքի վրայ, զուրկ է իր ձայնը բարձրաձայնելու հնարաւորութենէն...Պիտի ուզէի ամբողջ հասակով մէկ կանգնիլ անարդարուած ձայնագուրկին կողքին եւ պայքարիլ յանուն անոր կոխկոտուած մարդկային իրաւունքներուն եւ արժանապատուութեան:

.....

Հայրենիքը աւելին է քան աշխարհագրական տարածքը, աւելին է քան նիւթեղէն հողը, աւելին է քան բնակավայրը...: Անիկա ոգեղէն խորհուրդ ունի իր մէջ, մասնիկ մը՝ մեր



նախահայրերու արիւնէն ու արցունքէն, սրբազան աճիւնէն..., մասնիկ մը՝ ոգեկան հրայրքի մեր գանձերէն, դարերու ստեղծագործական երկունքէն, մասնիկ մը՝ մեր դարաւոր աւանդութիւններէն, առաքինութիւններէն: Կրողն է ան մեր պատմութեան շունչին, տառապանքին, մաքառումներուն, խոյանքներուն, երազին ու տեպականին...**ՀԱՅԲԵՆԻՔԸ ԱՊՐՈՂ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ Է, ՍՐԲԱԶԱՆ ՄԱՍՈՒՆՔ, ՅՈՅՍԵՐՈՎ ԵՒ ԼՈՅՍԵՐՈՎ ՕԾՈՒԱԾ ՎԱՅՐ, ԱՐԵԱՆ ԿԱՆՉ...ԱՅՍ ԲՈԼՈՐՆ Է ԱՆ ԵՒ ԴԵՌ ԱԻԵԼԻՆ...ԱՆ ԷԱՊԷՍ ՈԳԵՂԷՆ ՏԱՐԱԾՔ Է, ՀՈՂԵՂԷՆ ԸԼԼԱԼԷ ԱԼ ԱՆԴԻՆ:**

.....

ՀԱԻԱՏԱԼ ՄԱՐԴՈՒՆ, ի՛նչ ալ պատահի, քանզի իւրաքանչիւր մարդ էակին մէջ կա՛յ այն Աստուածային կայծը, զոր տեսնել է պէտք, զոր բռնկեցնել է պէտք, զոր վառել է պէտք...Պիտի փնտռել ու գտնել այն Խորքային ԵՍ-ը, որ կայ թաքնուած առօրեայ բիւր մանրութիւններու ետին, այն ԵՍ-ը որ քողարկուած կը մնայ սին պատրանքներու ու խաբկանքներու, տուայտանքներու ու տագնապներու խորքը եւ կրնայ յանկարծօրէն բոցկլտալ ինքնաճանաչման եւ ճշմարտութեան լոյսով: Մեզմէ իւրաքանչիւրը թերեւս կրնայ մարդ էակին մէջ յայտնաբերել անոր ամէնէն դրական գիծերը, կամ՝ հակառակը...: Մեր վերաբերմունքէն, մեր հայեացքէն ու կեցուածքէն շատ բան է կախեալ:

.....

Կոյր կուսակցամոլութիւնն է որ չի կրնար զանազանել ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԸ՝ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԱՀԷՆ, չի հանդուրժեր լսել անգամ իրենիսէն տարբեր կարծիք ու տեսակէտ, բանավէճի փոխարէն կը սկսի չարախօսել եւ վիրաւորել դիմացինը, կուսակցական ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐՈՎ միայն կրնայ մտածել, կը բացարձականացնէ իր ճշմարտութիւնը եւ կը մերժէ այլոց ճշմարտութիւնն անգամ լսել...եւ, վերջապէս, ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹԵԱՄԲ տարուած չի կրնար ունենալ ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆ:

.....

Ճշմարիտ երջանկութիւնն է, երբ խիղճդ հանդարտ է, երբ դուն քեզի հետ հաշտ ես, երբ ներքին խորքային ԵՍ-իդ ձայնին ես ունկնդիր...քանզի ոչ մէկ արտաքին տպաւորութիւն պիտի կարենար լռեցնել խղճի ձայնդ, եթէ սխալ բան մըն ես ըրած, երբ յանցանք մըն ես գործած: Ահա թէ ինչու շատեր միշտ ալ ապերջանիկ կը զգան իրենք զիրենք, ներքին բան մը կը խռովէ իրենց հանգստութիւնը...քանզի կրնաս ԱՇԽԱՐՀԸ գուցէ ԽԱԲԵԼ, բայց չես կրնար խաբել ներքին ԵՍ-դ, որ Աստուծոյ ներկայութիւնն է մեզմէ իւրաքանչիւրին մէջ եւ կը տանջէ մեզ, երբ սխալ գործենք: ԽՂՃԻ ՊԱՏԻԺԸ ՄԻՇՏ ԿԱՅ, ՈՐՔԱՆ ԱԼ ՓՈՐՁԵՆՔ ԱՆՏԵՍԵԼ ԶԱՅՆ:

.....

Մեծամտութիւնը աւելի շատ վնաս կը հասցնէ ենթակային քան անոր, որուն ուղղուած է ան, քանզի մեծամիտը՝ փքուած ինքն իր գաղափարներով, կը մերժէ վերատեսութեան ենթարկել զանոնք ժամանակ առ ժամանակ, վերլուծել անոնց հիմքը կրկին ու կրկին անգամ եւ տակաւ



կը լճանայ մտքով, սահմանափակելով զայն, դուռը փակ պահելով նոր գաղափարներու, նոր մտածումներու առջեւ...: Խոնարհ ըլլալը՝ միտքով եւ հոգիով, անհրաժեշտ տուեալներ են, նոր բան սորվելու, միտքը բաց պահելու եւ չկաղապարուելու, չքարանալու համար...:

.....

Ազատ խօսքի, բացխօսութեան, թափանցիկութեան ժամանակներ են: Բայց պիտի իմանալ ՄԱՀՄԱՆԸ, ուր ազատ խօսքն ու բացխօսութիւնը կրնան դառնալ բամբասանք ու չարախօսութիւն, թափանցիկութիւնը կրնայ դառնալ գռեհկացում...: Ազատ խօսքը ԷԱՊԷՍ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆ Է, ՃԻՇԴԸ ՃԻՇԴ ՁԵՒՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, պարկեշտօրէն, վայելչօրէն, առանց խճճանքի, առանց վիրաւորանքի: Ազատ խօսքի ՉԱՐԱՇԱՀՈՒԹԻՒՆԸ կը վարկաբեկէ խօսքը եւ ԿԸ ԴԱՌՆԱՅ ՅԵՒԱՐՁԱԿՈՒՄԻ ԳՈՐԾԻՔ: Պիտի չխախտել ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ չգրուած, բայց միշտ առկայ օրէնքներն ու սահմանները:

.....

Ամէն ղեկավարութիւն հարազատօրէն կ'արտացոլայ զայն ծնող հասարակութեան պատկերը...Ինչպիսին է հասարակութիւնը, նոյնպիսին է ղեկավարութիւնը: Մենք՝ հայ հանրութիւնը, ունինք ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ, ազգային-հաւաքական հիմնախնդիրները քննարկելու, թեր ու դէմ կարծիքներ լսելու, փոխանակելու, վիճելու եւ յետոյ ՀԱՍԱՐԱԿԱՅ ՅԱՅՏԱՐԱՐԻ գալու ՄՇԱԿՈՅԹ...: Առանց զգացականութեան, յուզականութեան, առողջ բանականութիւն ի գործ դնելով, ինչ որ մեծապէս պիտի հարստացնէր մեր տեսակետներն ու գաղափարները, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ ձեւաւորելով: Պատասխանը ժխտական է ի դժբախտութիւն մեզ, քանզի ուշագրաւ երեւոյթ է հայ կեանքի մէջ, որ հազիւ թէ մէկը անհամաձայն ըլլայ մեզի հետ կամ տարակարծիք, հակառակորդ կը նկատուի ան, չըսելու համար՝ թշնամի: Նոյն այս մտածելակերպը կայ ղեկավարներուն մօտ՝ բոլոր մակարդակներու վրայ ալ...Ահա այս ԱԽՏՆ է որ մեր տունը կը քանդէ, այլ ԱԽՏԵՐՈՒ հետ միասին:

.....

ԱՊՐԻԼ կեանքը մարմնին բոլոր բջիջներով, մէն մի զգայարանքովը, բանալ հոգիին պատուհանները՝ տիեզերքէն եկող արձագանգներուն, բնութեան կանչին, բաց պահել միտքը՝ կեանքի խորհուրդին առջեւ, որ կայ դաշտերու մէջ վերընձիւղող ամէնէն խոնարհ խոտին, թռչուններու դայլայլին... մինչեւ նորածին մանկան մը ճիչին մէջ...Ընդարձակուիլ, Անհունանալ, չկողիանալ, չսահմանափակուիլ: Ամէն լուսաբացին, նոր շունչ ու կենդանութիւն տալ մարմնի, մտքի եւ հոգիի կեանքին, որ կայ մեզմէ իւրաքանչիւրին մէջ: ՄԱ ՉԷ՞ ԱՊՐԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ:

.....

Բարի արարքը կը բխի սրտէն՝ անհաշիւ եւ ինքնեկ, ինչպէս բոյրն ու թոյրը ծաղկանց, ինչպէս պտուղը ծառին, մեղրը մեղուին... չակնկալեր ան որեւէ փոխհատուցում, եւ անոր մէջ է անոր բուն արժէքը...Մնացեալը առեստուր է եւ փոխադարձ շահի գործարք:

.....

Հիմա աշխարհը կ'ընթանայ երկու հակաբեւեռներու պայքարով...Պայքարի մէկ բեւեռին՝ ազգային սկզբունքով, ազգային գաղափարով եւ արժէքներով ապրող մարդիկ են, պայքարի միւս բեւեռին՝ համաշխարհայնացման եւ համահարթեցման ծառայող վարձկան ոյժերն են (կլոպալիստները), որոնք կը միտին նոր աշխարհակարգ ստեղծել, ուր չկայ ազգութիւն, չկայ ազգային ինքնութիւն, չկան ազգային պատմութիւն ու մշակոյթ, ազգային բարոյական-հոգեւոր արժէքներ...եւ մարդը դարձած է ԱՆԴԷՄ, ԱՆԴԻՄԱԳԻԾ մի փերեզակ, հոս-հոն քշուող աշնան մի տերեւ...ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՅԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆԻ, ՅԱՆՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆԻ, ՅԱՆՈՒՆ ԱԶԳԱՀԱԻԱՔԻ ԵՒ ՀՈՂԱՀԱԻԱՔԻ...եւ ամէն երեւոյթի մէջ, պիտի փնտռենք, պիտի հարցադրենք թէ որո՞ն կը ծառայեն տուեալ երեւոյթի մէջ ներգրաւուած անձինք ու կառոյցներ եւ ըստ այնմ պիտի դիրքաւորուինք, եթէ կը հաւատանք ԱԶԳԱՅԻՆԻ, ՀԱՅԿԱԿԱՆԻ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆԻ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՆՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Կը ստեն դիւրաւ եր'սուն արծաթով,
Կը թքեն ճիշդին, շահի համար սին,
Կը ծախեն խիղճը սիրտով անվրդով
Ու դեռ յաւակնին մարդ ըլլալ պատուով:

.....

Ամէն ինչ ծախու ապրանք է հիմա,
Հոգին ու միտքը, խիղճը մարդկային
Գին ունին, ինչպէս չնչին մի ապրանք,
Շուկաներուն մէջ դիրքի, աթոռի:

.....

Միտու վկայեց բարին ու չարը



Կեղծն ու անկեղծը, իրան ու սուտը
Եւ ամէն անգամ որ խուլ մնացի
Տուժեցի ծանր բայց դաս քաղեցի:

.....

Այսօր մենք կանք, վաղը չկանք,
Հիւր ենք կեանքին, այս աշխարհին,
Գէթ բարութեամբ, սիրով լեցուինք,
Բարի անուն թողունք ետին:

.....

Այնքան միամիտ ու անչար եղայ,
Որ շատեր երբեք զիս չհասկցան,
Կամ ալ կարծեցին թէ տարօրինակ
Խորամանկ մըն եմ բարույս տեսին տակ:

.....

Խառնաշփոթ աշխարհին մէջ,
Ունկն դիր լոկ ներքին ձայնիդ,
Ան թող դառնայ քեզ ուղեկից,
Քեզ ուղեցոյց ամէն քայլիդ:

.....

Չսորվեցանք մենք խօսիլը,
Գգուընտոցն էր՝ վարք ու բարքը,
Օտարին լոկ խոնարհեցանք,
Անարգեցինք միշտ մենք զիրար:

.....

Կեղծ ժպիտը սուտ ծաղիկ է, չունի բոյրը բնականին,
Աչք կը շոյէ, սիրտ չի շարժեր, անթափանց է, մակերեսիկ,
Չստեղծեր ան կամար, կամուրջ հոգիէ հոգի ու սիրտէ սիրտ,
Փրփուրի պէս ան կ'անհետի ալիքներու մակերեսին:

.....

Ճշմարտութեան ծառայ եղայ, անոր միայն սպասարկեցի,
Փշոտ դարձաւ ճանապարհս, բայց հայեացքս յառած ԼՈՅՍԻՆ,
Թեւեր առի ու ճախրեցի ԱԶԱՏՈՒԹԵԱՆ երկինքն ի վեր,
Թէկուզ ոտքս խոցոտեցին բիւր-բիւր խոչեր ու փորձանքներ:

.....

Քինախնդիր քանի՛-քանի՛ սեւ սիրտերու հանդիպեցայ,
Որոնք միշտ ալ որոնեցին սեւ մրուր մը սրտիս բաժ'կին,
Մոռցած լաւը, լուսաւորը, բարին անափ ու անսակարկ,
Յօրինեցին մրուրն իրենց որ չըլլային երախտապարտ:

.....



Ու երբ սրտիս կրակը մարի ժամանակի մոխիրին մէջ,
Ես անթրոցով պիտի խառնեմ մոխիրը դեռ տաք ու հրկէզ
Եւ վստահ եմ պիտի գտնեմ անթեղուած կրակ դեռ բոցակէզ
Ու պիտ' տաքնամ անով գոնէ՝ ձմեռնաշունչ օրերուս մէջ:

.....

Շատ եմ տեսեր գրիչի մարդիկ
Որ ծոմոնին յանուն շահին
Եւ անտեսեն մարդը արդար
Ծախելով խիղճ, գրիչը ազատ...

.....

Որքան ալ դուն ազնիւ ըլլաս, չարը պիտի գոյատեւէ,
Որքան ալ դուն սէր սերմանես, մոլախոտը պիտի ելլէ
Եւ պիտ' փորձէ ցորեն հասկոյ անէացնել, ի չիք դարձնել,
Կեանքն է պայքար մը անդադար ուր բարւոյն Լոյսն պիտի յաղթէ:

.....

Եւ որքան ալ սորվիս, կարդաս ու ճանաչում ամբարես,
Կեա՛նքն է միայն որ դասերով դառնակակիծ սորվեցնէ,
Քեզ կը յուշէ որ դուն ոչինչ, ոչինչ գիտես, տգէտ ես,
Իմաստութիւնն ա՛յս է, կ'ըսէ, որ չփքիս ու մնաս հեզ:

.....

Լոյսը ինչպէ՞ս պիտի թաղես, զայն մթագնես, զայն չտեսնես,
Ան պիտ' շողայ ճաճանչներով որոնք իր իսկ էութիւնն են,
Հրաճառագ ԼՈՅՍ պիտ' սփռէ անկախ քեզմէ եւ բոլորէն,
Դուն պիտ' մնաս մութ քարայրին կոյր կիրքերուդ մէջ շնչահեղձ:

.....

Ազգ իմ, կէսօր եղաւ արդէն, շուտով պիտի իրիկնանայ,
Բայց դուն երբեք չհասունցար, մնացիր նոյն խակ երախան,
Տուն-տունիկի խաղէն չէլար, աշխարհն երբեք դուն չճանչցար,
Բայց ամենէն ահաւորը՝ դուն քեզ անգամ դեռ չճանչցար:

.....

Որքան գովեստ ես շռայլեցի կեանքիս երկար ճանապարհին
Մի կում ջուրին, մի թաս գինւոյն, բարի խօսքին ու ժպիտին,
Միրտս տուի երբ նշոյլ մը սէր-ճառագայթ շողաց վտիտ,
Բայց արեւիս դէմ յանդիման շատ յաճախ կոյր եղան մարդիկ:

.....

Մի՛ յանձնուիր ճակատագրիդ, կռանէ կամքդ եւ պայքարիր,
Հունտը անգամ կը պայքարի որ կարենայ ծլիլ-ծաղկիլ,
Կեանքն է պայքար մը անհատնում մինչ վերջին շունչը մեր կեանքի,
Անով է որ կրնաս աճիլ, յաղթել կեանքի ճախճախուտին:

.....



Հազար կու տաս չեն նկատեր, կ'առնեն-կ'երթան միշտ աննկատ,
Թէ մէկ անգամ զըլանաս տալ, ա՛յդ կը յիշեն, կը նեղանան,
Տարիներով քէն կը պահեն մէկ անգամուան թերացումիդ,
Երեսովդ կու տան, կ'անցնին, կարծես պարտք ես իրենց ընդմիշտ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ